



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material






ԴԱՍԱԳԻՐՔ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄԱԹԵԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԵՐ



ԱՐԴԵԱՄԻ ԵՒ ԾԱԽԻԻՔ

ԳՐԱՎԱՃԱՌ

Ք. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ



1874

Ա. Գ. 4476

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ի ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՑ

ԱԶԳԱԽՆԱՄ ԿԱՅՐԻԿԻ

Տ. Տ. ՄԿԲՏԶԻ

ՄՐՐԱԶԱՆ ԱՐՔԵՂՈՍԿՈՊՈՍԻ



1881

Դ Ա Ս Ս Գ Ի Բ Ք

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆԱՐ ԿՏԵԿԵՐԸՆԻ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

ԿԱՊԻՏԱԿՐՈՒՄ



Սուրբ գրոց պատմութիւնը վեց մաս կը բաժնուի :

Ա. Աշխարհիս ստեղծմանէ ինչուան ջրհեղեղ : 1656 տարի :

Բ. Ջրհեղեղէն ինչուան Աբրահամու կոչումը : 498 ,, . . .

Գ. Աբրահամու կոչումէն ինչուան Իսրայելացւոց Եգիպտոսէ ելնելը : 390 ,, . . .

Դ. Եգիպտոսէ ելնելէն ինչուան Հրէից Թաղաւորութիւնը : 418 ,, . . .

Ե. Թաղաւորութեան սկիզբէն ինչուան Բաբելոնի գերութիւնը : 484 ,, . . .

Զ. Բաբելոնի գերութենէն ինչուան Քրիստոսի գալուստը : 607 ,,



ՄԱՍՆ Ա

ԱՇԽԱՐՀԻՍ ՍՏԵՂԺՄԱՆԷ ԻՆՉՈՒՅՆ ԶՐԿԵՂԵՂ

1

ԱՇԽԱՐՀԻՍ ՍՏԵՂԺՈՒՄԸ

Հ. Ո՛վ ստեղծեց այս աշխարհս :

Պ. Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը իր մէջի բաներովս ոչրնչէ, ու վեց օրուան մէջ նոյնը կարգի դրաւ : Առջի օրն ստեղծեց (լոյսը), երկրորդ օրը՝ երկնից (հաստատութիւնը), երրորդ օրը (ջուրը ցամաքէն) դատեց, եւ հրամայեց երկրին որ տունկեր ու ծառեր յառաջ բերէ, չորրորդ օրն (արեւը, լուսինն ու աստղերը), հինգերորդ օրը (ձկերն ու թռչունները), վեցերորդ օրն ամէն տեսակ (չորքոտանիներն ու սողունները), ամէնէն վերջն ալ (մարդն) ստեղծեց :

Հ. Աստուած մարդն ի՞նչպէս ստեղծեց :

Պ. Աստուած դետնէն հող առաւ եւ անկից ստեղծեց մարմինը, անոր կենդանի հողի

մը տուաւ , անունն ալ Ադամ դրաւ :

Հ . Եւա ի՞նչպէս ստեղծուեցաւ :

Պ . Երբ որ Ադամ դրախտին մէջ կը բընանար , Աստուած անոր մէկ կողմն առաւ , եւ անկէ շինեց կինը . Ադամայ ընկեր ու օգնական տուաւ : Եւ անունը դրաւ Եւա :

Հ . Աստուած աշխարհքս ստեղծելէն ետեւ եօթերորդ օրն ի՞նչ ըրաւ :

Պ . Արարչագործութիւնը դադրեցուց և պատուիրեց որ նոյն օրն հանդիստ ըլլայ ու սուրբ բռնութի :

ԱՒԱՄԱՅ ՄԵՂՔՆ ՈՒ ՊԱՏԻԺԸ

Հ . Աստուած Ադամն ո՞ւր բնակեցուց Եւ ի՞նչ պատուէր տուաւ :

Պ . Աստուած Ադամն իրեն համար պատրաստած գեղեցիկ պարտիզի մը մէջ դրաւ , որ (Բրախտ) կ'ըսուէր . որուն մէջ կգտնուէր ամէն տեսակ պտղատու ծառեր , անոնց մէջ (կենաց ու դիտութեան բարւոյ եւ չարի ծառն ալ)

Աստուած հրաման տուաւ Ադամայ, դըրձիս յ
տին մէջ եղած ամէն ծառերուն պտղէն ու
տելու, միայն բարւոյ եւ չարի դիտութեան
ծառին պտղէն ուտելն արգիլեց, որպէս զի
ասով իրենց Աստուծմէ կախում ունենալը
ցուցնեն :

Հ. Ադամ ու Եւա Աստուծոյ դէմ ի՞նչ
պէս անհնազանդեցան :

Պ. Եւա Աստուծոյ պատուէրը գիտնալով
երբ որ օր մը արգիլուած ծառին քով դացած
էր, սատանան օձի կերպարանքով երեւցաւ
ու զինքը խաբելով ըսաւ : Թէ որ այն ծառին
պտղէն ուտէք Աստուծոյ պէս կ'ըլլաք, բարին ու
չարը կը ճանչնաք : Եւա այս խօսքերէն խա-
բուած, պրտղոյն աղուորութիւնն ալ տեսնե-
լով փրցուց, Ադամայ ալ տուաւ ու մէկտեղ
կերան :

Հ. Ադամ ու Եւա իրենց անհնազան-
դութեան համար ի՞նչ պատիժ ընդունեցան :

Պ. Ադամ ու Եւա արգիլուած պտղէն
ուտելնուն պէս Ա. անմեղութիւննին կորսըն-
ցուցին, աչունին բացուեցաւ, իրենց մարկու-
թիւնը տեսնելով սկսան ամչնալ ու տերեւներով

իրենք զիրենք ծածկեցին : Բ. Եւ ապա տիժ
 առաւ որ ցաւով զաւակ ծնանի իր էրկանն իշխա-
 նութեան տակն ըլլայ : Ադամ ալ պատիժ ըն-
 դունեցաւ , որ ճակատին քրտինքովը իր կերա-
 կութն ճարէ եւ ի վախճանի հող դառնան : Գ.
 Դրախտէն մերժուեցան եւ այսպէս իրենց սե-
 րունդն ալ ամէն նեղութեանց տակ ձգեցին :
 Բայց Աստուած խոստացաւ իրենց զաւկընե-
 րէն Փրկիչ մը խաւրել , որ զիրենք եւ իրենց
 սերունդն այն նեղութիւններէն ազատէ :

Յ

ԿԱՏԵՆ ՌԻ ԱԲԷԼ

Զ. Ադամ ու Եւա դրախտէն մերժուե-
 լէն ետքը ի՞նչ դժբաղդութիւն ունեցան : Ո՞վ
 է Կայէն ու Աբէլ :

Պ. Ադամ ու Եւա դրախտէն մերժուելէն
 ետքը երկու որդի ունեցան , Կայէն ու Աբէլ :
 Կայէն մշակ էր՝ իսկ Աբէլ հովիւ : Երկուքն
 ալ Աստուծոյ պատարագ մատուցին : Աբէլի պա-
 տարադն Աստուծոյ հաճելի եղաւ : Կայէն ա-

տոր վրայ նեղանալով, ու Աստուծոյ խրատ-
 ներէն ալ չզգաստանալով օր մ'առաւ Աբէլը
 դաշտ տարաւ, ու հոն մէկէն զարկաւ ըս-
 պաննեց: Աստուած ըրաւն երեսը զարկաւ
 ու զինքն անիծեց, վրան ալ նշան դրաւ որ
 մէկը զինք չմեռցընէ: Այսպէս կայէն երկայն
 ապրեցաւ, բայց վերջապէս Ղամեք իր թուր
 զինքն սպաննեց, որսի մէջ երէ կարծելով:

Հ. Ադամ ու Եւա ուրիշ որդի ունե-
 ցան. և իրենք ի՞նչպէս մեռան:

Պ. Ադամ Աբելին տեղ ուրիշ որդի մը
 երկիւղած Սեթն ունեցաւ, եւ անկից ետքը
 շատ տարի ալ ապրելով 930 տարուան բարի
 մահուամբ մեռաւ:

4

ՈՐԴԻՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՔ ՄԱՐԳԱՆ

Հ. Որդիք Աստուծոյ որ ոճք են:

Պ. Որդիք Աստուծոյ են Սեթայ դաւ-
 կըներն, որ իրենց հօրը պէս առաքինի ու Աս-
 տուածապաշտ էին:

Հ. Արդիք Աստուծոյ ըսուածներուն մէջէն
երեւելիներն ո՞րոնք են :

Պ. Ա. Ենովք՝ որ 365 տարի ապրեցաւ :
եւ Աստուծոյ շատ հաճոյ ըլլալուն՝ ողջ աշխարհ
հէս վերացաւ : Բ. Մաթուսաղա՝ որ 969 տա-
րի ապրեցաւ, ասկից աւելի երկայն ապրող
մարդ չեղաւ աշխարհիս վրայ : Գ. Նոյ՝ որ
մարդկային ազգին երկրորդ հայրն եղաւ :

Հ. Արդիք մարդկան ո՞րոնք են :

Պ. Արդիք մարդկան են Ապայէնի զաւկը-
ներն, որ իրենց հօրը պէս ամպարիշտ մարդիկ
էին :

Հ. Արդիք մարդկան ըսուածներուն մէ-
ջէն երեւելիներն ո՞րոնք են :

Պ. Ա. Ենովք որուն անուամբը Ապայէն իր
հայրը քաղաք մը շինեց : Բ. Ղամէք. ասիկա
շատ զաւակներ ունեցաւ, որոնցմէ Յովբէլ հո-
վուական կենաց սկիզբն ըրաւ. Յովբազ երգե-
րու ու երաժշտական գործիքներու գտնողն ե-
ղաւ. Թովբէլ դարբնութիւն գտաւ. Նոյեմայ
Թովբէլայ քոյրը, կտաւ գործելու եղանակն
հնարեց :


Հ. Արդիք Աստուծոյ միշտ բարի մնացի՞ն :

Պ. Որդիք Աստուծոյ Որդիք մարդկանց
հետ խնամութիւն ընելով կամաց կամաց չա-
րացան, մինչեւ աշխարհիս բոլոր մարդկանց
բարքը գէշցաւ: Ասոնցմէ ծնան հսկայ ու ամ-
պարիշտ մարդիկ՝ որոնք զԱստուած մոռցան:



ՄԱՍՆ Բ

ԶՐԷԵՂԵՆ ԻՆՉՈՒՍՆ ԱՐԲԱՆՄՈՒ ԿՈՉՈՒՄԸ



1

ԶՐԷԵՂԵՂ

Հ. Աստուած մարդկանց անկարգութիւնը
ի՞նչպէս պատժեց. Նոյի ի՞նչ պատուէր տուաւ:

Պ. Աստուած տեսնելով մարդկանց բարուց
գէշութիւնը, միտքը դրաւ՝ որ թէ մարդիկ և
թէ անասունները երկրիս վրայէն ջնջէ ջրհե-
ղեղով: Այս մարդիկներուն մէջ, մինակ Նոյ
զանուեցաւ, որ արդար և Աստուծոյ հաճելի

ըլլալուն, իր ընտանիքովը դալու պատահաւն
 աղատեցաւ: Աստուած ըլլալիքն յառաջուց
 Նոյին խնայուց: Հրամայեց անոր, որ մեծ նաւ
 (Տապան) մը շինէ եւ իր ընտանիքն ու ամէն
 տեսակ սուրբ ըլլող կենդանիներէն՝ եօթնական
 ջուխտ, ու անսուրբ ըլլողներէն՝ մէջմէկ ջուխտ,
 եւ ամէն թէ իրենց ու թէ կենդանիներուն
 ապրուստին համար պէտք եղածը հետն ա-
 ռած մէջը մտնէ: Նոյ այս հրամանը չկատա-
 րած 100 տարի, դալու ջրհեղեղը մարդկանց
 կը քարոզէր ու զիրենք ապաշխարութեան կը
 յորդորէր, բայց անօգուտ:

Հ. Ջրհեղեղն ի՞նչպէս եղաւ:

Պ. Երբոր որոշեալ ժամանակն եկաւ Նոյ
 նաւը մտաւ. Աստուած ալ դուռը վրայէն
 դոցեց: Մէջ մ'ալ երկբիս անդուհնդները պատ-
 ուեցան եւ երկինքէն սկսաւ սաստիկ անձրեւ
 մը, որ քառասուն օր քառասուն դիշեր տևեց
 եւ ջուրը մինչեւ ամենէն բարձր լեռները ծած-
 կելով, գուրս մնացած բաները խեղդուեցան:
 Ջուրը 150 օր երկրին երեսը մնալէն ետեւ,
 Աստուած հով մը խաւրեց, որով ջրերը իջ-
 նալու սկսան, ու տապանն ալ Հայաստան Առ

բարատ լերան վրայ նստաւ : Քառասուն օրէն
Նոյ ազուաւ մը թողուց, իմանալու համար թէ
չուրը ցամքեր է . դնաց ազուաւը եւ ետ չը-
դարձաւ : Եօթն օրէն Նոյ աղանի մը թողուց
որ դնաց ու կենալու տեղ չգտնելով ետ դար-
ցաւ, Եօթը օրէն նորէն թողուց աղանին, որ
դնաց ու իրիկուան դէմ բերանը ձիթենուոյ
ճիւղ մ' առած ետ դարձաւ : Անցաւ եօթն օր
դարձեալ թողուց աղանին որ դնաց եւ ալ
չերեցաւ :

Այն ատեն Նոյ Աստուծոյ հրամանաւը
տապանէն դուրս ելաւ, ամբողջ տարի մը մէ-
ջը կենալէն ետեւ, ու սուրբ կենդանիներէն
Աստուծոյ շնորհակալութեան ողջակէզ մա-
սոյց, որ Աստուծոյ շատ հաճոյ եղաւ . Անոր
համար, Աստուած զինքը ու իր որդիքն օրհ-
նեց, Եւ իրենց հրաման տուաւ անասնոց միա-
ալ ուտելու . բայց ապսպրեց միանգամայն որ
կենդանուոյ միան արիւնտտ չուտեն : Նաեւ
պատուիրեց, որ մարդու արիւն չթափեն :
Ետքը խոստացաւ որ ասկից ետքը մէյ մ' ալ
մարդկային ազգը ջրհեղեղով չպատժէ, եւ
իւր խոստման նշան ծիրանի գօտին տուաւ :

ՆՈՅԻ ՈՐԴԻՔԸ

Հ. Նոյի որդւոց անուան ի՞նչ է. Քամ
 ի՞նչու անիծուեցաւ :

Պ. Նոյ երեք որդի ունեցաւ, որոնց անուան է Սեմ Քամ Յաբէթ: Նոյ երկիր բանել սկսելով այդի տնկեց, ու գինւոյ ոյժը չը գիտնալուն՝ հեղ մը շատկեկ խմելով գինովցած գնաց մերկ պառկեցաւ: Իր որդիքներէն Քամ հայրն ասանկ վիճակի մէջ տեսնելով գնաց ծաղրելով մէկալ եղբարցը պատմեց. բայց Սեմ եւ Յաբէթ լաթ մ' առած ետեւ ետեւ երթաւով գացին հօրերնուն մերկութիւնը ծածկեցին: Երբ որ Նոյ արթնցաւ և Քամայ ըրածն իմացաւ, անիծեց զայն, որ ծառայ ըլլայ մէկալ երկու եղբարցը: Իսկ Սեմն ու Յաբէթը օրհնեց:

Հ. Նոյ ո՞րչափ ատեն ասլրեցաւ :

Պ. Նոյ ջրհեղեղէն ետքը 350 տարի աւ ասլրելով ու 950 տարուան մեռաւ :

ԲԱՔԵԼՈՒՄԻ ԱՇՏԱՐԱԿԸ

Հ. Սեմ, Քամ, Յարէթ շրհեղեղէն եւս-
քը ո՞րչափ ատեն մէկտեղ մնացին :


Պ. Խիստ քիչ, վասն զի Աստուծոյ օրհ-
նութեամբը շուտ մը բազմանալով ու տեղեր-
նին իրենց քիչ դալով, հարկադրեցան ուրիշ
երկիր փնտռելու ելնել. ուստի Սենաարայ
երկիրը դաշտ մ' եկան :

Հ. Սենաարայ դաշտը ի՞նչ պատահեցաւ :

Պ. Հոս ուղեցին ցրուելէն յառաջ մին-
չեւ երկինք հասնող բարձր աշտարակ մը շի-
նել, եւ անով երկրիս վրայ անմահ յիշատակ
մը թողուլ, բայց Աստուած՝ անոնց ամբար-
տաւանական խորհուրդը չհաւնելով լեզուներն
խառնակեց, որով իրար չհասկնալով սկսած-
նին շկրցան յառաջ տանիլ ու երկրիս վրայ
ասդին անդին ցրուեցան : Այս պատճառաւ
նոյն տեղը Բաբել կոչուեցաւ որ (խառնակու-
թիւն) ըսել է :

Հ. Մարդիկ ցրուելէն ետեւ ի՞նչպէս
կերանք անցուցին, եւ Աստուած ի՞նչու իրեն
մասնաւոր ազդ մ' ընտրեց:

Պ. Մարդիկ ասանկ ցրուելէն ետեւ,
իրենք զիրենք իրենց ցանկութեան գերի
քրին, կամաց կամաց զԱստուած բողբոջին
մոռցան, եւ սկսան ջուրը, հողը, Արեւը,
Լուսինը, նոյն իսկ մարդն ու կենդանիները՝
Աստուծոյ պէս պաշտել: Եւ Աստուած որ խոս-
տացած էր, աշխարհս մէյ մ'ալ շրհեղեղով
չպատժել, զիրենք երեօէ ձգեց բայց իր խոս-
տացած Փրկիչը խրկելու համար այն կու-
պաշտ մարդկանց մէջէն ընտրեց ազդ մը, և
իրեն սեպհական ժողովուրդ մը ընելով մաս-
նաւորապէս կը խնամէր զանոնք: Այս ազգին
անունը Եբրայեցի կամ Հրեայ է, որ ետքէն
Իսրայելացի ալ կոչուեցաւ, որ Աստուծմէ ընտ-
րեալ ըսել է. և ասոնց նախահայրն եղաւ Աբր-
րահամ:



ՄԱՍՆ Գ

ԱՅՐԱՀԱՄՈՒ ԿՈԶՈՒՄԷՆ

ԻՆԶՈՒԱՆ ԻՍՐԱՅԵԼԱՏԻՈՅ ԵԴԻՊՏՈՍԷԼՆԵԼԸ



1

ՄՐԲԷԱՄ



Հ. Աբրահամ ո՞վ է. Աստուած զի՞նքն
ուր կանչեց. եւ ի՞նչ խոստացաւ :

Պ. Աբրահամ Սեմայ ցեղէն Թարայի որ-
դին է. որն որ Քաղղէացւոց Ուր քաղաքը
Ժնաւ : Կռապաշտութիւնը իր ցեղին մէջն ալ
մտած էր, բայց ինք, Աբրահամ ճշմարիտ
Աստուածը կը պաշտէր : Աստուած կանչեց Ս. Բ-
րահամ, եւ ըսաւ որ ելնէ իր հայրենի երկ-
րէն ալ իր ցուցընելու երկիրն երթայ. խոս-
տացաւ միանգամայն որ զի՞նքը մեծ ազգի մը
հայր պիտի ընէ. եւ իր դաւկըներէն պիտի
Ժնանի մարդկային ազգի Փրկիչը : Աբրահամ հնա-

զանդելով իր եղբոր որդին, Ղուլան ու Սառա իր
 կիներ ծառաներ ու անասունները հեան առած Քա-
 նանացուց երկիրն եկաւ, որ շատ աղաւոր ու
 պաղաքեր երկիր մ' էր: Հոն Սատուած նորէն
 երեւցաւ ու ըսաւ: Այս երկիրը քեզի ու քու
 որդւոցդ պիտի տամ. Աբրահամ ալ (Բե-
 թեղի մօտ) Սատուծոյ սեղան շինեց ու շնոր-
 հակալ եղաւ: Ասկից ետքը սովի պատճառաւ
 Եդիպտոս գնաց իր Սառա կնոջը հետ, ու
 անկից պարզեանքով վերադարցաւ նորէն Բեթէլ
 և հոն բնակեցաւ:

Հ. Աբրահամ Ղուլան ի՞նչու բաժնուե-
 յաւ:

Պ. Երբոր Աբրահամու եւ Ղուլտայ կա-
 ուածները խիստ շատցան, ու տ'ընեցնին իրենց
 նեղ դալ սկսաւ, հոն Աբրահամու եւ Ղուլտայ
 հովիւներուն մէջ կռիւն անսպակաս էր: Այս կռիւ-
 ներուն վերջ մը տալու համար, Աբրահամ Ղուլ-
 տայ աղաչեց, որ իրմէ բաժնուի. Նայէ ըսաւ
 Ղուլտայ. Եթէ դուն ալ կողմէ կերթաս, ես
 ձախ. թէ որ դուն ձախ ես ալ կողմը կ'եր-
 թամ: Այսպէսով իրարմէ բաժնու եցան. Ղուլտ
 Յորդանան գետին քովի երկիրներուն աղաւ-

բութեան համար, այն կողմերն ընտրեց ու Սո-
դոմ քաղաքին մէջ բնակեցաւ: Բայց հոն իրեն
ձախորդութիւն մը պատահեցաւ:

Հ. Ղովան ի՞նչպէս գերի ինկաւ, և Աբ-
րահամ ի՞նչպէս զինքն ազատեց:

Պ. Չորս թագաւորք Սողոմոնացոց թա-
գաւորին գէմ պատերազմի ելան: Ասիկայ ու-
րիշ չորս թագաւորներ իրեն օգնութեան կան-
չեց. բայց անոնց հետ մէկ աեղ յաղթուելով՝
Սողոմ քաղաքն առնուեցաւ, ու Ղովա իրեն-
ներովը գերի ինկաւ: Աբրահամ առ լսելուն
պէս, իր ծառաները ժողվեց ՅԸՏ հողի չափ
դնաց զարկաւ թշնամին ու յաղթեց: Ղովան
ու մէկալ գերի ինկածներն ազատեց ու բոլոր
տաւածնին ետ դարձուց:

Հ. Ասաուած Աբրահամին ի՞նչ եղանա-
կաւ զաւակ խոտացաւ, և Աբրահամին զթու-
թիւնն ի՞նչպէս երեւցաւ:

Պ. Օր մը Աբրահամ իր վրանին դրան առ-
ջեւ նստած ատեն՝ հեռուանց երեք հողի տե-
սաւ, որ գէպ իր կողմը կուգային: Ասոնք
հրեշտակ էին մարդու կերպարանքով: Աբ-
րահամ անսիջապէս անոնց դիմացը վազեց,

զիրենք սիրով ընդունեցաւ, ու ծառի մը տակ
իրենց կէսօրուան կերակուր պատրաստել տու-
աւ: Աերակրէն վերջը հրեշտակներէն առաջինը
(որ Աստուած էր) ըսաւ Աբրահամին .
Գալ տարի Սառա՝ քու կինդ այս ծերութեան
հասակին մէջ որդի մը պիտի ունենայ: Այսպիսի
անհաւատալի բանի մը վրայ Սառա ծիծաղե-
ցաւ: Բայց հրեշտակը դինքն յանդիմանեց, ը-
սելով, Աստուծոյ քով անկարելի բան չկայ:

Երբոր երթալու եղան, հրեշտակներէն մէկը
Աբրահամին իմացուց որ Սողոմ ու Գոմոր
քաղաքները կործանելու կերթան, անոնց մե-
ղացը համար: Աբրահամ գլխաւով աղաչեց որ
անոնց խնայեն: Յանձն առաւ հրեշտակը ը-
սելով որ եթէ անոնց մէջ տասը աշոգար ալ միայն
դրանուելու ըլլայ պիտի խնայեն եւ ճամբայ ելան:

Հ. Սողոմ ու Գոմոր քաղաքները ի՛նչ
պէս կործանեցաւ:

Պ. Երբոր հրեշտակները իրիկուան դէմ
Սողոմ հատան, Լուիտ դրան քով նստած ըլ-
լալով, դանձանք տեսնելուն պէս, առանց ճանչ-
նալու ան մոյ առջեւը վալեց, տուն ապրտու
իրենց կերակուր պատրաստեց: Հրեշտակները ի-

ըննց դարուն պատճառը Ղովտայ իմացուցին եւ ը-
 օին անոր որ, իր կինն ու երկու աղջիկները
 հետն առած քաղքէն հեռանայ: Եւ առաւօտուն
 արշալոյսի մօտ հրեշտակք Ղովտայ ու կնոջ եւ
 իրենց երկու աղջկան ձեռքերնուն բռնած քաղ-
 քէն դուրս հանեցին: Ղովտայ պատուիրեցին
 որ ամենեւին ետեւ չնայի ու ասդին անդին
 չկենայ, հապա որչափ կարելի է շուտ՝ լերան
 վրայ ելնէ, որպէս զի չլլայ թէ իրեն ալ բան
 մը պատահի: Արեւը ծագեցաւ չծագեցաւ՝
 մէյ մ'ալ Սողոմայ ու Գոմարայ վրայ ծծումք
 ու հուր տեղաց, ինչ որ դտաւ այրեց, լափեց
 մոխիր դարձուց: Իսկ Ղովտայ կինն հետաքրք-
 րութեամբ ետեւը նայելով՝ աղէ արձան եղաւ:

Հ. Աբրահամու խոստացուած որդին ու-
 նեցա՞ւ: Անունը ի՞նչ դրաւ:

Պ. Աստուած խոստացած էր Աբրահամին
 որ զինքը մեծ ազգ պիտի ընէ, եւ նոյն իսկ
 Փրկիչն իր ցեղէն պիտի ծնանի, բայց ինք
 Աբրահամ դեռ անորդի էր: Թէպէտեւ ինք ու-
 թիշ որդի մ'ունէր Իսմայէլ անուամբ որ իր Աքար
 աղախինէն եղած էր, բայց Աստուած յայտնած
 էր Աբրահամու թէ Իսմայելը չէ իւր օրինաւոր

ժառանգը, հասցա Սառաէն Իսահակ անուն
 դաւակ մը պիտի ըլլայ եւ անկից պիտի ծնանի
 աշխարհիս Փրկիչը: Հրեշտակին խոստացած ա-
 տենէն ճիշտ տարի մը ետքը, որդի մ'ունեցաւ
 որուն անունը Իսահակ դրաւ, եւ Սասուժոյ
 հրամանաւը ութօրէն թլիբատեց: Այս թլիբա-
 տութենէն վերջը օրէնք եղաւ որմինչեւ այսօր
 Հրէից աղգը իրենց արու որդիքը ութ օրէն
 կը թլիբատեն:

Հ. Սասուժ ի՞նչպէս փորձեց զԱբրա-
 համ:

Պ. Օրրստօրէ Իսահակ կը մեծնար, ուստի
 Սասուժ զԱբրահամ փորձելու համար, գիշեր
 մը իրեն երեւցաւ ու ըսաւ: Մէկհատիկ սի-
 ռիի զաւակդ Իսահակն առ իմ ցուցնելու լե-
 բանս վրայ ինձի զոհ ըրէ: Աբրահամ շուտ մը հը-
 նազանդեցաւ, գիշերանց ելաւ փայտ ջարդեց ի-
 շուն վրայ բռցուց ու երկու ծառայով Իսահակն
 ալ հետն առած ճամբայ ելաւ: Երեք օր ճամբայ
 ընելէն ետեւ, երբ որ Սասուժոյ ցուցըցած լեռն
 հասան ծառաները հոն թողուց, զոհին համար
 պատրաստած փայտը Իսահակայ կռնակը տուաւ,
 իսկ սուրն ու հուրը ինքն առած՝ սկսան լեռն

եղևել: Ճամբան Իսահակ հօրն հարցուց. Հայր
հուր ու փայտ ունինք, զոհին ոչխարն ո՞ւր է
Հայրը պատասխանեց թէ Աստուած կը հողայ
որդեակ: Ասանկով ճամբանին յառաջ տարին.
Երբոր լերան գլուխն հասան, Աբրահամ սե-
ղան շինեց, փայտերը վրան դիդեց, որդին ալ կա-
պած վրան հանեց: Եւ երբ ձեռքի սուրը վեր-
ցուց որ զարնէ, մէյ մ'ալ յանկարծ հրեշտակ մը
դինքը կանչեց ու ըսաւ. Տղուս մի դպչիր.
հիմայ իմացայ որ դու կատարեալ Աստուած ա-
պաշտ ես որովհետեւ իրեն համար քու մէկհասիկ
զաւկիդ շինայեցիր: Աբրահամ աչքը վեր վեր-
ցուց և տեսաւ որ մօտակայ ծառի մը վրայ խոյ մը
եղջիւրներէն կախուեր կեցեր է. դնաց առա-
ջայն որդւոյն տեղ Աստուծոյ զոհ մատոյց: Աս-
տուած Աբրահամու այս մեծ հնազանդութեան
համար, իրեն երկինքի աստղերուն ու ծովու առա-
ջին չափ անթիւ անհամար զաւակ տախտատացաւ:

Հ. Ստուա ո՞ւր եւ ե՞րբ մեռաւ:

Պ. Ստուա Բանանացուոյ Բերբոն քաղա-
քը 127 տարուան մեռաւ: Աբրահամ սուգ
բռնեց, ու Մամբրէին դիմացի այրը գնելով
Սառային մարմինը հոն թաղեց:

ԻՍԿԱԿ

Հ. Իսահակ ե՞րբ եւ ինչպէս կարդուեցաւ :

Պ. Սառային մեռնելէն երեք տարի ետ-
քը Աբրահամ Եղիազար ծառան Միշադէտք
իր աղգականացը խաւրեց, որ անկից Իսահակ
որդւոյն համար աղջիկ մը դանէ բերէ անոր կին
ըլլալու : Եղիազար տիրոջն ուղտերէն 10 հասար
ապնիւ ու պատուական ընծաներով բերնաւո-
րած՝ Միշադէտք գնաց, եւ Աստուծոյ աղա-
չեց, ըսելով թէ այն աղջիկն իրեն եւ իր ուղ-
տերուն շուր խմցընէ, անի ըլլայ Իսահակայ
կինը : Նոյն միջոցին Ռեբեկան՝ Բաթուէլի աղ-
ջիկը պատահելով Աստուծակէ խնդրածին հա-
մեմատ վարուելուն աւաւ Իսահակին տարաւ,
որ անոր հետ կարդուեցաւ :

Հ. Իսահակ քանի՞ որդի ունեցաւ. Եսաւ
անդրանկութիւնն ի՞նչպէս կորսնցուց :

Պ. Իսահակ քսան տարի վերջը երկուոր-
եակ աղաք ունեցաւ Եսաւ ու Զակար : Անդրա-
նիկն Եսաւ, որն որ մտզտտ էր, մեծնալով

քաջ որսորդ եղաւ , իսկ Յակոբ հեղ բնութիւն
մ'ունէր : Իսահակ իրենց հայրը , զԵսաւ կը սիր-
րէր , որովհետեւ իր որսովը զինքը կը կերակ-
րէր . իսկ Աերեկայ զՅակոբ : Օր մը երբոր Յա-
կոբ ոսպէ թան եփած էր , Եսաւ սաստիկ ա-
նօթեցած որսէն եկաւ , իրմէ խնդրեց որ ե-
փած ոսպնաթանն իրեն տայ : Յակոբ՝ անդրան-
կութեանդ իրաւունքը կուտասանէ՝ կե'ր ըսաւ :
Եսաւ երդմամբ անդրանկութեան իրաւունքէն
հրաժարեցաւ ու նստաւ ոսպնաթանը կերաւ :

Հ . Յակոբ Եսաւոյ տեղ հօրմէն ի՞նչպէս
օրհնուեցաւ :

Պ . Իսահակ երբ որ ծերացաւ ու աչուք-
ներն ալ չէին տեսներ , ուզեց իր անդրանիկ
որդին Եսաւն օրհնել , ուստի Եսաւը կանչեց
եւ ըսաւ . դնա՛ որս մը դտի եւ ուղածիս պէս
եփիէ որ չմեռած ուտեմ եւ դքեղ օրհնեմ :
Աերեկայ այս լսելով Յակոբայ ըսաւ դնայ ե-
անմիջապէս երկու ուլ բեր . եւ ես , հօրդ սիրած
կերակուրը կ'երբեմ ձեռքդ կուտամ որ իրեն
տանիս , որպէս զի դքեղ օրհնէ : Յակոբ դնայ
ըսածը կատարեց : Աերեկայ կերակուրն եփեց ,
Եսաւին զղեւաններն Յակոբին հաղցուց , և ձեռ-

ուրներն ու վիզը ուրնուն մարթավը ծածկեց ,
 եփած կերակուրը ձեռքը հօրը խաւքեց : Իսա-
 հակ իրեն հարցուց թէ ո՞վ է . Յակոբ , քու անդ-
 բանիկ զաւակդ եմ ըստ . ե՛լ ինդրած որտէ կեր-
 ու զիս օրհնէ : Իսահակ կերակուրն ասանկ շուտ
 պատրաստելէն ու ձայնէն տարակուսելով մօտ
 կանչեց և շօշափելով ըստ . ձայնդ Յակոբայ
 ձայնն է , բայց ձեռուրներդ Եսաւինն են : Ես-
 քը բերածն աստ կերտա ու զինքը օրհնեց
 որ եղբօրը վրայ տիրէ եւ ամէն ազգերը զին-
 քը օրհնեն , Հաղիւ թէ Յակոբ դուրս ելած
 էր , Եսաւ ալ իր պատրաստած կերակրովը
 ներս մտաւ : Իսահակ երբոր անոր ո՞վ ըլլայն
 իմացաւ շատ զարմացաւ , բայց Յակոբայ տուած
 օրհնութիւնն ետ չառաւ : Եսաւ ասոր վրայ այ-
 լայլած՝ հօրը աղաչեց որ զինքն ալ օրհնէ . եւ
 այնչափ ըրաւ որ Հօրը սիրտը շարժելով , ի-
 րեն ալ մէկ քանի օրհնութեան խօսքեր ըրաւ :

Հ . Եսաւ հօրը օրհնութենէն զրկուելուն
 համար Յակոբայ բան մը ըրաւ :

Պ . Եսաւ հօրը օրհնութենէն զրկուելուն
 համար եղբօրը ոխ պահեց . միտքը գրաւ որ
 հօրը մեռնելէն ետքը զինքն սպաննէ :

Ը . Ռեքեկա Եսաւայ միաքը իմացաւ նէ
ի՞նչ ըրաւ :

Պ . Ռեքեկայ Եսաւայ միաքը իմացաւ նէ
շատ տրամեցաւ . եւ տեսնելով որ Յակոբայ
կեանքը ապահով է , դինքն առաւ Խառան
իր եղբօրը Լաբանին խաբեց :

Յ

ՅԵԿՈՐ

Ը . Յակոբ Խառան դացած ատեն ճամ-
բան ի՞նչ պատահեցաւ :

Պ . Յակոբ Խառան դացած ատեն ճամ-
բան , դիշերը վրայ հասնելով հարկ եղաւ որ նոյն
դիշերը բաց դաշտի մէջ անցնէ . ուստի քար մը ա-
ռաւ դիտուն տակ դրաւ պառկեցաւ : Քունին մէջ
երազը սանդուղ մը տեսաւ , որուն ծայրը մինչեւ
երկինք կը հասնէր , ու վրայէն հրեշտակները
կ'ելլէին ու կ'իջնէին . եւ Սասուած սանդու-
ղին գլուխը կեցած իր Խոստումները կը նո-
րագէր : Յակոբ ասկէց սիրտ առած արթնցաւ ,
եւ Սասուծոյ շնորհակալ ըլլալէն ետեւ նորէն

Տամբայ ելաւ :

Հ. Յակոբ Լաբանին քով ի՞նչպէս ընդունելութիւն դտաւ :

Պ. Յակոբ Լաբանին քով շատ աղէկ ընդունելութիւն դտաւ. եւ շատ տարի անոր քով մնաց. անոր երկու աղջկան Լիանն ու Ռաքելին հետ կարգուեցաւ. երկուքին համար ալ եօթնական տարի Լաբանին ծառայելով : Ասկից վերջը երբոր ուղեց անկից բաժնուիլ Լաբան զինքը թողուլ չուղեց, եւ անոր խնդրելովն ոչխարին խատուտիկ (սեւ ու ճերմակ կէտերովը) եւ այծին ճերմակը խոստացաւ վարձք տալ : Յակոբ այս պայմանով կեցաւ ու վեց տարի ալ ծառայեց, եւ զինքն հարատացրնելով ոչխարի եւ այծի, խել մը ծառաներու եւ աղախիններու տէր ըրաւ :

Հ. Լաբան Յակոբայ հարստանալը տեսաւ նէ ի՞նչ ըրաւ :

Պ. Լաբան Յակոբայ հարստանալը տեսնելով սկսաւ վրան նախանձիլ ու ծռռ աչքով նայիլ : Աստուած հրամայեց Յակոբայ որ ելնէ իր հայրենիքը դառնայ : Ուստի Յակոբ շուտ մը կանայքն ու որդիքն ուղտ հեծցուց ու բռ-

որ հարստութեամբը ճամբայ ելաւ : Ճամբան
 Աստուծոյ օգնութեամբն ամէն վտանգներէն
 անգնաս խայրսեցաւ : Անկից ետքը Մամբրէ
 դնաց իր Իսահակ հայրը տեսնելու համար .
 հոս քիչ մը ետքը Իսահակ 180 տարուան մե-
 աաւ : Եսաւ ալ հօրը մահը լսելով՝ հոն եկաւ :
 Երկու եղբարք . իրենց հայրը մեծ տրամա-
 թեամբ թաղեցին :

Հ . Յակոբ ի՞նչպէս Իսրայէլ կոչուեցաւ :

Պ . Յակոբ՝ Լարանէն բաժնուած հայրե-
 նիքը դարձած ատեն , երբ լսեց որ իր Եսաւ
 եղբայրը բազմութեամբ դիմացը կուգայ՝ շատ
 վախցաւ , եւ Աստուծոյ աղաչեց որ զինքն
 անոր ձեռքէն ազատէ : Նոյն գիշերը երազին
 մէջ իրեն հրեշտակ մ'երեւցաւ , որուն հետ
 կառեցաւ ու յաղթեց , եւ մինչեւ որ զինքը
 չօրհնեց չըթողուց : Աւստի հրեշտակն անոր ա-
 նունը փոխեց Իսրայէլ դրաւ , որ Աստուած ատենս
 լսել է : Իր սերունդը անոր անուամբ Իսրայե-
 լացիք կոչուեցան :

Հ . Յակոբ քանի՞ որդի ունէր . Անուն-

ներն ի՞նչ է :

Պ . Յակոբ առանբիւր որդի ունէր , որոնց

անուանեցին են Ռուբէն : Եսաւոն , Ղևի , Յուդա՝
Իսաքար , Զարուղոն , Իան , Նեփղաղիմ ,
Գաթ , Ասեր , Յովսեփ , Բենիամին :

ՅԱԳՍԵՓ

Հ . Յովսեփ եղբարցն ի՞նչու ասելի եղաւ՞

Պ . Յովսեփ իր եղբարցը անոր համար ասե-
լի եղաւ , Յակոբ իրենց հայրը զինքը շատ կը
սիրէր ծերութեան որդին ըլլալուն համար ,
ուստի եւ անոր առանձին ծաղկեաց պատմու ճան
շինած էր : Մանաւանդ իրենց ասելութիւնն
ու . նախանձն այն ատեն ասելի եւս մեծցաւ
երբ որ Յովսեփ ատած երկու երազը իր ար-
դայաւիան միամտութեամբը աննկց պատմեց :

Հ . Յովսեփայ երազները որո՞նք էին :

Պ . Յովսեփայ երազներուն առջինն այս
էր . ատաց որ , ըսաւ , ամէնքս մէկտեղ դաշտ
դապեր որայ կը կապէինք . մէյ մ'ալ իմ կա-
պած որսս ելաւ կանգնեցու , ու ձեր կապած .

ներն իմինիս դարձան երկրպագութիւն ըրին :
 Երկրորդ երազն ալ այս էր . Տեսայ որ , ըսաւ
 արեւը , լուսինն աւ տանեմէկ աստղերն ինձի
 երկրպագութիւն կ'ընէին : Երրորդ այս պատմած
 երազները լսեցին եղբարքը , սաստիկ նեղացան
 ա իրենց միտքերնին դրին որ զինքը մեռցնեն :

Հ • Յովսէփայ եղբարքը միտքերնին դրած
 նին ի'նչպէս ի դարձ դրին :

Պ . Յովսէփայ եղբարքն օր մը երբ որ
 Միւքէմ ոչխարներ արածելու դացած էին ,
 Յակոբ զՅովսէփ իրկեց որ զիրենք տեսնէ :
 Ասանք երբ որ իր գալը ի հեռուստ տեսան , ըս-
 կան իրենց մէջ ըսել : Ահա երազատեսը կա-
 գայ . եկէք զինքը սպաննենք , որ տեսած
 երազներուն ի'նչ բանի ծառայելը հասկընայ :
 Գուբէն իրենց մեծ եղբայրը այս զարհուրելի
 խորհուրդին հաւնեցաւ . Յովսէփը անոնց ձեռ-
 քէն ազատելու եւ հօրը տանելու համար , խոր-
 հուրդ տուաւ որ հոն դրի մը մէջ նետեն :
 Աստի անմիջապէս ծաղկեայ պատմութանք
 համեմտվ վրայէն զինքը աստին դրի մը մէջ
 նետեցին : Բայց մէյ մ'ալ տեսան որ անդիէն
 Իսմայելացի վաճառականներ՝ Եղիպտոս կեր-

Թան : Մէջերնէն Յուդա ելաւ ըսաւ որ Մեր
 եզրօրը մահը մեզի ի՞նչ օգուտ կունենայ ,
 լաւագոյն է որ զինքը ծախենք : Այս բանիս
 միւսները ալ հաւնելով դային Յովսէփը զբէն
 հանեցին եւ ան վաճառականներուն ըսան
 դահեկանի ծախեցին : Ետքէն Յովսէփայ ծաղ-
 կեայ պատմութեանն այժի արեան մէջ թափ-
 խած իրենց հօրը խրկեցին , ըսելով թէ Այս
 սգեաւոր դտանք , նայէ տղուդ պատմութեանն
 է : Յակոբ տեսածին պէս ճանչցաւ . Չար
 դադանը Յովսէփա պատուեր է , ըսելով սիր-
 աւա լալ ու ողբալ . եւ ամենեւին չէր ու-
 ղէր մխիթարուիլ :

Հ . Վաճառականներն զՅովսէփ ի՞նչ ըրին :

Պ . Վաճառականներն զՅովսէփ Եղիպտոս
 տարին ու Փարաոնի դահճապետին ծախեցին
 որ Պետափրէս կ'ըսուէր , որուն շատ սիրելի
 եղաւ Յովսէփ , բայց անոր անամօթ կինը վրան
 յանցանքներ ձգելով , բանտ դրուեցաւ :

Հ . Յովսէփ բանտին մէջ ի՞նչ ըրաւ :

Պ . Յովսէփ բանտին մէջ եղած ատեն
 թագաւորին տակառապետը ու մատակարարն
 ալ յանցանքի մը համար հոն դրուեցան : Ան-

դամ մը երկուքն ալ գիշերը երազ տեսան :
 ու Յովսէփ երկուքին ալ մեկնութիւնը տուաւ :
 Մատակարարին ըսաւ թէ՛ երեք օրէն թագա-
 ւորը դքեղ կախել պիտի տայ . եւ տակառա-
 պետին ալ թէ Փարաւոն երեք օրէն դքեղ
 առջի պաշտօնիդ պիտի հասցընէ : Եւ անոր
 ազաչեց որ իրեն համար Փարաւոնին բարեխօս
 ըլլայ , որ զինքը բանտէն ազատէ : Յովսէփայ
 ըսածնեցն եղան . բայց տակառապետը զանի
 մոռցաւ :

Հ. Յովսէփ բանտէն ի՞նչպէս ազատեցաւ :

Պ. Բանտը մտնելէն երկու տարի վերջը
 Փարաւոն ալ երազ մը տեսաւ , որ գետէն
 եօթը գէր երինջ ելեր կարածուէին ետքը
 ուրիշ եօթը երինջ ելան առաջինները կլկցին :
 Ասոր վրայ արթնցաւ և նորէն քնամարտի ու-
 րիշ երազ մ'ալ տեսաւ , որ եօթը լեցուն հաս-
 կով ցորենի տունկ մը ելաւ . ետքը եօթը պա-
 ըսալ ցորենի հասկեր ալ ելան միւս լեցուն-
 ները կլկցին . Այս երազներէն Փարաւոն սաս-
 տիկ խռովելով առաւօտ ըլլալուն պէս , Նզիպ-
 տոսի երազահաններն ու գիտունները առջև
 բերել տուաւ . բայց երազներն մեկնող չէղան :

Եւ յն ժամանակը մէկէն տակաւ ապե տին միտ-
 քը Յովսէփն իյնալով սկսաւ զինքը Փարաւոնին
 առջեւը խիստ դովեց որ քաջ երազահան է :
 Եւստ մը զՅովսէփ՝ Փարաւոնին հրամանաւը
 բանտէն հանեցին ու թողաւորին առաջը տա-
 րին : Յովսէփ թողաւորին երազներն այսպէս
 մեկնեց : Եօթը գէր երինջներն ու եօթը պա-
 րարտ հասկերն , ըսաւ առատութեան եօթը
 տարիներ , իսկ մէկայնէքը՝ սովի եօթը տարի-
 ներ կը նշանակեն : Ուստի պէտք է որ ըսաւ ,
 հիմակու ընէ իմաստուն ու խելացի մէկը գըտ-
 նեա , որ անձիջապէս՝ գալու սովի տարիներուն
 համար առատ ցորեն պատրաստէ : Փարաւոն
 Յովսէփայ ըսածներուն հաւնելով հանեց իր
 ձեռքէն մամնին , Յովսէփայ ձեռքն անցուց :
 Ետքը փառաւոր զգեստներ հագցընել տալով
 վիզը ոսկի մանեակ գրաւ . ու զինքը բոլոր
 Եգիպտոսի կառավար կարգեց :

Հ . Յովսէփ իր պաշտօնն ի՞նչպէս կատա-
 րեց :

Պ . Եստ ըսաւ , վասն զի իր ըսածին համա-
 ձայն առատութեան եօթը տարիներն համնելով
 ցորենի համբարանոցները լեցընել ու պահել

առուաւ : Վերջը ժամանակին սովի տարիներն ալ
սկսան : Այն ատեն Յովսէփ համբարանոցները
բացաւ , բոլոր երկրին հաց հասցուց , այնպէս
որ դրացի երկիրներէն ալ մարդիկ ցորենի հա-
մար Եգիպտոս կը վազէին :

Հ . Յովսէփայ եղբարքն ի՞նչու Եգիպտոս
եկան :

Պ . Գորեն դներու , վասն զի Քանանացւոց
երկիրն ալ սովը սաստկանալով՝ Յակոբ իրենց
հայրը դիրենք հօն խաւրեց :

Հ . Յովսէփ իր եղբարցը ի՞նչ ըրաւ :

Պ . Յովսէփ եղբայրները տեսնելուն պէս՝
դանոնք ճանչցաւ եւ հետերնին խատուծեամբ
վարուեցաւ : Եւ երբոր խմացաւ որ Բենիամին
իրենց միւս եղբայրը հօրը քովն է , ցորենը
տալով խրկեց , որ երթան միւս եղբայրներնին
ալ բերեն . եւ մինչեւ իրենց դառնալը Շմա-
ւոնը քովը պատանդ պահեց :

Հ . Յովսէփայ եղբարքն երբ եղածները ի-
րենց հօրը պատմեցին , Յակոբ դժբենիամին թո-
ղո՞ւց որ իրենց հետ երթայ :

Պ . Յակոբ Բենիամինը մէկտեղ տանելու եր-
կար ատեն դէմ կեցաւ , բայց երբոր ցորենն սպա-

աւելցան եւ երկրորդ անգամ հարկ եղաւ Եգիպտոս
երթալ ցորեն գնելու, այն ատեն շատ դժուարաւ
հաւանեցաւ որ Բենիամինն յալ իրենց հետ եր-
թայ: Ասանկով Յակոբայ որդիքը Բենիամինն
ալ միատեղ առած՝ Եգիպտոս եկան:

Պ. Յովսէփ իր եղբարքն երկրորդ ան-
գամուն ի՞նչպէս ընդունեցաւ:

Պ. Յովսէփ իր եղբարքն երկրորդ ան-
գամուն շատ սիրով ընդունեցաւ. մանաւանդ
Բենիամինը տեսնելով արտաքոյ կարգի ուրա-
խացաւ, եւ իրենց հօրն առողջութիւնն ալ
հարցուց: Աերջը իրենց հետ սեղանի նստաւ.
սեղանէն ետքը անոնց քուրձերը (ցորենի տալ-
քակները) լեցնել տալով իրենց հօրը խաւրեց:
Եայց ծածուկ Բենիամինին քուրձին մէջ իր
արծաթէ դաւաթը գնել տուաւ:

Է. Յովսէփայ եղբարց ճամբան ի՞նչ պա-
տահեցաւ:

Պ. Յովսէփայ եղբարքն հազիւ թէ ըն-
մը հեռացած էին, մէյ մ'ալ Յովսէփ անոնց
հետեւէն մարդ խաւրեց, որ զիրենք յանդի-
մանելով, իր արծաթէ դաւաթը ինդրեցին
ես փնտռելով դաւաթը Բենիամինին քուր-

ձին մէջ դտան : Ուստի Բենիամին պէտք էր Յովսեփայ քով գերի մնալ : Այն ատեն Յուդա՝ լալով ոտքն ինկաւ եւ աղաչեց որ ինքն անոր տեղ մնայ : Իսկ Բենիամին եղբարցը հետ իր հօրը դառնայ , վասն զի հայրը զինքը շատ սիրելուն՝ դժուարաւ թող տուէր էր իրենց հետ գալու :

Հ . Յովսեփ ինք զինքն եղբարցը ի՞նչպէս յայտնեց :

Պ . Յովսեփ երբ իր եղբարցը հօրերնուն վրայ կամ թէ իրենց մէջ ունեցած փոփոխակի սէրը տեսաւ , ալ չկրցաւ դիմանալ բոլոր ծառաները դուրս հանեց ինքը զինքն յայտնեց ըսելով ես ձեր Յովսեփ եղբայրն եմ , դացէք հօրս իմացուցէք , որ շուտ մը իր ընտանիքն առնէ դայ , որ մնացած սովի տարիներուն մէջ զինք կերակրեմ :

Հ . Յակոբ երբոր լսեց ի՞նչ ըրաւ :

Պ . Յակոբ երբոր իր որդիքներէն լսեց թէ Յովսեփ որդին կենդանի է , ու բոլոր Եգիպտոսի վրայ կ'իշխէ , 'ի սկզբան չհաւատաց բայց ետքէն զինքը տանելու համար խրկած կառքերը տեսնելով շատ ուրախացաւ , եւ չք-

Տրուած ըսաւ , կուզեմ զինքը տեսնել : Բայց
 երթալէն յառաջ ուզեց Աստուծոյ կամքն ի-
 մանալ անոր համար զոհ մատոյց , Աստուած
 տեսլեան մէջ անոր երեւցաւ ու ըսաւ՝ մի վախ-
 նար քու որդիքդ Եգիպտոսի մէջ մեծ ազդ-
 պիտի ընեմ և վերջը նոյն երկրէն պիտի հա-
 նեմ : Յակոբ փառք տուաւ Աստուծոյ և իւր
 ընտանիքն առնելով ճամբայ ելաւ :

Հ . Յովսէփ երբ հօրը դալը լսեց ի՞նչ ըրաւ :

Պ . Անմիջապէս կառք մտաւ , զինքը դի-
 մաւորելու գնաց . իրար տեսնելնուն պէս պաղ-
 տուեցան եւ ուրախութենէն սկսան լալ : Վեր-
 շէն առաւ հայրը Փարաւոնին տարաւ , որն որ
 շատ ուրախացու և Գէսէմը իրենց բնակու-
 թեան տեղի շնորհեց :

Հ . Յակոբ ի՞նչպէ՞ս ու քանի՞ տարուան
 մեւու :

Պ . Յակոբ երբոր մահուան դուռն հասաւ
 Յովսէփն իրեն կանչեց , անոր երկու որդիքը
 Մանասէն ու Եբրեմն օրհնեց ու իր որդւոցը
 կարգն անցուց : Նոյնպէս միւս որդիքն օրհ-
 նեց եւ Յուդային խոստացաւ , որ Փրկիչն իր
 ցեղէն պիտի ծնանի : Ետքը պատուիրեց որ

մեռնելէն վերջը զինք հօրը գերեզմանին մէջ
թաղեն : Այս բնէն ետեւ 147 տարուան մե-
ռաւ : Յովսէփ հօրը բաղձանաց համաձայն՝ ա-
նոր մարմինը մեծ հանդիսիւ եղբարցը հետ ա-
ռաւ Քանանացոց երկիրըտարաւ թաղեց :

Զ . Յովսէփ ե՞րբ՝ ու քանի՞ տարուան մե-
ռաւ :

Պ . Յովսէփ հօրը մեռնելէն 50 տարի վեր-
ջը 10) տարուան մեռաւ : Մեռնելէն յառաջ
եղբարցը պատօիրեց որ Քանանացոց երկիրը
դարձած ատեննին՝ իր ոսկրներն ալ միասեղ
տանին , ո՛նոնք ալ խօսք տուին :

ՄԱՍՆ Դ

ԵԳԻՊՏՈՒԿՆ ԵԼՆԵԼԵՆ ԻՆՉՈՒՆՆ ԶՐԷԻՑ
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

1

ԻՍՐԱՅԵԼԱՑԻՐ ՈՒ ՄՈՎՍԷՍ

Զ . Յովսէփայ մեռնելէն վերջը Իսրա-
յելացիք ի՞նչ վիճակ ունեցան :

Պ. Եզիպտոսի մեջ ուրիշ թագաւորներ գա-
 լով, որոնք Յովսէփը չէին ճանաչէր, եւ Իս-
 րայելացւոց շահնաւը տեսնելով վախցան որ
 շքաւայ թէ ապստամբին, անոր համար կ'ուզէ-
 ին զանոնք ամէն տեսակ բռնութիւններով
 ակարացընել: Բայց դարձեալ երբ անոնք կը
 շահնային, այն ատեն Փարաւոն հրաման ըրաւ
 որ նորածին արու զաւակնին շուրջ ձգեն:

Զ. Աստուած Իսրայելացիք այս թշուա-
 ւութենէն ի՞նչպէս ազատեց:

Պ. Մովսէսն իրենց ազատիչ խրկեց: Ա-
 սոր մայրն երբոր զինքը ծնաւ, երեք ամիս
 պահելէն վերջը կարածիւթով ծէփած կողովի
 մը մէջ դրաւ ու տարաւ Նեղոս գետը նետեց:
 Թագաւորին ազջիկը պատահամբ կողովը տե-
 սաւ ու մէջի տղուն վրայ մեծ դութ ունենա-
 լով կաթնատուի մը յանձնեց՝ որ զանիկայ անու-
 ցանէ: Երբ որ Մովսէս քիչ մը մեծցաւ, թա-
 գաւորին ազջիկը զինքն իրեն որդեգիր ըրաւ,
 եւ անոր ամէն տեսակ գիտութիւն սորվեցնե-
 լաւաւ:

Զ. Մովսէս թագաւորին պալատը ո՞րչափ
 ատեն կեցաւ:

Պ. Մինչև 40 տարուան կեցաւ : Ինք
այն կուսակաշտ մարդիկներուն մէջ աստուածա-
պաշտ մնաց . իր եղբարց քաշածներուն վրայ
շատ կը ցաւէր եւ զիրենք կը մխիթարէր ու
անոնց սիրտ կուտար : Անգամ մը տեսաւ որ
Նդիպտացւոյն մէկը Իսրայելացի մ'անխնայ կը
ծեծէ , ինք զինքը չկրնալով բռնել զարկաւ
սպաննեց զՆդիպտացին : Մովսէսին այս դործ-
քը շուտ մը իմացուելով թաղաւորը շատ նե-
ղացաւ , ասոր համար Մովսէս Մադիանացւոց
երկիրը փախաւ , եւ հոն , Յոթոր անուամբ
քահանայի մը քով ծառայութեան մտաւ . 40
տարի անոր ոչխարներն արածեց ու անոր աղ-
ջիկը իրեն կին առաւ :

Հ. Մովսէս ժողովուրդն ազատելու պաշ-
տօնն ինչպէս ընդունեցաւ :

Պ. Մովսէս անգամ մը ոչխարներն ա-
րածելու ատեն Բորեբ լեռան վրայ բռնկած
մորենի մը տեսաւ , որ այրելով չէր հատներ :
Ասոր վրայ զարմանալով ուզեց քովն երթալ
նայիլ թէ ինչ է : Բայց բոցին մէջէն ձայն ա-
ռաւ որ կըսէր . Ես Արրահամու , Իսահակայ
ու Յակոբայ Աստուածն եմ . իմ ժողովրդեանս

Նդիպատաի մէջ քաշածները տեսայ, եւ հիմակ
 դքեղ Փարաւոնին պիտի խրկեմ, որ զիրենք
 անկից հանես ու կաթ եւ մեղր բխող երկիրը
 տանիս: Մովսէս իր աղարուծիւնը ճանչնալով
 աղաչեց Աստուծոյ որ ուրիշ մը խաւրէ: Բայց
 Աստուած, ես հետդ եմ, ըսաւ, եւ Ահարոն
 եղբայրդ ալ քեզի ընկեր ըլլայ: Բայ ՚ի ասկից,
 ձեռքը կրած դաւաղանով հրաշքներ գործե-
 լաւ զօրութիւն տուաւ: Այն ատեն Մովսէս
 յանձն տուաւ:

Հ. Մովսէս եւ Ահարոն Փարաւոնին առ-
 ջեւն ելան ի՞նչ ըրին:

Պ. Աստուծոյ կողմանէ իրեն ըսին, որ
 Իսրայելացիքը թող տայ որ երթան անապատի
 մէջ իրենց Աստուծոյն զոհ մատուցանեն: Եւ
 երբոր թագաւորը հպարտութեամբ խնդիրքը
 մերժեց, Աստուած սկսաւ ետեւէ ետեւ տա-
 պն հարուածներով բոլոր Նդիպատացիք պատ-
 ժել, մինակ Գեաէմ՝ ուր Իսրայելացիք կը
 բնակէին, ազատ մնաց այս խիստ հարուած-
 ներէն:

ԵԳԻՊՏՈՍԻ ՏԱՍԵ ՊԱՏԻՔԸ

Հ. Եգիպտացւոց կրած տասն հարուածները որո՞նք են :

Պ. Եգիպտացւոց կրած տասն հարուածներն ասոնք են, Ս. բոլոր ջրերն արեան փոխուեցան, Բ. բոլոր երկիրը դորտերով լեցուեցաւ. Գ. մեծխով ծածկուեցաւ ու Դ. շանաճանճով խիտ նեղուեցաւ. Ե. անասուններն յանկարծ սատկեցան. Զ. մարդիկներուն եւ անասանոց վրայ խաւարաներ (չիպան) ելան. Է. սաստիկ կարկուտ տեղաց, որով դաշտի վրայ եղած մարդիկն ու անասուններն մեռան, տունկերն ու ծառերը կտրտեցան. Ը. երկիրը մարտիով ծածկուեցաւ. Թ. երեք օր բոլոր երկրին վրայ սաստիկ խաւար մը տիրեց, որ մարդիկ իրար չէին տեսներ. եւ վերջապէս Ժ. ամէն անդրանիկները մէկ գիշերուան մէջ մեռան :

Հ. Փարաոն այս հարուածներուն վրայ գիջա՞ւ :

Պ . Փարաւուն 'ի սկզբան այս հարուածները տեսած ատեն կը խոստանար ժողովուրդը թող տալ . բայց այս հարուածները Մովսէսէն Աստուծոյ աղաչելովն անցնելուն պէս , սիրտը կը խոստանար ու թող չէր 'ի տար . բայց երբ որ ամէն անդրանկաց շարդը տեսաւ , սաստիկ խռոված անմիջապէս Մովսէսն եւ Ահարոնը կանչել տուաւ . ըսաւ , որ ելլեն երթան , իրենց ունեցածն ալ մէկտեղ առնեն : Այսպէս Իսրայելացիք գիշերանց ճամբայ ելան 600,000 հողի կանայք ու տղաք չհամբերով , Յովսէփայ ոսկրներն ալ հետերնին առին , ինչպէս որ անիկա պատուիրած էր :

Հ . Աստուած Իսրայելացւոց ի՞նչ պատուիրած էր տամներորդ հարուածը չխաւրած :

Պ . Աստուած Իսրայելացւոց պատուիրած էր , որ տան դուխ անարատ դառն մ' առնուն . նոյն օրն իրիկուան դէմ մորթեն , խորովեն , բայց զգուշանան որ ամենեւին մէկ ոսկրը չկտարի կամ չմսասի . դառնուկին արիւնն ալ իրենց տան դրան վրայ քսեն , որ Եզիպտացիները մեռցընող հրեշտակը տեսնէ եւ իրենց մսաս չընէ : Այս բանիս յիշատակին հա-

մար Աստուած հրամայեց , որ ամէն տարի նոյն օրը տօն , Չատիկ կատարեն , գառն մը մորթեն ուտեն : Իարձեալ հրամայեց որ ամէն մարդ իր անդրանիկ որդւոյն համար , գառն մը , եւ թէ որ ծնողք աղքատ են , զոյգ մը տատրակ նուիրեն :

3

ԻՍՐԱԵԼԱՏՅՈՑ ԵՒ ԴՅՈՒՄԵՆ ԵԼՆԵԼՆ ՌԻ
ՃԱԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Հ . Իսրայելացիք Կարմիր ծովէն ի՞նչ պէս անցան . Փարաւոնին զօրքն ի՞նչպէս խեղդուեցաւ :

Պ . Իսրայելացիք Աստուծոյ հրամանաւը ճամբանին դէպ 'ի Կարմիր ծովուն քովի անապատն յառաջ տարին : Աստուած ցորեկներն ամպէ սիւնով ու գիշերները հրեղէն ամպով կառաջնորդէր : Երբոր Կարմիր ծովուն եզերքն հասան , Փարաւոն գիրենք թող տալէն զըզլալով շուտ մը պատերազմական կառքերը :

պատրաստել տուաւ ու բոլոր ճիաւոր զօրքովը
անոնց ետեւէն հասաւ : Բայց Մովսէս իր դա-
ւադանը կարմիր ծովու վրայ երկնցուցածին
պէս , ջուրը երկու բաժնուեցաւ , ու տաք հով
մ' ելնելով գետին յատակը չորցուց , որով Իս-
րայելացիք տաանց ստուրնին թրջելու՝ մէջէն ըս-
կանս երթալ . Եգիպտացիք անոնց ետեւէն
դային . բայց երբոր Իսրայելացիք անցան՝ Մով-
սէս ձեռքի դաւադանը դէպ 'ի ծով երկնցը-
նելուն պէս , մէկէն ջրերը քովէ քով եկան ,
ու Փարաւոն բոլոր իր զօրքովը մէջը խեղ-
դուեցան :

Ը . Իսրայելացիք կարմիր ծովէն անցնե-
լէն ետեւ ո՛ւր եկան :

Պ . Իսրայելացիք կարմիր ծովէն անցնե-
լէն ետեւ , Աւետեաց երկիրն երթալու համար
հարկադրեցան անապատներէ անցնիլ , որոնց
մէջ ուտելիքի ու խմելիքի պակասութիւն ըլլա-
լով Աստուած զարմանալի եղանակաւ ջուր
կուտար , եւ երկնքէն համեղաճաշակ մանանան
տեղացուց : Այս մանանան , քանի որ Իսրա-
յելացիք անապատներու մէջ էին , ամէն օր
կիչնար , զորն որ արեւը չճաղած պէտք էին

Ժողովել, որովհետեւ անկէց կը հալէր, նոյն-
պէս երկրորդ օրուան համար շէին կրնար պա-
հել, որովհետեւ կը նեխէր (կը հոտէր) :

Հ. Իսրայելացիք Սմաղեկացւոց ի՞նչպէս
յաղթեցին :

Պ. Իսրայելացիք Սին անապատն եղած
ատեն, Սմաղեկացիք իրենց վրայ եկան, եւ
չատ մաս ալ ըրին : Մովսէս զՅեսուն քանի
մ'ընտիր մարդիկներով Սմաղեկացւոց դիմացը
խրկեց : Ինքն ալ Սհարոնին ու Ովրին հետ
բլուր մ'ելաւ : Հոն ձեռուրներն երկինք վեր-
ցուցած Աստուծոյ աղօթելու ժամանակ Իս-
րայելացիք կը յաղթէին, իսկ վար իջեցուցած
ատեն Սմաղեկացիք : Այս տեսնելով Սհարոն
ու Ովր անոր թեւերուն տակ մտան կեցան
մինչեւ որ Սմաղեկացիք բոլորովին շարդուե-
ցան :

Հ. Իսրայելացիք Սինա անապատն ե՞րբ
եկան, եւ հոն ի՞նչ պատահեցաւ :

Պ. Իսրայելացիք Եգիպտոսէն ելնելէն ե-
րբ ամիս ետքը՝ Սինա անապատն եկան եւ
մէկ տարուան չափ Սինա լեռան դիմացը բա-
նակեցան, եւ Աստուած նոյն լեռան վրայէն

ամպերուն մէջէն իրենց տաար պատուերները
տուաւ : Ետքէն զՄովսէս լերան վրայ իրեն
կանչելով 40 օրուան մէջ Աստուածային պաշ-
տամանց կարգն իրեն սորվեցուց , եւ տամնա-
բանեայ պատուերներն երկու քարեղէն տախ-
տակի վրայ դրած տուաւ :

Հ . Իսրայելացիք ի՞նչու հորթ պաշտեցին :

Պ . Իսրայելացիք երբոր տեսան որ Մով-
սէս լեռնէն կ'իջնար , Ահարոնին աղաչեցին որ
Աստուած մը շինէ որ իրենց առաջնորդէ : Ա-
հարոն իրենց կամացը զիջաւ , իրենց ոսկեղէն
զարդերը բերել տուաւ , եւ անոնցմէ ոսկիէ
հորթ մը ձուլեց . զորն որ սկսան պաշտել :
Մովսէս երկու քարեղէն տախտակները ձեռ-
քը լեռնէն իջած ասեն՝ երբոր հորթը տեսաւ
բարկութեամբ ձեռքի քարերը գետին զարկաւ
խորտակեց . Ահարոնը յանդիմանելէն ետեւ ,
Ղեւեայ ցեղը քովը թողվեց եւ Աստուծոյ
կողմանէ հրամայեց որ ամէնքն ալ սրէ ան-
ցընեն . այսպէս նոյն օրը 3,000 հոգւոյ չափ
մեռցուցին , իսկ հորթը փշրեց եւ ջրի մէջ
խառնելով թողովրդեան խմցուց : Վերջը Մով-
սէս նորէն լեռը դնաց եւ քառասուն օր կե-

ցաւ, հոն զՊատուած տեաներով ժողովրդեան՝
 հետ հաշտեցուց եւ երեսներն այնպէս փառա-
 ւորեցան որ ոչ ոք կարող էր երեսը նայիլ. այ-
 նուհետեւ սկսաւ միշտ երեսը քողով ծածկել
 եւ դարձեալ երկու քարեղէն տախտակն ա-
 ղաւ եւ տասնարանեայ պատուիրանքը գրեց:

Հ. Իսրայելացիք Սինա անապատէն ուր
 դացին, եւ ի՞նչ բաներ պատահեցան:

Պ. Իսրայելացիք Սինա անապատէն դէպ
 ՚ի Փառանու անապատը ճամբայ ելան: Երեք
 օր քալելով յողնեցան եւ Աստուծոյ դէմ տրո-
 տնջեցին: Աստուած ալ հուր բորբոքելով
 բանակին մէկ մասը այրեց: Այս պատժէն չը-
 խրատուելով ժողովուրդը դարձեալ միա ու-
 տելու բաղձանօք տրտնջեցին. Աստուած իրենց
 բաղձանքը կատարեց, անհամար բաղնուծեամբ
 լորամարդի (պըլտըրճին): տեղացուց զորանք
 ապխտեցին եւ կերան. բայց միտը գետ բե-
 րաննին էր. Աստուծոյ պատիժը անոնց վրայ
 հասաւ եւ հաղարաւոր մարդիկ մեռան:

Հ. Փարանու անապատը Մովսէս ինչ
 ըրաւ:

Պ. Երբոր Ասերովթէն Փառանու անա-



պատան հասան, Մովսէս Աստուծոյ հրամանաւ ը-
 տաներկու ցեղին մէջէն մէյ մէկ հոգի ընտ-
 րելով Քանանացւոյ երկիրը քանտելու խրկեց
 որոնց մէջն էին Քաղէք ու Յեսու: Արտեա-
 ները քարասուն օրէն դարձան, եւ նոյն երկ-
 րին վրայ շատ չափազանց բաներ պատմելով
 ժողովուրդը վախցուցին, որով ապատամբեցան
 ու կուղէին ուրիշ առաջնորդ մ'ընտրելով Ն-
 դիպատս դառնալ: Աստուած իրենց բարկա-
 նալով կուղէր դերենք շնջել, բայց Մովսէսի
 աղաչանացը համար ներեց, միայն թէ պատիժ
 տուաւ որ անոնց ճամբորդութիւնը քառասուն
 տարի տեւէ, եւ քսան տարւոյնէ վեր եզոյ-
 ները Աւետեաց երկիրը չկարենան մտնել, Յե-
 սուն ու Քաղերը դուրս հանելով, որոնք յԱս-
 տուած վատահայած ժողովուրդը յառաջ եր-
 թալու կը յորդորէին:

Հ. Իսրայելացիք քառասուն տարի թա-
 փառելէն վերջը ո՞ւր եկան եւ ի՞նչ բաներ պա-
 տահեցան:

Պ. Իսրայելացիք քարասուն տարի թա-
 փառելէն ետեւ վերջի տարին Սին անապատը
 կաղէս եկան բանակեցան: Հոս ժողովուր-

դը՛ ջրոյ պակասութեան համար , Մովսէսի ու
 Ահարոնի դէմ արանջեց : Անոնք Աստուծոյ
 դիմեցին եւ անոր հրամայելովն՝ ապառաժ քա-
 թէն շուր բխեցուցին , բայց իրենք ալ երկմը-
 տելնուն համար՝ Աւետեաց երկիրը չմտնելու
 պատիժն ընդունեցան : Այս ատենները Եգիպտոս
 թագաւորը՝ Իսրայելացոց իր երկրէն անցնե-
 լու թող չտուաւ ու զօրքով անոնց վրան եկաւ .
 Իսրայելացիք Հովր լեւը փախան , որուն վրայ
 Ահարոն 123 տարւան մեռաւ : Նոյնպէս Ա-
 ղադադ Քանանացոց թագաւորը Իսրայելա-
 ցոց իր երկիրներուն մօտենալը տեսնելով , զօր-
 քով վրանին եկաւ , բայց Իսրայելացիք անոնց
 չաղթեցին : Իսրայելացիք Կարմիր ծովուն մօ-
 տերը դառնալով , ճամբու աշխատութենէն
 յոգնած սկսան Մովսէսի եւ Աստուծոյ դէմ
 արանջել : Աստուած իրենց բարկանալով վը-
 րանին թիւնաւոր օձեր խրկեց , որոնք զիրենք
 խայթելով կսպաննէին : Մովսէս նորէն Աս-
 տուծոյ դիմեց եւ անոր հրամանաւր պղնձէ օձ
 մը ձուլեց ու կանգնեց , որուն նայելով կը
 բժշկուէին :

Հ . Իսրայելացիք Կարմիր ծովուն քովերէն

ա՛ւր գային և ուրիշ ո՛ր թագաւորնեւոն
յաղթեցին :

Պարայեւացիք Կարմիր ծովուն մօտերէն
եւո դարձան , և Մովսէսացեաց երկրին սահ-
մանները հասան , և սկսան Քանանացեաց
երկրին կամաց կամաց տիրել : Նախ Ամովհ-
րացեաց Սեհու թագաւորին՝ ու Բասանու Ուզ-
թագաւորին պատերազմաւ յաղթեցին , իրենց
երկրէն անցնելու թող չտալնուն համար : Աս-
կից ետքը Մովսէսացեաց երկրին կողմերը , Ե-
րիզովին դիմացը բանակեցան : Բաղաք Մո-
վսէսացեաց թագաւորը Կարայեւացեացմէ վախ-
նալով Բաղաամ մարդարէն կանչեց որ գոյ
Կարայեւացիներն անիծէ . Բաղաամ էլ հեծաւ
ու ճամբայ ելաւ . բայց ճամբան նեղ այգիներ-
ում մէջ աներեւոյթ հրեշտակ մը դիմացն ել-
նելով էջը կեցաւ . և երբոր Բաղաամ՝ որն
որ հրեշտակը չէր տեսներ և իշուն չարացաւ
կը զարնէր , այն ատեն էջը իրեն հետ քան-
քտանելով սկսաւ խօսիլ ևւ աչքը բացուելով
հրեշտակը տեսաւ , որն որ զինքն յանդիմա-
նեց , ու բաւ որ երթայ՝ բայց ինչ որ ըսէ ին-
քեն : Ասաւ ա՛ն այն խօսի : Այսպէս Բաղաամ

իր կամայք գէժ ժողովուրդն օրհնելով Բա-
ղակ զինքը վնասեց: Բաղաամ գացած ասուն
Բաղակին խորհուրդ տուաւ որ Խարայեւացւոց
բանակին մօտ Բելփեղովք շատուծոյն պա-
տուոյն տօն կատարէ, եւ այսպէս Խարայեւա-
ցիք կռապաշտութեան մէջ կկոխան եւ իրենց
Աստուածը կը բարկացընեն, եւ իր ձեռքը
կը մամնուին, Իրօք ալ Բաղաամին այս անօ-
րէն խորհուրդը յաջողեցաւ: Շատերը անտա-
կութիւն ու կռապաշտութիւն ընելու սկսան,
Աստուծոյ բարկութիւնն ալ անոնց վրան հա-
սաւ, ու հիւանդութեամբ եւ սրով մեռնող-
ներուն թիւը 24,000ի հասաւ:

4

ՅԵՍՈՒ

Հ. Երբոր Խարայեւացիք Աւերտեաց երկ-
րին դիմացն հասան Մովսէս իր տեղը զո՞վ ա-
ռաջնորդ ընտրեց, եւ ինք ո՞ւր եւ ի՞նչպէս
մեռաւ:

Պ. Մովսէս իր տեղը Յեսուն Խարայեւա-

յւոյ առաջնորդ գրաւ , եւ զիրենք Աստուծոյ
 հաւատարիմ մնալու յորդորելէն ետքը՝ Նա-
 քաւ լեռն ելաւ եւ անկէց բոլոր ժողովուրդն
 օրհնելէն ու Աւետեաց երկիրը աեմնելէն ետ-
 քը 120 տարւան մեռաւ , հրեշտակները անոր
 մարմինը մինչեւ ցայսօրս անձանօթ գերեզման
 մը թաղեցին :

Հ . Յետու ի՞նչպէս Իսրայելացիք Յորդա-
 նան գետէն անցուց :

Պ . Յետու տապանակը ժողովրդեան ա-
 ռաջէն տանել տուաւ , եւ երբոր քահանայք
 դետին մէջ իրենց ոտքը կօխեցին , ջրերը ճեղ-
 քուեցան ու ժողովուրդը մէջէն դիմացի կող-
 մըն Աւետեաց երկիրն անցան :

Հ . Երիբով քաղաքն ի՞նչպէս առնուեցաւ :

Պ . Յորդանանէն անցնելէն վերջը Իսրա-
 յելացիք Երիբով հասան , եւ Աստուծոյ հը-
 րամանաւն եօթն օր տապանակը մէկտեղ
 քաղաքին բոլորաիքը դառնալով երբ որ եօթ-
 ներորդ օրը եօթն անգամ փողերնին հնչեցու-
 ցին , քաղքին ամուր պատերը՝ ժողովրդեան
 աղաղակէն ու փողերուն ձայնէն ինք իրմէ
 կարծանեցան եւ անով քաղաքն առնուեցաւ :

Զ. Յետև Ազոնիբեզեկ թագաւորին յարձակման ի նշպէս գէմ դրաւ :

Պ. Երբոր Իսրայելացիք մէկիկ մէկիկ քաղաքներն առնելու սկսան, Գաբաւոնացիք անոնց հետ բարեկամ եղած էին, բայց Ազոնիբեզեկ թագաւորն ուրիշ չորս թագաւորներու հետ միանալով Գաբաւոնի քով եկաւ բանակեցաւ : Գաբաւոնացիք Յետուայ դիմեցին Յետու հինգ թագաւորներուն վրայ յարձակեցաւ . Աստուած ալ թշնամեաց վրայ քարէ կարկուտ տեղացնելով շատ մարդ մեռցուց : Յետու տեսնելով որ օրը կարճ կ'ուզայ, վախցաւ ոք պիտի չկրնայ թշնամին կատարեալ յաղթել, Աստուծոյ աղօթելով արեւուն եւ լուսնին հըրամացեց որ կենան, եւ այսպէս օրն երկննալով Յետու կրցաւ թշնամիներն աղէկ մը շարդել : Այսուհետեւ Յետու մնացած երկիրներուն ալ տիրեց, ու բոլոր երկիրք տասներկու ցեղերու բաժնելէն վերջը իւր ժերութեամբ վախճանեցաւ :

ԳՈՒՈՅԻԷԼ, ԱԻՈՎԴ, ԳԵԲՈՎՐԱ ՈՒ ԲԱԲԱԿ :

Հ. Յեառայ մեռնելն վերջը ո՞վ եղաւ
Խառաջնորդ Խորայելացւոց :

Պ. Խել մը տարի ժողովրդեան մէջէն ծե-
րագ ոյններն և երեւելիները առաջնորդութիւն
կրնէին եւ պատերազմ կը յարուցանէին : Այս
ատեններս Քաղէբի առաջնորդութեամբ Յու-
դայի ցեղը Նմաւոնի ցեղին հետ միանալով
Քանանացւոց և Փերեզացւոց վրայ դիմեցին,
և մեծ ջարդ տալով յազթեցին. իրենց Աթո-
նիբեղեկ թագաւորն ալ բռնեցին ձեռքի և ոտ-
քի մատուրներուն ծայրերը կտրեցին : Այսու-
հետեւ Խորայելացիք հետզհետէ զանազան
քաղաքներ կէս մ'առին, կէս մ'ալ հարկատու
լին : Այսպէս յաջողութեամբ յառաջ կ'եր-
թային, քանի որ իրենց նախնեաց կրօնին մէջ
հաւատարիմ կը մնային. բայց երբ որ իրենք
Աստուծմէ հեռացան Աստուած ալ իրենցմէ
հեռացաւ, եւ զիրենք Միջագետի Քուսար-
ասթէմ թագաւորին ձեռքը մատնեց, մինչեւ

որ ապաշխարեցին եւ առ Աստուած դարցան :
Այն ատեն Գողոնիէլ Յուդայի ցեղէն , անոր
դէմ դատերազմի ելնելով զինքը մեռցուց ու
Խորայեւացիքն անոր ձեռքէն ազատեց : Գո-
ղոնիէլ քորասուն տարի դատաւորութիւն ը-
նելէն ետեւ մեռաւ :

Ը . Գողոնիէլին ո՞վ յաջորդեց :

Պ . Գողոնիէլին յաջորդեց Աւովգ , որն
որ Խորայեւացիքը Մովաբացւոց Եզդոմ թա-
ղաւորին ձեռքէն ազատեց , եւ ութսուն տա-
րի դատաւորութիւն ըրաւ : Ասոր մեռնելէն
վերջը Փղշտացիք Խորայեւացւոց վրայ յարձա-
կեցան . ըայց Սամեդար , որն որ Կարիճ մարդ-
մըն էր , դիմացնին ելաւ եւ աբորի մաճով ա-
նոնցմէ 600 հոգի ապանեց :

Ը . Խորայեւացիքը Յաբին թաղաւորին
ձեռքէն ո՞վ ազատեց :

Պ . Խորայեւացիք երբոր իրենց կռապաշ-
տութեան համար Քանանացւոց Յաբին թա-
ղաւորին ձեռքը մատնուեցան , եւ դարձեալ
զղջալով Աստուծոյ դիմեցին , Աստուած իրենց
Քերտվրա կին մարդարէն խրկեց , որն որ յորդո-
րեց Բարակը Յաբին թաղաւորին Միսարա զօրա-

վարին հետ պատերազմելու որ դնաց յաղթեց.
 ու Մատթա փախած ատեն հանդչելու համար
 ասուն մը մտաւ, ու հոն Յայէլ տան տիկինը
 քնայած ատեն, վրանի ցիցով անոր գլուխը
 դեռինը դամեց ու սպաննեց, ասով Իսրայել-
 լայիք գերութենէ ազատեցան: Բայց շատ
 շանցաւ նորէն մեղանչելով Մադիանացւոց ձեռ-
 քըն ինկան:

6

ԳԵԴԵՈՆ ԵՒ ԱՆՈՐ ՅԱԶՈՐԴԸ ՄԻՆՉԵՒ ՍԱՄՍՈՆ

Ը. Գեդէոն ի՞նչպէս Իսրայելացւոց դա-
 տաւոր եղաւ. ու Մադիանացւոց ի՞նչպէս
 յաղթեց:

Պ. Երբոր Իսրայելացիք Մադիանացւոց
 ձեռքէն քաշած նեղութիւններէն խրատուելով
 զզջացին և Աստուծոյ դիմեցին, Աստուած ի-
 րենց Գեդէոնը խըկեց, որ զօրաւոր բանակ մը
 կազմեց: Բայց Աստուած Գեդէոնին զօրքն
 անհամեմատ քիչցուց, որպէս զի Իսրայելացիք

ետքեն չըսեն որ Մենք մեր դորութեամբ աւ
 դասեցանք, ուստի Գեղեցունին հրամայեց որ
 զօրքը ջուր խմելու տեղ մը տանի, եւ շան
 սէս լափողները հեան առնէ, որ 300 հոգի
 էին, եւ առանց դէնքի, մինակ մէկ ձեռ
 քերնին փող ու մէկալ ձեռքերնին ալ պարտապ
 սափոր ըլլայ մէջը վառած ջահով: Գեղեցուն
 այս ամէն բանը կատարեց ու կէս գիշերանց
 ամէնն ալ փողերնին սկսան հնչեցընել, սափոր
 ները դետինը զարնելով կոտրել ու կանչել
 «Սուր Տեառն եւ Գեղեցունի», Սասլ Մադիա
 նացւոց վրայ անանկ վախ մ'ի՛նկաւ, որ շփո
 թելով սկսան իրար կոտրել եւ փախչիլ:

7

ԱՔԻՄԵԼԷՔ ՈՒ ՅԵՓԹԱՅԷ

Հ. Աքիմէլէք ո՞վ էր եւ ի՞նչ ըրաւ:

Պ. Աքիմէլէք Գեղեցունի որդին էր, հօրը
 մեռնելէն ետքը ինք ղինք դատար որ անուա
 նեց: Եւ դատարութեան մէջ ապահով ըլ

լայու համար իր եօթանասուն եղբայրքն ըս-
 պաննեց : Մինակ Յովաթամ անոնց ամենէն
 պղտիկ եղբայրը պահուըտելով աղատեցաւ :
 Եայց ինքն ալ իր պատիժը դտաւ . որովհետեւ
 քանի մը տարի դատաւորութիւն ընելէն վերջը
 երբոր Թերէս քաղաքը պաշարեց ու ամուր
 բերդի մը կրակ կ'ուտար, վերէն կ'ին մը վրան
 երկաթի կտոր մը նետելով գլուխը շախջախեց :

Հ . Աբխելեքէն վերջը ո՞վ եղաւ դատա-
 ւոր :

Պ . Աբխելեքէն վերջը Թովղա ու Յայիր
 դատաւորներն եկան : Ասոնց ատենը Իսրայել-
 լացիք Ամոնացւոց ու Փղշտացւոց ձեռքը մատ-
 նուեցան :

Հ . Իսրայելացիքը Ամոնացւոց ձեռքէն
 ո՞վ աղատեց :

Պ . Իսրայելացիքը Ամոնացւոց ձեռքէն ա-
 ղատեց Յեփթայէ յաջորդ դատաւորը : Ասիկա
 թշնամեաց դէմ պատերազմ եղած ատեն ,
 Աստուծոյ ուխտ ըրաւ , որ յաղթութենէ ետ-
 յը առջի դիմացն ելլողն իրեն դռնէ : Յաղթու-
 թեամբ իր քաղաքը դարձած ատեն մէկէն
 իր մէկհատիկ սիրելի աղջիկը դիմացն ելաւ ,

որն որ անոր յաղթութիւնը կը շնորհաւորէր :
Յեղիթայէ շատ ցաւեցաւ , բայց ուխտը կա-
տարեց :

Տ

ՍԱՄՓՍՈՆ • ՀԵՂԻ • ԵՒ ՍԱՄՈՒԷԼ

ՍԱՄՓՍՈՆ

Ը . Խորայեւոյիք Փղշտացւոց ճեռքէն
ն'իլ աղատեց :

Պ . Խորայեւոյիք Փղշտացւոց ճեռքէն
աղատեց Սամիսոն՝ որն որ (Նաղովրեցի) ուխ-
տաւոր Սատուծոց էր , գլխուն մաղերը կտրելն
դինի ու օղի խմելն իրեն արդիւումս էր :

Ը . Սամիսոն ի՞նչպէս յաղթեց Փղշտա-
ցւոց :

Պ . Սամիսոն Փղշտացւոց յաղթեց անոնց
զանազան մուսներ հասցրնելով : Ա . անդամ
մը Փղշտացւոց բարկանալով 300 աղուէս բրա-
նեց , երկ'երկու հատ սուշերնէն իրարու կա-
պեց ու մէջտեղը վառուած ջահեր հաստատած-

Փղշտացւոց ցորենի արտերուն մէջ թողուց
 որով անոնց կարած ցորենի հասկերը մինչեւ
 նաեւ իրենց այգիներն ու ձիթենիները այգե-
 ցանն ու մսխիր դարձան : Բ . Փղշտացիք այս
 բանիս ոխն առնելու համար , Սամիսոնը ձեռք
 ձգել կուզէին , Յուդայի ցեղը թշնամիէն վախ-
 նալով Սամիսոնը բռնեցին հասար չուաններով
 կապեցին եւ անոնց խրկեցին : Բայց Սամիսոն
 երբ Փղշտացւոց առջեւն եկաւ մէկէն չուանները
 փրցուց , եւ հոն իշու ծնօտ մը դանելով ա-
 նով 1,000 մարդ սպաննեց : Գ . Անդամ մ'այ
 Փղշտացւոց Բաղա քաղաքը դանուելով , տե-
 ղացիք քաղքին դրան քով մարդ սպասեցուցին ,
 որ դորս ելած ատեն ղինքը բռնեն մեռցնեն :
 Բայց Սամիսոն կէսգիշերուն ելաւ քաղքին դու-
 ար սեմովն ու նիգամը տեղէն հանեց կռնակը
 դարկաւ , տասը ժամ հեռու լերան մը գլուխը
 ձգեց գնաց :

Հ . Փղշտացիք կրցա՞ն վերջապէս Սամի-
 սոնը ձեռք ձգել :

Պ . Ձեռք ձգեցին , վասն զի մեծ պար-
 գեւներ խոստացան իր Բաղիլա կնօջը որ խմա-
 նայ թէ զօրութիւնը ս'ւսկից է , անի ալ աղա-

չելով և լալով վերջապէս յաջողեցաւ դադարեցի-
քը մազերուն վրայ ըլլալը տեղեկանալ . ուստի
որ մը Սամիսոնի քնացած ատեն մազերը կըտ-
րեց որ ոյժը հասնելով թշնամիք եկան զինքը
բռնեցին և երկու աչքը փորելով շղթայի զար-
կին և ալիւր աղալ կուտային :

Հ . Սամիսոն ի՞նչպէս մեռաւ :

Պ . Անդամ մը Փղշապուռոյ նախարարնե-
րը ժողովուրդան ատն մը կատարելու համար և
Սամիսոնն ալ բերել տուին , որ անով զուար-
հանան , եւ երբոր սկսան զինքը ծաղր բնել ,
Սամիսոն Ասաու ծմէ իր յառաջուան զօրու-
թիւնը խնդրելով շէնքին երկու սիւները գրը-
կեց , այնպէս մը թօթուեց , որ սունը փլա-
ու մէջ զիններով միատեղ ինքն ալ մեռաւ :

ՀԵՂԻ ԵՒ ՍԱՄՈՒԵԼ

Հ . Ո՞վ էր Հեղի :

Պ . Հեղի թէ՛ քահանայապետ և թէ՛
դատար որ էր Սամիսոնէն վերջը , իր երկու որ-

դիքն Ափնի ու Փենեհէս քահանայ էին . բայց
չատ անկարգութիւնք կրնէին , իսկ Հեղի այս
բաներս տեսնելով ալ զիրենք շէր պատժեր :

Հ . Հեղի ասոր համար ի նշպէս պատ-
ժուեցաւ :

Պ . Անգամ մը երբոր Իսրայելացիք դար-
ձեալ Փղշտացւոց հետ պատերազմ ունեցան ,
եւ շատ մարդ կորսնցուցին , նորէն չյաղթուե-
լու մտօք տապանակը բանակ բերել տուին :
Սակայն 30,000 հողի կորսնցընելով նորէն յաղ-
թուեցան ու տապանակն ալ թշնամեաց ձեռ-
քըն ինկաւ : Ափնի ու Փենեհէս մեռան եւ
նոյն իսկ Հեղի այս բաներուս բօթն (դէշլուրը)
տեսնելով յանկարծ աթոռէն ինկաւ ու վախ-
ճանեցաւ :

Հ . Հեղիէն ետքը ժողովուրդն ո՛վ կը
կառավարէր :

Պ . Սամուէլ ասորք մարդարէն՝ ասի ժո-
ղովուրդը Աստուծոյ հետ հաշտեցընելու հե-
տեւեցաւ , ուստի եւ ժողովուրդը Սասեփամթ
ժողովեց ու հոն Աստուծոյ հաշտութեան զոհ
մատոյց , բոլոր ժողովուրդը իրենց բրածնեբուն
վրայ զըղջացին ու Աստուծմէ թողութիւն ինդ-

ընցին : Փղշապիք ասոնց ժողովուրդը յարմար
առիթ սեպեղով վրանին յարձակեցան . բայց
Սամուէլ Աստուծոյ ողջակէզ մատոյց , Աստուած
որտաքու ճայեով մը անոնց մէջ շփոթութիւն
ձգելով դիրենք փախչելու ստիպեց :

Հ . Փղշապիք դերի առած տապանակն
ի՞նչ ըրին :

Պ . Ես խրկելու ստիպուեցան : ինչու որ
Աստուած անոնց վրայ չարաչար հարուածներ
խրկեց . անոր համար զանիկա բարբոսին նոր
կառքի մը վրայ դրին ու երկու երկնջ լծե-
ցին . եւ թող սուին որ երթան : Ասնք ճամ-
բայ ելնելով շիտակ Տեթաամիւս եկան : Տե-
ղապիք տապանակին դալք տեսնելով շատ ու-
րախացան . բայց այս ուրախութիւնը շուտ մը
տրամուծեան փոխուեցաւ , երբոր ժողովրդէն
50,000 հողի ինկան մեռան , հետաքրքրու-
թեամբ , օրինաց դէմ՝ տապանակին անձամ-
կոյթ նայելուն համար :


Հ . Ի՞նչու թագաւոր ուղեցին Խարայելո-
ցիք . եւ ո՞վ եղաւ առաջին թագաւորը :

Պ . Սամուէլի ծերութեան՝ ասե՛ն իր եր-
կու սրդիքը դատաւորութիւն ընելով ժողո-

վարդը շատ բռնութիւններով կը նեղէին , ա-
 նոր համար Իսրայելացիք ալ Սամուէլէն թա-
 քաւոր ուղեցին : Սամուէլ թէպէտեւ 'ի սկզբանս
 ընդդիմացաւ , բայց Ասաուծոյ խորհուրդ հար-
 ցընելէն վերջը , իրենց խնդիրքն ընդունեցաւ ,
 եւ Սաւուղը թաղաւոր օժեց , երբոր անիկա
 իր Ախա հօրը կորսուած էշերուն ո՞ւր ըլլալն ի-
 րեն հարցընելու եկած էր :

ՄԱՍՆ Ե

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԷՆ
 ԻՆՉՈՒՆ ԲԱԲԷԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ



1

ՍԱԻՌԷ

Հ . Սաւուղին առջի գործքն ի՞նչ եղաւ :

Պ . Սաւուղին առջի գործքն եղաւ Աս-

դեասիւնը թշնամիներէն ազատել , որոնք եր-

կիրք կ'աւերէին : Աւստի նախ Ամենայնոց յաղ-
թելով իր երկրէն վռնանց , որով համարում
ստացաւ , եւ առհասարակ ամենէն ընդունուե-
ցաւ : Ետքէն Փղշտացոց գէմ ելաւ , որոնք
Հրէաստանի մէջ բոլոր դարբնոցները վերցու-
ցած էին , որպէս զի Հրեայք չկարենան գէնք
չինել : Սաւուղ երկրագործութեան գործիք-
ներով անոնց վրայ դնաց . եւ իր որդւոյն Յով-
նաթանին քաջութեամբն անոնց սասաիկ ջարդ-
մը տալով բոլորովին հալածեց : Նոյն յաջո-
ղութիւնը ունեցաւ միւս թշնամեաց գէմ ալ :

Զ . Ամաղեկացոց գէմ ի՞նչու պատե-
րազմ բացաւ :

Պ . Արտիճեանեւ անոնք յառաջուց Իսրայ-
լեւացոց շատ նեղութիւններ հասուցած էին :
Աւստի Աստուած Սամուէլ մարգարէին ձեռքովը
Սաւուղայ պատուիրեց որ Ամաղեկացոց վրայ
երթայ , բոլոր Ամաղեկացիք իրենց անասուն-
ներովը ջարդէ , մէկը ողջ չձգէ : Սաւուղ գը-
նաց յաղթեց , բայց Աստուծոյ հրամանին գէմ
անոնց Ագագ թագաւորն ու կենդանիներուն
ամենէն աղէկները զատեց առաւ , Աստուծոյ
զոհ մատուցանելու համար :

Հ. Աստուած այս անհնազանդ թագաւոր
ինն ի՞նչ ըրաւ :

Պ. Երեսէ ձգեց, ու Սամուէլը Սաւուղին
խրկեց խնայրնելու համար : Սամուէլ դնաց
ու Հնազանդութիւնը զոհէն աւելի հաճոյ է
Աստուծոյ ըսաւ, ասոր համար ալ Աստուած
զքեղ երեսէ ձգեց, եւ քու տեղդ հնազանդ
թագաւոր մը պիտի դնէ : Ասկից վերջը Սա-
մուէլ զՍ.դագ առջեւը բերել տալով իր ձեռ-
քովը զՍ.դագ մեռցուց :

Հ. Աստուած Սաւուղայ տեղ զո՞վ թա-
գաւոր դրաւ :

Պ. Յէսսէին կրտսեր որդին Գաւիթը թա-
գաւոր դրաւ, որ Սամուէլ Բէթղեհէմի մէջ
Սաւուղէն դադանի օժեց, քան տարեկան
պատանեկութեան ըօրաւոր հասակին մէջ :

Հ. Գաւիթի օժուելէն վերջը Սաւուղայ վի-
ճակն ի՞նչպէս եղաւ :

Պ. Գաւիթ թագաւոր օժուելուն պէս
Աստուծոյ Հոգին Սաւուղէն ելաւ՝ Գաւիթի վը-
րաց եկաւ. իսկ սատանան զՍաւուղ միշտ կը
տանչէր : Ասոր դարման մը գտնել ուղերով
Սաւուղայ քնար գարնապէ մը մնաւեցին, եւ

դասան զԴաւիթ, որն որ իր ու քնարին գե-
ղեցիկ ձայնովն անոր սրտին ներդաւթիւնը կը
փարատէր, ասով միանգամայն անոր սիրելի
ալ եղաւ :

Հ. Ո՞վ էր Գողիաթ. զինքն ո՞վ սպանե-
նեց եւ ի՞նչպէս :

Պ. Փղշաացիք նորէն Խորայեւացւոց դէմ
պատերազմի ելան : Փղշաացւոց մէջ Գողիաթ
անուամով հսկայ մէկը կար, որն որ ամէն օր
իր բանակէն դուրս կելնէր, եւ Խորայեւա-
ցւոցմէ մէկը կը հրաւիրէր կռուելու, բայց
ոչ ոք կը համարձակէր : Միայն Դաւիթ այս
հրաւերը յանձն առաւ, եւ թագաւորին հը-
րամանաւը՝ դաւադանն ու պարսատիկը հինգ
քարով հետն առած հսկային դիմացն ելաւ,
ու պարսատիկով քարը գլխուն նետելուն պէ՞
Գողիաթ գետինը փռուեցաւ : Դաւիթ անմի-
ջապէս անոր սուրը քաշեց, գլուխը կտրեց ա-
ռաւ, եւ թշնամին յաղթուեցաւ :

Հ. Սաւուղ զԴաւիթ ի՞նչու կ'հալածէր :

Պ. Սաւուղ տեսնելով որ Դաւիթ իր դիւ-
ցազնական գործքերովն ամենէն կը մեծարուի,
աւիթ կը փնտռէր զԴաւիթ մեռցնելու : Ան-

դամ մը երբ որ չար հողին նեղուած ասեմ
Դաւիթ առջեւը քնար կը զարնէր, Սաւուդ
ձեռքի դեղարդը վրան նետեց. բայց բախտով
Դաւիթ կրցաւ խոյս տալ եւ ձեռքէն փախչիլ:
Աւրիշ որոգայթ մ'ալ լարեց. խոստացաւ Դաւ-
թին որ իր աղջիկը կնութեան կուտայ թէ որ
հարիւր Փղշտացի մեռցնէ, յուսալով որ այս
առթով Դաւիթ կը մեռնի: Դաւիթ խնդիրքը
կատարեց ու երկու հարիւր Փղշտացի մեռցը-
նելով Սաւուդայ Մեղքող աղջիկը կին առաւ,
Դաւիթ երբ Սաւուդայ ձեռքէն իր տունը փա-
խած էր, Սաւուդ մարդ խրկեց որ գիշերանց
զինք բռնեն բերեն, որպէս զի առաւօտուն
ինք անձամբ ապաննէ: Իսկ Մեղքող հօրը
միտքն իմանալով զԴաւիթ պատուհանէն վար
իջեցուց փախցուց: Դաւիթ Սամուէլին քով
գնաց: Սաւուդ երբոր իմացաւ որ Դաւիթ
Սամուէլին քով գացեր է, մարդ խրկեց որ
զինքն առնուն դան. բայց անոնք մարդարէին
տունը մտնելուն պէս՝ Աստուծոյ հողին վրանին
գալով մարդարէանալու սկսան: Սաւուդ ան-
ձամբ ելաւ եկաւ. բայց Աստուծոյ Հողին իր
վրայ ալ գալով ինքն ալ մարդարէացաւ: Ան-

կից վերջը Սաւուղ շարունակ Բաւթի ետեւէն
խնկած զինքը մեռցնել կուզէր :

Բաւթի երբ որ անապատներու մէջ լեռ-
ներու ու դաշտերու վրայ կը թափառէր, Սա-
ուղ դունդմը մարդ խաւրեց ետեւէն որ զինք
դանեն ու բռնեն : Բայց այս ամէն բան պարասի
երաւ, վասն զի Սաոււած զԲաւթի կը պաշտ-
պանէր :

Հ. Բաւթի այս հաշտմանց ատեն ի՞նչ
ըրաւ :

Պ. Բաւթի այս հաշտմանց համբերեց
ու մեծանճնութեամբ ստարաւ, եւ միշտ փախ-
չելով կրցաւ ինք զինք պաշտպանել : Նախ
Սամուէլին քով գնաց, անկից ալ Չիփ անա-
պատը գնաց. Չիփ անապատէն դարձեալ փա-
խաւ, ու Նարաղէն գէշ, ու անոր կնոջ Աբիգ-
եայէն աղէկ ընդունելութիւն գտաւ : Վեր-
ջապէս ատենելով որ հայրենակիցներուն քով
ապահով պիտի չըլլայ, Գեթացուց Անքուս թա-
գաւորին գնաց, որն որ անոր Սիկեչակը սու-
փառ բնակելու համար : Բաւթի շատ եղանա-
նակաւ կրնար զՍաւուղ իր կենացը թշնամին
մեռցնել, բայց չմեռցուց. անգամ մ'երբ որ

Սաւուղ այրի մը մէջ պահուրած կը քնանար
յներս մտաւ եւ անոր զգեստին ծայրէն մինակ
կտրեց առաւ . ուրիշ անդամ մ'ալ Ս. բեսային
հետ գիշերը անոր վրանը մտաւ , ու մինակ գե-
ղարդն ու ջրոյ ամանն առաւ բանակէն դուրս
ելաւ : Ս. յաւ ամենայնիւ Սաւուղ զինքն հա-
լածելէն չդողբեցաւ :

Ը . Սաւուղ ի՞նչպէս մեռաւ :

Պ . Սաւուղ երբ որ Փղշտացւոյ հետ սաս-
տիկ պատերազմ կրնէր , թշնամիէն մահացու-
վէրք մ'առաւ , եւ թշնամիէն մեռած շե-
պուելու համար իր սրոյն վրայ ինկաւ ինք
զինք սպաննեց : Բաւիթ երբ Սաւուղայ մահը
յլսեց , շատ տրամեցաւ վրան լացաւ ու սուգ
բռնեց :

Գ Ա Ի Թ

Ը . Բաւսիթ ե՞րբ իր թագաւորութիւնը
սկսաւ :

Պ . Բաւսիթ Սաւուղայ մեռնելէն վերջը ,

Աստուծոյ հաւանութեամբ իրեննեւրովք Քեր-
 բան քաղաքն եկաւ, եւ հոն Յութայի ցեղը
 գինքը թագաւոր օծեց. իսկ միւս ցեղերը Սա-
 ւուղին Յեփուսթէ սրդին: Բայց երբոր եօթը
 կէս տարի ետքը Յեփուսթէ սպանուեցաւ, Գա-
 ւիթ բոլոր Իսրայելի՛ այսինքն տաս երկու ցե-
 ղերուն վրայ թագաւոր եղաւ:

Հ. Գաւիթ իբ կառավարութիւնը ի՞նչ-
 պէս սկսաւ:

Պ. Ետտ բերեպաշտութեամբ սկսաւ, իբ
 Աստուածապաշտութեան առաջին պատուին եղաւ.
 տապանակը մեծ հանդիսիւ Երուսաղէմ փո-
 խադրելը: Նոյն իսկ Գաւիթ տապանակին առ-
 ջեւէն կաքաւելով եւ խաղաչով կ'երթար շնոր-
 հակալութեան երդ երդելով:

Հ. Գաւիթ ի՞նչ պատերազմներ ըրաւ:

Պ. Գաւիթ բոլոր Իսրայելացւոց թագա-
 ւոր ճանչցուելուն երբորդ տարին, Սիօն լեռան
 վրայի ամրոցը բնակող Յերուսաղիմները պաշա-
 րելու գնաց, եւ անոնց յաղթեց ու ամրոյն
 ալ առաւ: Այնուհետեւ Փղշտացւոց վրայ քա-
 լեց ու յաղթեց. այս պատերազմին մէջ ծա-
 րուելով, երեք դորապետներ թշնամեաց բա-

նաև ը պատուելով զայն իրեն ջուր բերին ,
 բայց Բաւիթ չխմեց . հասցա Սատուծոյ նուխ-
 բեց , Իսրայելացիքը մնացած թշնամիներէն
 ալ ապահովացրնելու համար Մովաբացուոց , Ե-
 դոմայեցուոց , Սառոց ու Ամնացուոց դէմ պա-
 տերադմ բացաւ , եւ եօթը տարի շարունակ
 անոնց հետ կռուելէն վերջը Սատուծոյ օգնու-
 թեամբը զանոնք նուաճեց : Այսպէս անոնցմէ
 շատ ոսկի արծաթ ժողովեց ապագայ շինելու
 տաճարին համար :

Հ . Այս բարեպաշտ թագաւորը ի՞նչպիսի
 մեղաց մէջ ինկաւ :

Պ . Այս բարեպաշտ թագաւորը՝ Յովաբին Ա-
 մնացուոց Ռաբաթ քաղաքը պաշարած ատեն
 երուսաղէմ մնացած էր , եւ իր Ռւրիա զօրա-
 պետին կնոջը Բերսաբէին հետ մեղանչեց : Այս
 բանս գաղտնի պահելու համար Ռւրիան պա-
 տերազմին մէջ վտանգաւոր տեղ մը դնել առ-
 լով մեռցրնել տուաւ , եւ Բերսաբէն իրեն
 կին առաւ :

Հ . Բաւիթ ի՞նչպէս նորէն իրեն եկաւ :

Պ . Երբ որ Նաթան մարգարէն Սատու-
 ծոյ կողմանէ եկաւ , գողցուած ոչխարի առա-

կով մ'անոր երկու մեղացը մեծութիւնը առ-
աջը դրաւ , Բաւիթ ըրածը ճանչցաւ , սրտանց
Մեղայ ըսաւ , ու ապաշխարեց , եւ Սատուծմէ
Թողութիւն ուղեց , Կաթան , Սատուած մեղքդ
Թողուց , բայց մեղացդ պատիժը պիտի կրես
ըսաւ :

Հ . Որո՞նք էին պատիժները :

Պ . Ս . Բերսարէէն ունեցած զաւակը
մեռաւ , որուն կենացը համար Բաւիթ շատ
աղաչած ու լացած էր : Բ . Ամեն որդին Ա-
բիսողոմէն ապանուեցաւ . եւ Գ . Աբիսողոմ
հօրմէն ապստամբեցաւ :

Հ . Աբիսողոմ ի՞նչպէ՞ս հօրմէն ապստամբ
բեցաւ :

Պ . Աբիսողոմ հօրը թագաւորութեան աչք
անկերով բոլոր Ժողովրդեան սիրան իրեն գը-
րաւեց , ու զօրքով Երուսաղէմ թագաւորա-
կան քաղաքը մտաւ : Բաւիթ ստիպուեցաւ ի-
բեհններովը լալով ու բոկոտն Երուսաղեմէն
ելնել փախչիլ , Փախչելու ատեն Սաւուղի աղ-
գականներէն Սէմէի անուն մէկը դիմացն ել-
նելով սկսաւ զինքը նախատել ու վրան քար
նետել : Բաւիթ այս նախատինքը Սատուծուց

ձեռքէն եկած համարելով համբերեց :

Հ . Աբխաղոմ իր ապստամբութեամբ ի՞նչ վատարկեցաւ :

Պ . Երբոր Աբխաղոմ կը դանդաղէր , Դաւիթ զորք ժողովեց եւ Մանայիմի քով իր որդւոյն զօրացը հետ զարնուեցաւ . 20,000 հոգի մեռան . ու մնացածներն ալ ցիր ու ցան եղան , Աբխաղոմ ալ ջորիովն անտառի մէջէն փախած ատեն կաղնիի մը ճիւղերէն կախուեցաւ մնաց : Յովափ այս լսելուն պէս շուտ մը վազեց եւ երեք նետով սիրտէն զարկաւ : Աբխաղոմայ մահը Դաւիթի սրտին մեծ ցաւ պատճառեց , եւ լալէն չէր դադրեր :

Հ . Դաւիթ ուրիշ ի՞նչ մեղք գործեց եւ ի՞նչ պատիժ ընդունեցաւ :

Պ . Դաւիթ անապարժութեամբ ժողովուրդը համբել տուաւ , եւ Աստուած Դաւիթին և ժողովրդեան մեծամեծ յանցանքները պատժելու համար , Դաւիթ մարդարէին ձեռքով Դաւիթի ընտրել տուաւ կամ երեք տարի սով , կամ երեք օր մահ եւ կամ երեք ամիս իր թշնամիներուն ձեռքէն հալածուիլ : Դաւիթ մահն ընտրեց , եւ այսպէս երեք օրուան մէջ

70,000 հոգի մեռան :

Զ . Գաւիթ չմեռած , թաղաւորութիւնը սրբւ տուա :

Պ . Սողոմոնին տուա , որ տասներկու տարեկան էր : Եւ թէպէտ Սնդոնիա Գաւթի մեծ որդին հօրը ամբողջն բաղձալով իր կողմը Յովափն եւ շատ մարդ վաստրկած եւ ինք զինքը թաղաւոր անուանել տուած էր , բայց Սողոմոնն երկուքն ալ մեռցնել տուա : Իսկ Գաւթի իր թաղաւորութեան քառաներորդ տարին Եօթանասուն տարուան վախճանեցա :

3

ՅՈՂ ՈՄՈՆ

Զ . Սողոմոն իւր թաղաւորութիւնն ինչ պէս սկսա :

Պ . Սողոմոն իր թաղաւորութիւնն շատ յաջողութեամբ սկսա . որովհետեւ իմաստութիւնը , զորն որ հարատութենէ եւ պատուէն աւելի Աստուծակէ խնդրած էր , իրեն ամէն բանի մէջ կ'առաջնորդէր . թէպէտ հարստու

Թիւնն եւ փառքն ալ միշտ իր ետեւէն կ'երթային :

Հ . Սողոմոն իր խմատութիւնը ո՞ր առթի մէջ ցուցուց :

Պ . Սնդամ մը երկու կին առջեւը դատաստանի գալով մէկը կըսէր , որ երկուքնիս ալ մէկ տան մէջ զաւակ ծնանք . եւ այս կէնը գիշերը քունին մէջ զաւկին վրայ պառկելով մեռուցեր եւ եկեր խմինիս հետ փոխեր է : Մէկայն ալ ասոր հակառակ կը պնդէր որ ողջըն իմս է , մեռածը իրենն է : Սողոմոն տղուն ճշմարիտ մայրը ով ըլլայն ճանչնալու համար , հրամայեց որ տղան երկու կտոր ընեն . մէկ մասը մէկուն , միւս մասն ալ մէկային տան : Մէկ կինը ասի յանձն չառնելով Սողոմոն տղան անոր տուաւ , յայտնելով որ անի է տղուն ճշմարիտ մայրը :

Հ . Սողոմոնի անունն ի՞նչ բանով երեւեթի եղաւ :

Պ . Սողոմոնի անունը շատ երեւեթի եղաւ փառաւոր եւ մեծագործ տաճար մը շինելով , զորն որ իր Թագաւորութեան չորրորդ տարին ակառ եւ եօթը տարուան մէջ լմրնցաւ : Հա-

զարաւոր մարդիկ շէնքին վրայ կ'աշխատէին :
Ոսկի , արծաթ , պղինձ եւ երկաթ բանիւ գիւ-
ցող մարդիկը , Տիւրոսի Քիրամ թագաւորը
խրկած էր , Սողոմոնի խնդրելովը : Գարձեալ
մայր փայտն ալ Լիբանանէն կուգար :

Է . Աստուած հաճեցա՛ւ այս տաճարին
վրայ :

Պ . Եստ հաճեցաւ , եւ իր հաճութիւնը
ցուցուց զարմանալի նշանով մ'ալ երբոր տա-
ճարին նուիրման ատեն լուսաւոր ամպով մը
երևցաւ եւ բոլոր տաճարը լեցուց , եւ երկին-
քէն կրակ իջնալով մատուցուած ողջակէզն
այրեց : Տաճարին նուիրման ատըր եօթն օր տե-
ւեց , որուն մէջ 22,000 եզ եւ 120,000 ոչխար
զոհուեցան :

Ը . Սարայ թագուհին ի՞նչ բանէ շարժ-
եալ Երուսաղէմ եկաւ :

Պ . Սողոմոնի իմաստութեան , փատաւա-
րութեան համբաւէն շարժեալ , որն որ ամէն
կողմ տարածուած էր : Լսածնէն աչօք տես-
նելու եւ զանազան հարցումներով անոր իմաս-
տութիւնը քննելու համար , շատ բազմութեամբ
եւ հետը մեծ զանձ առած Երուսաղէմ եկաւ :

Եւ երբոր աստարին եւ թագաւորական պալա-
տին փառաւորութիւնն ու զարդերը, եւ զըլ-
խաւորաբար Սողոմոնին իմաստութիւնը իր հար-
ցումները լուծելուն մէջ երբ տեսաւ, զարմա-
ցաւ մեայ, եւ խոստովանեցաւ որ լսածները
հիմա անձամբ տեսածին եւ ո՛չ կէտն է եղեր:

Հ. Ս. յս բարեպաշտ^ն եւ իմաստուն թագա-
ւորը ո՞վ մարդոց:

Պ. Իր անկարգ սէրը, որ այն աստիճանի
հասցուց, ինչպէս իր երիտասարդութեան ա-
տեն ճշմարիտ Աստուծոյ մեծադործ տաճարը
շինեց, այնպէս ալ իր ծերութեան հասակին
մէջ Աստուծոյ հրամանին դէմ առած օտար-
ազգի կանանց սիրոյն համար չաստուածներու
մտհեաններ եւ խորաններ շինեց եւ երկրպա-
յութիւն ըրաւ:

Հ. Աստուած Սողոմոնին այս ըրածն ի՞նչ-
պէս պատժեց:

Պ. Աստուած Սողոմոնին ասկերախառու-
թեանը համար, չէ թէ միայն անոր թագա-
ւորութեան երկու բաժնուիլն, հասլա նաեւ
ներքին թշնամի մ'աւնենալիքն անոր իմացուց:
Ս. յս զաչիք շարեայ մտածմունքներէն, Սա-

դուման հողւով, արամութեամբ եւ անձկութեամբ, եւ նոյն իսկ իր զեղխութիւններէն պատճառած ներքին եւ արտաքին հիւանդութիւններով ծիրացաւ, եւ այսպէս վաթսուն տարուան մեռալ քառասուն տարի թաղաւորելէն վերջը :

Հ. Սողոմոնին մահուքնէ վերջը տէրութիւնը ինչ կերպարանք ունեցաւ :

Պ. Սողոմոնին Ռորովամ օրդին թաղաւոր պատկուած ատեն 10 ցեղերն իրմէ խընդրեցին, որ հարկերը թեթեցնէ, և երբ որ Ռորովամ ծերերուն խորհրդին հակառակ խիստ պատասխան մը տուաւ, անոնք ալ բարկացած զինք մերժեցին, և Նփրեմի ցեղէն Յերոբովամ իշխանն իրենց թաղաւոր գըրին : Ռորովամ զէնքով այս բաժանումը խափանել ուզեց, բայց փուճ տեղ : Իր քովը միայն Յուդայի ու Բենիամինի ցեղերը մնացին, որոնք Յուդայի թաղաւորութիւնը կազմեցին, իսկ միւս 10 ցեղերը Իսրայելի թաղաւորութիւնը :

ԻՄԱՏԵՆԻ ԹԱԳԱՅ ՈՐՈՒԹԻՒՆ

ՅԵՐՈՒՅԱՄԻՆ ԻՆՉՈՒՅՆ ԱՔԱՅԲ

Հ. Խորայեւոցոց առաջին թաղաւորը
Յերոբոամ ինչպէս թաղաւորեց :

Պ. Շատ գէշ թաղաւորեց . վասն զի
վախնալով որ չըլլայ թէ ժողովուրդն Աստու-
ծոյ զոհ մատուցանելու համար սաէպ Երու-
սաղէմ երթալով դալով որ մը միտքը փոխէ ,
և զինքն սպաննելով Դաւթի տան հետ միա-
նայ , ոսկիէ երկու երինջ շինել տուաւ , որոնց-
մէ մէկը Դան ու մէկայը Բ' թէլ դնել տուաւ ,
ուր նաև սեղան մ'ալ շինեց ու ժողովրդեան
մէջէն մասնաւոր քրմեր սրոշեց և զանազան
տօնի օրեր հաստատեց : Բայց ասոր համար իր
Նարամ որդւոյն թաղաւորած ատեն բոլոր իր
տունը Բաասա զօրապետէն շնջուեցաւ :

Հ. Նարամին սպանուելէն ետև Իսրայել-
ի թաղաւորութիւնն ով առաւ :

Պ. Նարամէն վերջը չորս զօրավարներ
Խորայելի թաղաւորութիւնն իրարմէ կը յա-

փրշտակէին , որոնցմէ Սմրին զօրանալով իր
հակառակորդներուն յաղթեց և 12 տարի թա-
գաւորելէն վերջը մեռաւ :

Հ. Սմրիին ով յաջորդեց :

Պ. Սմրիին յաջորդեց Աքաաբ շար հօր
չարագոյն որդին , որն որ իր կռապաշտ Յե-
զաբէլ կնոջը ձեռքով ամէն տեսակ անօրէնու-
թիւն գործեց : Աստուած զինքը սովով և ու-
րիշ նշաններով խրատեց . բայց երբոր դարձեալ
ուզողութեան չեկաւ , Եղիա մարգարէին բեր-
նովըն իմացուց որ իր ցեղն ալ պիտի ջրն-
ջուի , և միանգամայն ըսաւ . թէ Աքաաբին
արիւնը շները պիտի լափեն ու Յեզաբէլին
մարմինը պիտի ուտեն : Այսպէս ալ եղաւ ,
երբոր Ասորուոց դէմ պատերազմ կ'ընէր թըշ-
նամիներէն նետով զարնուեցաւ ու կառքով
մէկդի տարուեցաւ , վէրքէն վազած արեամբ
թաթխուած կառքը լուալու ատեն շներն ա-
րիւնը լափեցին :

Հ. Աքաաբին որդիքը Աբողիա ու Յով-
րամ ինչպէս էին :

Պ. Աքաաբին որդին Աբողիան իր հօրք
պէս ամբարիշտ էր . թագաւորութեան երկ-

ըորդ տարին իր վերնատան վանդակապատէն
 վար իյնալով հիւանդացաւ , ու ճանճիկ աս-
 տուծմէն օգնութիւն խնդրեց , այսպէս ընելուն
 համար՝ Աստուած Եղիա մարդարէին ձեռքով
 անոր խնացուց որ պիտի մեռնի : Անանկ ալ ե-
 դաւ . Աքոզիա մեռաւ ու տեղը Յովրամ իր եղ-
 բայրը նստաւ : Ասի ալ 12 տարի թագաւո-
 րելէն ետեւ , Յէու՝ լզորն որ Աստուած Ա-
 քաաբի տունը ջնջելու համար Իսրայէլի թա-
 գաւորութեան գահը նստեցուցած էր , զասի
 ճամբան նետով մ'ապաննեց : Վերջը զօրքով
 Եզրայէլ քաղաքը դնաց , ու Յեզաբէլը , քովը
 կեցողներուն նշան ընելով պատուհանէն վար
 նետել տուաւ , և այսպէս ձիերու տակ կոխ-
 կըրտուեցաւ ու մեռաւ . և ինչպէս որ Եղիա
 մարդարէացած էր՝ շները մարմինը կերան :

5

ՅԵՌՈՒԷՆ ԻՆՉՈՒԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

- Հ. Յէու ի՞նչպէս թագաւորեց :
- Պ. Յէու իր թագաւորութեան սկիզբը

իր անձը կուսապաշտութեան սխերիմ թշնամի ցուցուց, մինչև Ս. քաարին բոլոր ցեղը ջնջելէն զատ, որչափ որ կուսատուններ կային ամէնքն ալ մէջտեղէն վերցուց, և ասոր համար ալ իր զաւկրները մինչև չորս ազգ Իսրայէլի աթոռը նստան: Բայց որովհետև երբ ինք ալ ոսկի հորթ պաշտեց, անոր համար Յորդանանէն անդին եղող երկիրները՝ զորոնք իր սերնդոցը համար պիտի պահէր, ամէնքն ալ կորանցուց, և ինք Յէու 28 տարի թագաւորելէն վերջը մեռաւ:

Հ. Յէուին որոնք յաջորդեցին:

Պ. Յէուին ցեղէն չորս թագաւորներ յետըզհետէ յաջորդեցին, անոնցմէ վերջը ուրիշ հինգ աննշան թագաւորներ ալ եկան որոնց ամէնքն ալ իրենց նախորդը սպաններով գահն ելան, և իրենց կուսապաշտութեամբն ու անկարգութիւններովը ժողովուրդն ամէն անօրէնութեանց մէջ ձգեցին. անոր համար Սասուած Սսորեստանի Սաղմանասար թագաւորը անոնց վրայ խրկեց, որն որ Իսրայէլի Սամարիա մայրաքաղաքը երեք տարի պաշարելէն ետքը առաւ, վերջին թագաւորն Ովսէէն բռնեց, ու ժողովրդեան մեծ մասովը Սսորես.

տան դերի տարաւ , և ասանկով Իսրայելի
Թագաւորութիւնը 253 տարի տեւելով վեր-
ջացաւ :

6

ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՌՌՔՈՎԱՄԷՆ ԻՆՉՈՒԱՆ ԵԶԵԿԻԱ

Հ. Ռորովամ ի՞նչպէս թագաւորեց :

Պ. Ռորովամն ալ , հօրը պէս , իր կա-
նայքը ապականեցին . և անոնցմէ գրգռած
ժողովրդեան ճաճբայ բացաւ ամէն տեսակ հե-
թանոսական պղծութիւններ դործելու , մին-
չեւ Աստուած բարկանալով Սաւսակիմ Եդիպ-
տացւոց թագաւորը իրենց վրայ խրկեց , որ եկաւ ,
անոնց ամուր քաղաքներն առնելէն ետե՛ւ Ե-
րուսաղէմն ալ պաշարմամբ առաւ , տաճարն ու
Թագաւորական դանձը թալլեց ու անոնց վը-
րայ ծանր տուրք դրաւ : Ռորովամ 17 տարի
Թագաւորելէն վերջը՝ մեռաւ :

Հ. Ռորովամին ո՞վ յաջորդեց :

Պ. Ռ. որովամին յաջորդեց իրեն որդին Աբիա, ւրն որ Յերոբոամայ դէմ պատե-
րազմ բացաւ, և 400,000 զօրքով անոր 800
հազար զօրքին յաղթեց, 5: 0) հողի վերաւորեց
և քանի մը քաղաքներ ալ ձեռքէն առաւ :
Աբիա երեք տարի թագաւորելէն վերջը, իր
Ասա որդին յաջորդ թողլով մեռաւ :

Հ. Ասայի թագաւորութիւնն ինչպէս էր :

Պ. Ասայի թագաւորութեան սկիզբն աղէկ
էր . իր երկիրներուն մէջ եղած կռուքերը
կործանեց վերցուց, և այս բանիս իբրեւ վարձք,
Ասաուծոյ օգնութեամբը Նթովալայւոց թագա-
ւորին շուրջ մէկ միլիոն զօրաց յաղթեց : Բայց
ի վերայ այսր ամենայնի Ասաուծոյ բարկու-
թիւնը իր վրայ ձգեց, Ա. Ասաուոց թագաւո-
րին հետ՝ տաճարին ու թագաւորական դան-
ձերը տալով գաշինք դնելուն համար . Բ. Այս
ըրածին համար՝ Ասաուծմէ գալու պատիժը
իրեն ծանուցանող մարդարէն՝ և ժողովրդ-
ոց շատերը բանտարկելուն համար . Գ. Ռաքի
ցաւի հիւանդութեան մէջ ինկած ատեն, յոյսն
աւելի բժշկաց վրայ դնելուն համար : Եւ
այս հիւանդութեամբ ալ իր թագաւորութեան

41 Երորդ տարին մեռաւ :

Հ. Իրեն զով յաջորդ թողուց :

Պ. Իրեն յաջորդ թողուց իր աստուածապաշտ որդին Յովսափաաք, որն որ բոլոր երկիրը կռապաշտութեան ամէն հետքերէն մաքրեց, ու բոլոր տէրութեան քաղաքներն ու գիւղերը քահանաներ ու ղեւտացիներ խրկեց, Աստուծոյ օրէնքներն ամենուն սովբեցընել տուաւ. Ասոր համար ալ Աստուծոյ օրհնութեամբն ու օգնութեամբը բոլոր իր թշնամեացը յաղթեց և այնչափ աւար ժողովեցին, որ հազիւ երեք օրուան մէջ կրցան լմընցընել: Այնուհետև Յովսափաաք մեռաւ իր թագաւորութեան 25 Երորդ տարին: Իր յանցանքն այս միայն եղաւ որ Իսրայելի Աքաաք թագաւորին և անոր որդւոյն հետ բարեկամ եղաւ ու վաճառականութեան դաշինք դրաւ:

Հ. Յովրամ իր որդին ինչպէս թագաւորեց :

Պ. Յովրամ Յովսափաատայ որդին, որն որ Աքաաքին Գողողիա աղջկան հետ կարդուած էր, անոր խորհրդովը, հօրը մեռնելէն վերջը իր 6 եղբայրները մեռցուց, ու ժողովրդեան

մեծ մասովը սկսաւ նորէն կռապաշտութիւն
 ընել : Բայց ասոնց պատիժն ինքն ալ քաշեց ,
 որովհետեւ Եղումայեցիք իրմէ ապստամբեցան
 և Փղշտայիք ու Արաբայիք վրան դալով Ե-
 ղուսաղէմ մտան Յովրամին ապարանքը կողապ-
 տեցին , կինն ու որդիքը դերի բռնեցին , և
 միայն անոր Աքոզիա կրտսեր տղան ձգեցին :
 Իսկ ինք աղեաց հիւանդութեամբ վերջապէս
 մեռաւ ութը տարի թագաւորելէն վերջը :

Հ. Աքոզիայի ու Գոգոզիայի վրայ ինչ կը
 պատմուի :

Պ. Աքոզիա Յովրամի որդին իր հօրն ըն-
 թացքը բռնեց , անոր համար ալ , երբ որ ան-
 դամ մ' Իսրայելի Յովրամ թագաւորին այցելու-
 թեան գացած էր , Յէու զինքն սպաննեց :
 Գոգոզիա անոր մայրը անձամբ տիրել ուղե-
 լով , Աքոզիայի բոլոր որդիքը սպաննել առաւ
 և միայն Յովլամ՝ Աքոզիայի կրտսեր որդին իր
 գայեկովը ձեռքէն ազատեցաւ , զորն որ Յովի-
 դայէ քահանան գաղտնի տաճարին մէջ կըր-
 թեց , և ճ տարւան եղաւ թագաւորական
 դահը նստեցուց , դարչելի Գոգոզիան սպան-
 նել տալէն վերջը , սրն որ բոլոր տէրութեան

մէջ կռապաշտութիւնը մտցուցած և շատ չարիք ըրած էր :

Հ. Յովաս ինչպէս թաղաւորեց :

Պ. Յովաս՝ Յովիդայէի կենդանութեան ատեն շատ աղէկ ընթացք ունեցաւ, ու ճշմարիտ կրօնը ծաղկեցուց. բայց անոր մեռնելէն վերջը քովի իշխաններուն շողոքորդութեամբը փոխուեցաւ, կռապաշտութեան սկըսաւ, ու Չաքարիա մարդարէն, Յովիդայէի որդին, զինքն յանդիմանելուն համար, տաճարէն ելած ատեն քարկոծել տուաւ : Ասոր համար ալ Յուդայաստան թշնամիներէն անապատ դարձաւ, զորաց դիւաւորներն սպանուեցան, ինքն ալ հիւանդ պառկած ատեն իր մարդիկները զինքը մեռցուցին՝ թաղաւորութեան 10 երորդ տարին :

Հ. Յովասին ո՛վ յաջորդեց :

Պ. Յովասին յաջորդեց իր տղան Ամասիաասի իսկզբան Աստուծոյ հաճոյ ճամբայ չունեց, բայց վերջը երբոր Եդոմայեցւոյ վրայ դնաց ու յաղթեց, անոնց կռուքերն առաւ պաշտեց : Ասոր համար, երբոր քիչ ատենէն Կորայեղացւոյ Յովաս թաղաւորին հետ

պատերազմեցան , Յովաս անոր յաղթեց , զինքն
 դերի բռնած՝ Երուսաղէմ բերաւ և աչքին առջևը
 նոյն քաղքին պարսպին մեծ մասը փլցընել
 տալէն ու թագաւորական դանձը կողոպտելէն
 ետև՝ Սամարիա դարձաւ : Այն ատեն զօրքն
 Ամասիայէն ապստամբեցաւ և զինքն սպաննեց
 իր թագաւորութեան Չերորդ տարին : Ասոր
 տեղը ժողովուրդը , անոր 16 տարեկան որդին
 զՌզիան կամ զԱղարիան դահը նստեցուցին ,
 որն որ յաջողութեամբ կառավարեց քանի որ
 Աստուծոյ ճամբէն կէրթար . բայց երբոր ու
 զեց քահանայութեան պաշտօն կատարել , բո-
 ղոտութեամբ պատժուեցաւ , և նոյն բորոտու-
 թիւնը չանցաւ , մինչև որ 52 տարի թագաւո-
 րելէն վերջը մեռաւ :

Հ. Յովաթամ Ռզիայի որդին , ու Աքաղ
 Յովաթամի որդին ինչպէս թագաւորեցին .

Պ. Եստ տարբեր եղանակաւ : Յովաթամ
 Ռզիայի որդին շատ բարեպաշտութեամբ 16
 տարի հօրը ակողմը ժառանգեց , և Աստուծոյ
 օրհնութիւնը վրան էր : Իսկ ասոր որդին Ա-
 քաղ՝ Իսրայելացւոց թագաւորներուն ճամբան
 բռնեց . Բահաղին սուտ աստուածներուն կը-

կըրպագութիւն ըրաւ , մինչև իր որդիքն ալ
 զոհեց : Ասոր համար հեռոզհեռե Եդոմայեցիք
 Փղշտայիք ու նոյն իսկ Իսրայէլացիք , Ասոր-
 ւոյ հետ անոր երկիրը կը յարձակէին ու կ'ա-
 ւերէին : Աքաղ ասոնց դէմ դնել չկրնալով
 Ասորեստանեայց Թակղատիաղսար թագաւորն
 օգնութեան կանչեց , որն որ ի սկզբան դինքը
 թշնամիներէն ազատեց , բայց վերջը իրեն վը-
 րայ ալ եկաւ և Յուդայի թագաւորութիւնն
 հարկատու ըրաւ :

4

Ե ԶԻԿԻԱՅԷՆ ԻՆՉՈՒԱՆ ԲԱԲԵԼՈՒՆԻ

ԳԵՐՈՒԹԻՒՆԸ

Հ. Աքաղին ո՞վ յաջորդեց .

Պ. Աքաղին յաջորդեց անոր որդին Եղե-
 կիա , որն որ բոլորովին տարբեր ճամբայ բըռ-
 նեց : Իր հօրը կանգնած կուռքերը կործանեց
 երկիրը ամէն տեսակ պղծութիւններէն մաք-
 րեց ու հին կարգերը նորոգեց : Այս բաներուս
 իբրև վարձք , երբոր Ասորեստանեայց Սենե-
 քերիմ թագաւորը բազմաթիւ զօրքով Երու-

ապահով պաշարեց, Աստուած գիշերը թշնամեաց բանակը հրեշտակ մը խրկեց, որն որ 185,000 հողի մեռցուց ու թշնամին ամօթով վռնտեց: Այնուհետև Եզեկիա հիւանդացաբայց իր ազաչելովը Աստուած իրեն 15 տարի ալ շնորհեց և վախճանեցաւ 29 տարի թագաւորելէն ետև:

Ը. Մանասէին և անոր որդւոյն Ամոնին կառավարութիւնն ինչպէս էր:

Պ. Մանասէ Եզեկիայի որդին 12 տարւան էր երբ որ թագաւոր եղաւ: Իսկզբանէ ամենեւին հօրը չհետեւեցաւ. դարձեալ կռապաշտութիւն ձեռք առաւ, որդիքը զոհեց, և ամէն տեսակ պղծութիւններ զործելով իր հպատակներուն ալ չար օրինակ եղաւ: Աստուած մարդարէներու ձեռքով մեծամեծ չարիքներ ըսպառնալէն ու օգուտ մը չընելէն վերջը, զինքն Ասորեստանցւոյ ձեռքը մատնեց, որոնք եկան զինքը բռնեցին ձեռքն ու ոտքը կապած՝ Բաբելոն գերի տարին: Ասոր վրայ Մանասէին աշուրները բացուեցան, մեղացը վրայ գղջաց ու ապաշխարեց: Եւ երբոր գերութենէ ազատեցաւ, զինքն բոլորովին աստուածայաշ-

տութեան տուաւ , ու ճշմարիտ կրօնը նորէն
հաստատեց : Մանասէ 55 տարի թագաւորեց
Ասոր որդին Սմոն 22 տարւան հօրը ակօռը
նստաւ : Այս ալ Յուդայի շար թագաւորներէն
մէկն եղաւ , հօրը պէս շատ շարութիւններ ք-
րաւ բայց վերջէն անոր պէս չ'ապաշխարեց ,
թագաւորութեան 12երորդ ասորին իր ծառա-
յից ձեռքով սպանուեցաւ :

Հ. Յովսիա ինչպէս թագաւորեց :

Պ. Յովսիա Սմոնին որդին , Մանասէի
թոռը , պղտիկուց արդէն աստուած պաշտու-
թեամբ կրթուած ըլլալուն , հօրը ակօռը նրս-
տելուն պէս ետեւէ եղաւ ճշմարիտ Աստուծոյ
պաշտօնը հաստատելու , զորն որ իր հայրը բո-
լորովին վերցուցած էր : Ուստի իր երկրին
մէջէն կուռքերը բոլորովին ջնջեց վերցուց :
Յովսիա մինչև կենացը վերջը Աստուծոյ հա-
ւատարիմ մնաց : Երբոր Փարաւոն Նեքաւով
Եգիպտացւոց թագաւորը Բաբելացւոց դէմ
պատերազմի կ'երթար , Յովսիա Բաբելացւոց
հաւատարիմ մնալով անոր դէմ ելաւ , բայց
պատերազմին մէջ վիրաւորելով մեռաւ 31 տա-
րի թագաւորելէն վերջը : Բոլոր Յուդայ ու Իս-

բայել զբան սուգ բռնեցին :

Է. Յովսիայէն վերջը Յուզայի թագաւորութիւնն ինչ եղաւ :

Պ. Յովսիայի մեռնելէն վերջը իր որդին Յովաքայ գահն ելաւ , և երեք ամիս թագաւորելէն ետե Նեքաւով թագաւորը զինքը վար առաւ , տեղը անոր մեծ եղբայրը Յովակիմը նստեցուց , ու երկիրն Եգիպտացուց հարկատու ըրաւ : Այս Յովակիմը իր բազմաթիւ անորէնութիւններովը երկայն ատենէ ի վեր ըսպանացուած շարիքները իր վրայ քաշեց , Նաբուքոդոնոսոր Նեքաւովին յաղթելէն ետե եկաւ Երուսաղէմը պաշարմամբ առաւ , Յովակիմ թագաւորը բռնեց շղթայի զարկաբայց վերջը Քարեղացուց տարւէ տարի հարկ վճարելու պայմանաւ աղատ թողուց : Յովակիմ երեք տարի հարկ վճարելէն ետե՝ դադրեցուց : Բայց նորէն Քաղդէացուց զօրքէն բռնուեցաւ , սպանուեցաւ և անթաղ Երուսաղէմայ դրան առջևը մնաց :

Է. Յովակիմին ո՞վ յաջորդեց :

Պ. Յովակիմին յաջորդեց իր որդին Յեքոնիա կամ Յովակիմ , որն որ երեք ամիս հօ-

ըր ընթացքով թագաւորելէն ետև, Նաբու-
քոդոնոսոր, մօրը, կնոջը ու մեծամեծաց հետ
ու բոլոր դանձերով Քաբելոն գերի տարաւ և
անոր տեղ Մաթթանիա կամ Սեդեկիա ակժո-
ւը նստեցուց: Ասի ևս անօրէնութեանց շափը
լեցուց թէ իրեն, և թէ տէրութեան կոր-
ծանման պատճառ եղաւ: Նաբուքոդոնոսորայ
հետ դրած դաշինքն աւրեց: Եղիպտացւոց
հետ միացաւ, անոր համար Նաբուքոդոնոսոր
Երուսաղէմ սաստիկ պաշարմամբ առաւ ու
տաճարին հետ մէկտեղ գեանայատակ կործա-
նեց: Սեդեկիա մտխոյզելու ատեն բռնուեցաւ,
իր որդին աչքին առջև սպանուելէն վերջը,
ինքն ալ թագաւորութեան Աերորդ տարին
շղթայով կապուած Քաբելոն գերի խրկուե-
ցաւ, ուր կապուած մնաց մինչև որ մեռաւ:
Այս թագաւորին հետ Յուդայի թագաւորու-
թիւնն ալ վերջացաւ Քրիստոսէն 588 տարի
յառաջ: 70 տարւան գերութենէ ետև Հրեայք
դարձեալ իրենց հայրենիքը դարձան, բայց
միշտ օտար ազգաց կառավարութեան տակ
մնացին:

ՄԱՍՆ Զ

ԲԱՔԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԵՆԷՆԷՆ ԻՆՉՈՒԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱԼՈՒՍԵԸ

1

ԴԱՆԻԷԼ

Հ. Այս գերութեան ժամանակ երևելի ու
զարմանալի ինչ բան պատահեցաւ :

Պ. Այս գերութեան ժամանակ Դանիէլ
մարդարէն իր զարմանալի գիտութեամբը, մար-
դարէութեամբն ու ծածկեալ իմաստութեամբ
Ստրեստանեայց թագաւորներուն քով մեծ
պատուոյ հասաւ : Ինք գեռ տղայ եղած ա-
տեն Բաբելոն գերի դնաց, ուր ամէն տեսակ
վտանգներու ու նեղութեանց մէջ անշարժ ու
հաստատուն մնաց, և առաքինութեան ճամբէն
երբէք չխտորեցաւ :

Հ. Դանիէլ Նաբուգոդոնոսորայ քով ինչու
այնպէս բարձրութեան հասաւ :

Պ. Անգամ մը Նաբուգոդոնոսոր երազ

տեսաւ , որն որ զինքը շատ անհանգիստ կ'ընէր ,
բայց նոյն իսկ երազը մտցած ըլլալով երազա-
հանները կանչեց որ թէ տեսած երազն ու թէ
նոյնին մեկնութիւնն անոր ըսեն : Երբ որ ա-
տնք շկրցան , Բանիէլ սկսաւ երազն անոր
պատմել ու մեկնութիւնն ալ տուաւ : Մեծ ար-
ձան մը տեսար , ըսաւ , որուն գլուխը՝ սակիէ ,
լանջքն ու բազուկը արծրթէ , մէջքն ու բար-
ձը՝ պղնձէ , սրունքներն՝ երկրթէ , իսկ ոտուր-
ներուն կէսը՝ երկրթէ , կէսն ալ խեցիէ էր :
Մէյմ'ալ յանկարձ լերան վրայէն ինք իրմէ
քար մը գլտորեցաւ , արձանին երկրթէ ու
խեցիէ ոտուրներուն զարնուելով ջախջախեց ,
փոշի դարձուց : Իսկ քարը մեծցաւ խոշոր լեռ
դարձաւ ու բոլոր աշխարհք բռնեց : Մեկնու-
թիւնն ալ այս էր : Սրձանին սակիէ գլուխը՝
Ասորեստանեայց ու Բաբելոնաց , արծրթէ
լանջքն Պարսից , պղնձէ մէջքն՝ Յունաց . կէ-
սը՝ երկրթէ , կէսը՝ խեցիէ ոտուրներն՝ Հռով-
մայեցուց թաղաւորութիւնները կը նշանակեն .
իսկ քարը որ գլտորեցաւ , կը նշանակէ ուրիշ
գորաւոր թաղաւորութիւն մը , որ յախտեանս
պիտի տեսէ : Թաղաւորն այս մեկնութեան վը-

րայ ապշեցաւ մնաց , ու երեսի վրայ ինկած՝
Քանիէլի երկրպագութիւն ըրաւ , անոր Աս-
տուծոյն ճշմարիտ Աստուած ըլլալը խոստովա-
նեցաւ և զինքը բոլոր իր տէրութեան վրայ
իշխան ու Բարեւոնի իմաստուններուն գլուխ
դրաւ :

Հ. Իր՝ Սեղրակ , Միսաք և Սբեղնագով
ընկերներուն ի՛նչ պատահեցաւ :

Պ. Անոնք Նաբուքոդոնոսորայ կանգնած
արձանին երկրպագութիւն չընելնուն համար ,
Նաբուքոդոնոսորայ հրամանաւ երեքն ալհը-
նոց նետուեցան , որն որ եօթնապատիկ վա-
ռուած էր . բայց անոնց և ոչ մէկ մաղր խանձե-
ցաւ , ու անարատ մնացին :

Հ. Քանիէլ Նաբուքոդոնոսորայ ի՛նչ պա-
տիժ մարդարեացաւ :

Պ. Որովհետև Նաբուքոդոնոսոր իր մե-
ծութեանը վրայ հպարտացած էր . անոր հա-
մար Քանիէլ , մարդարեացաւ , որ մարդկային
ընկերութենէ պիտի մերժուի , վայրի անասուն-
ներուն հետ պիտի բնակի ու ժամանակ մը
արջառոց պէս խոտ պիտի ուտէ , որն որ շուտ
մը կատարուեցաւ :

Հ. Դանիէլ ինչ՞ առթի մէջ Բաղտասարին
Բաբելացւոց տէրութեան կործանումը մարդա-
րէացաւ :

Պ. Երբ որ Բաղտասար Բաբելացւոց թա-
ղաւորը տէրութեան մեծամեծներուն մեծ ու
փառաւոր սեղան կուտար, տաճարէն ու Ե-
րուսաղեմէն առնուած ոսկիէ ու արծրթէ ա-
մանները բերել տուաւ և անոնցմով խաւափու-
կւոց գինի խմած ատենը, մէյ մ'ալ յանկարծ
սասափիկ այլայլած մարդու ձեռքի մատուրներ
տեսնուեցաւ, որն որ անոնց նստած պատին վրայ
դրեց, Մանէ, Թեկէդ, Փարէս, և երբ որ ոչ
ոք կրնար ասոնց մեկնութիւնը տալ, Դանիէլ
կանչուեցաւ, որն որ թաղաւորին այս մեկնու-
թիւնը տուաւ: Ստուած թաղաւորութիւնդ
չափեց, դործքերդ կշռուեցան ու պակաս ե-
լան, թաղաւորութիւնդ բաժնուեցաւ կէսը
Մարաց, կէսը Պարսից տրուեցաւ: Իրօք ալ
նոյն գիշերը Բաբելոն թշնամիներէն առնուե-
ցաւ ու նոյն իսկ Բաղտասար իրեններով սպա-
նուեցաւ: Իսկ Դանիէլ Պարսից քովս ալ մեծ
համարում ստացաւ, ու տէրութեան երկրոր-
դականն եղաւ:

Հ. Հրեայք իրենց գերութենէն ինչպէս
ազատեցան:

Պ. Երբոր Աիւրոս առաջին պարսից թա-
գաւորը, բոլոր Բաբելացւոց տէրութիւնը նուա-
ճեց, Աստուծմէ շարժեալ իր տակն ըլլող Հը-
րէից հրովարտակով մը հրաման տուաւ, որ ա-
մէնքը Երուսաղէմ երթան, հոն Իսրայելի Աս-
տուծոյն տաճար շինեն: Երուսաղէմի տաճա-
րէն ալ առնուած անօթները ետ դարձուց Աիւ-
րոս, և հրամայեց որ տաճարն իր ծախքովը
շինուի: Ուստի 3516ին 42,000 հոգի իրենց
հայրենիքը դարձան Զորաբաբելի առաջնոր-
դութեամբ: Քանի մը տարի ետքը Արտաշէս
թագաւորին հրամանաւը՝ Նէէմի Երուսաղէմայ
պատերն ալ շինեց. թէպէտեւ Սամարացիք
շատ դէմ կը դնէին:

Հ. Հրէից՝ գերութենէ դառնալէն վերջը
ո՛վ կ'առաջնորդէր:

Պ. Հրէից գերութենէ դառնալէն վերջը
Պարսից թագաւորները իրենց վերին իշխանն
էին, բայց իրենք իրաւունք ունէին, իրենց
կուսակալ կամ առաջնորդ ընտրելու, որոնցմէ
երեւելիներն են Զորաբաբել, Եզր ու Նէէմի:

ՀՐԵԱՅՔ ՅՈՒՆԱՅ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Հ. Հրեայք ինչ կերպով Մակեդոնացւոց իշխանութեան տակն ինկան :

Պ. Աղեքսանդր՝ Մակեդոնացւոց թագաւորը Պարսից դէմ արշաւած ատեն՝ Հրեայք Պարսից հաւատարիմ մնալով չուզեցին անոր կողմն անցնիլ, անոր համար ալ Աղեքսանդր բարկացած Երուսաղեմայ վրայ եկաւ քաղաքը կործանելու մտօք. բայց Յազդոս քահանայապետը Ղեւտացւոց հետ քահանայական ղզեատներով դիմացն ելաւ զինքն հաշտեցուց : Ուստի Աղեքսանդր տաճար դնաց ու հոն ճշմարիտ Աստուծոյ պատարագ մատոյց, և հրաման տուաւ Հրէից որ իրենց օրէնքը պահեն, և ամէն մէկ եօթը տարի հարկ չվճարեն :

Հ. Աղեքսանդրի մահուընէ վերջը Հրեայք ինչ վիճակ ունեցան :

Պ. Աղեքսանդրի մահուընէն վերջը երթադաւորութիւնը բաժնուելով Հրէաստան Եգիպտացւոց ինկաւ, և իսկզբան Պտղոմեանք

Հրէից շատ սէր ցուցուցին . միայն Պաղոմէոս
 Գ. Փիղոպատոսը՝ որն որ Երուսաղէմ եկած ու
 Աստուծոյ զոհ մատուցանելէն ետն՝ Սրբութիւն
 թիւն սրբոցն ալ մտած ու հոն յանկարծ ան-
 դամալոյժ գետինն ինկած էր , Եզիպտոս
 դառնալէն վերջը Եզիպտոս դադարած Հրեայ-
 ները ստիպեց որ կուռք պաշտեն . և անոնք
 հաստատուն կ'ենալով , զիրենք փղերու առջին
 նետելու հրաման հանեց , որպէս զի անոնց
 ջարդը տեսնելով ուրախանայ : Բայց Աստուած
 Հրէից աղօթքը լսելով , թագաւորին քունը ե-
 րեք օր ծանրացուց և անոնց ջարդն ուշացուց :
 Իսկ փղերն արձակելու օրը՝ երկու հրեշտակ
 դօրքին ու փղաց մէջ խառնութիւն ձգելով ,
 փղերը Հրէից տեղ՝ դօրքը կը մեռցընէին :
 Նոյն ատեն թագաւորին սիրտը փոխուելով զի-
 րենք ազատ թողուց :

ԱՍՈՐԻՈՅ ԹԱԴԱԻՈՐԱՅ ՏՆԿ

Հ. Հրեայք ինչպէս Ասորոց տակ ինկան ,
 օվ էր Հեղիոդորոս :

Պ. Պտղոսիոս Փիղոսպատորայ մեռնելէն վեր-
 ջը , Ասորւոց Մեծն Անդիոքոս թագաւորը ե-
 դիպտացւոց վրայ պատերազմի ելաւ , և Հրէ-
 աստան անոնց ձեռքէն առաւ : Ասորիք ալ ի
 սկզբան Հրէից շատ աղէկ կը նայէին , բայց
 յետոյ Սեղեւկոս Գ. Փեղոսպատոր թագաւորը՝
 տաճարին վերակացուն ջսութեամբն իմանա-
 լով որ Երուսաղեմայ տաճարին մէջ անբաւ դանձ-
 կայ , իր Հեղիոդորոս պաշտօնատարը խրկեց , որ
 այն դանձերը իր թագաւորական դանձատան
 տան : Թէպէտ Անիա քահանայապետը շատ դէմ
 դրաւ , բայց օգուտ մը չեղաւ . Հեղիոդորոս
 ծառաներովը տաճարին դանձատուներ մտաւ ,
 բայց հոն Աստուծակ պատիժը գտաւ : Փառա-
 ւոր ձիու վրայ նստած մէկը տեսնուեցաւ ,
 ձին զՀեղիոդորոս դեռին պառկեցուց , և նոյն
 ատեն ուրիշ երկու երիտասարդներ երեւնա-
 լով՝ զինքը բռնեցին , սաստիկ ծեծեցին , անզ-
 գայ ու կիսամահ թողուցին : Քովինները զին-
 քը դուրս հանեցին , և անոնց աղաջանքովն Ա-
 նիա Աստուծոյ զոհ մատուցց . նոյն երիտա-
 սարդները նորէն երեւցան ու զինքն ողջնու-
 ցին : Հեղիոդորոս Անիային շնորհակալ եղաւ ,

Աստուծոյ ողջակէզ մատոյց ու ետ դարձաւ :

Հ. Անտիոքոս Եպիփանէս՝ Ասորոց թագաւորը Հրէից հետ ինչպէս վարուեցաւ :

Պ. Երուսաղէմայ մէջ սուտ լուր մը տարածուելով թէ Անտիոքոս Եպիպատոս մեռած ըլլայ . Հրէից մէջ խռովութիւններ ելան : Անտիոքոս այս խռովութիւնը ապստամբութիւն կարծելով զօրքով Հրէաստան եկաւ , Երուսաղէմ մտաւ , ձեռքն անցնողները կէս մը իբրեւ գերի ծախեց , կէս մ'ալ սրէ անցնել տուաւ եւ տաճարն ալ կողոպտեց : Երկու տարի վերջը Ապողոնիոս զօրավարը խրկեց , որն որ շաքաթ օր մը Երուսաղէմայ վրայ յարձակեցաւ , քաղաքին պարիսպները կործանեց , երեւելի փայտաշէն տներն այրեց ու շատերը սրէ անցուց , եւ մահուան պատժով հրաման հանեց որ իրենց կրօնը թողուն եւ ուրիշ ազգաց պէս կուռք պաշտեն : Նոյն իսկ տաճարին մէջ Արամաղդայ արձանը կանգնել աուաւ , ու ստիպեց որ դանի պաշտեն և խոզի միս ուտեն :

Հ. Անտիոքոսի հալածման ատենը՝ որոնք իրենց կրօնին զո՞հ եղան :

Պ. Առաջինն եղաւ Եղիազար անուամբ

պատուական ծերունին, որն որ աւելի յանձն
առաւ մեռնիլ՝ քան թէ օրինաց դէմ խողի միս
ուտել: Երկրորդ, 7 եղբարք Մակարայեցիք
իրենց մօրը հետ, որոնք նոյնպէս յանձն չառ-
նելով խողի միս ուտել, մէկիկ մէկիկ իրենց
մօրը առջին խիստ շարշարանք կրելով մարտի-
րոսացան. եւ ամենէն վերջը մայրերնին ալ քա-
ջութեամբ նահատակեցաւ: Երրորդ Մատաթիա
քահանան իր հինգ որդւոցը հետ՝ որոնք էին
Յովհաննէս, Սիմոն, Յուդա Մակաբէ, Եղիա-
ղար ու Յովնաթան, 25,0 0 հողի ժողվելով
բռնաւորին դէմ դնելու սկսան:

Ը. Յուդա Մակաբէին արշաւանքներն ինչ-
պէս եղան:

Պ. Եստ յաջող, վասն զի երբոր Անտիո-
քոս զօրքով Հրէաստանի վրայ եկաւ, Յուդա
Մակաբէ՝ իրեններոյն Աստուծոյ օգնութիւնը
խնդրելէն ետև՝ զօրքով դիմացն ելաւ ու յաղ-
թեց, երկինքէն եկած օգնութեամբ: Անտիո-
քոս որ նոյն ատեն Պարսից հետ ալ պատերազմ
կը մղէր, երբոր իրեններուն յաղթուիլը լսեց,
սաստիկ կատղեցաւ, ու շուտ մը պատրաստու-
թիւն տեսաւ որ զայ Երուսաղէմ աւերակ

դարձրնէ : Բայց այս ամբարտաւան խորհուրդը չկատարուեցաւ , վասն զի ճամբան կառուցեցաւ , ու դժբախտութեամբ կառքէն ալ վար իյնալով չարաչար մեռաւ : Այնուհետև Յուդա՝ Անտիոքոս Եւպատորին Նիկանովը զօրապետին ալ յաղթեց , եւ ուրիշ շատ յաղթութիւններ ալ ըրաւ , մինչեւ վերջապէս Գեմետրիոսի տեղակալին Բաքիդին դէմ ըրած սաստիկ պատերազմին մէջ առած վերքերէն քաջութեամբ մեռաւ :

Հ. Յուդա Մակաբէին եղբայրը Յովնասթան ինչ երեւելի դործք դործեց :

Պ. Յովնասթան զօրապետ ու միանգամայն քահանայապետ ընտրուեցաւ : Ասի թէ՛ Բաքիդն եւ թէ՛ ուրիշ թշնամիները յաղթեց : Բայց Տրիբոնէն բռնուեցաւ եւ ի վախճանի անկէց սպանուեցաւ :

Հ. Յովնասթանէն վերջը ո՛վ եղաւ քահանայապետ :

Պ. Իր եղբայրը Սիմոն , որն որ շատ յաջողութեամբ Տրիբոնին հետ կռուեցաւ . ասոր համար ալ իր փեսան վրան նախանձելով եւ առ

նոր իշխանութեանը ցանկանալով, անգամ մը
խնջոյքի ատեն թէ՛ դինքն և թէ որդիքը ըս-
պաննել տուաւ :

Հ. Միմոնին ո՛վ յաջորդեց :

Պ. Յովհաննէս Միմոնին ամենէն կրտսեր որ-
դին, որն որ Հիւրկանիա գաւառը յաղթելուն՝
Հիւրկանոս Ա. կոչուեցաւ : Հրէաստան՝ բոլոր
Ասորւոց ու Եգիպտացոց իշխանութենէն ա-
զատելով 28 տարի խաղաղութեամբ առաջնոր-
դեց : Թէպէտ այս եղանակաւ շատ մեծ քաջու-
թիւններ ու արդիւնք ցուցուց, բայց Մակաբե-
եան ցեղին նախատինք ալ եղաւ իր կրօնը փո-
խելով, որովհետեւ Սադուկեցոց կողմն անցաւ,
որոնք հրեշտակներն եւ ուրիշ մնացեալ հոգի-
քը ինչպէս նաեւ մարմնոց յարութիւն առնելը
առասպել կը համարէին :

Հ. Թագաւորական պատիւը քահանայա-
պետութեան վրայ ինչպէս եկաւ :

Պ. Արիստաբուղոս Ա. Հիւրկանոսին որ-
դին, առջինը եղաւ որ թագաւորական պատիւ
առաւ : Եւ այս իր թագաւորութիւնը հաստա-
տուն ընելու համար իր մայրը բանտի մէջ առ-
վամահ սպաննեց, և իր եղբայրն Անտիգոնոսը

իր թագաւորութեան աչք ձգելուն համար մեռցուց . իսկ միւս եղբայրներուն բոլորը բանտարկեց : Բայց այս ամէն չարեաց ու թափածարեանց պատիժն ինքն ալ գտաւ , յուսահատութեան մէջ ի յնալով մեռաւ տարի մը թագաւորելէն վերջը :

Հ. Այսուհետեւ թագաւորական քահանայապետութիւնն ո՛վ առաւ :

Պ. Աղէքսանդր Յաննէոս : Ասի մինակ ազատած էր իր եղբորը կատաղութենէն . բայց այս ալ եղբորը պէս արիւնարբու (արեան ծարախ) մէկն էր : Վասն զի 6 տարուան մէջ դահազան պատճառներով 6000 հոգւոյ չափ սպաններ թուաւ : Դարձեալ 800 հոգի ալ աղնուականներէն խաչեց , իր ընթացքը չհաւնելուն համար , և անոնց կանայքն ու որդիքը իրենց առջեւը չարչարելով սպաններ թուաւ : Վերջապէս 42 տարի բռնաւորի պէս իշխելէն ետեւ , ինքն ալ իր արբեցութենէ ու չափազանց բարկութենէ պատճառած հիւանդութեամբ չարաչար մեռաւ 49 տարուան :

Հ. Այս բռնաւորին ով յաջորդեց :

Պ. Սողոմէ իր արձակած կինը , որն որ

Գ տարի կառավարելէն վերջը՝ իր անդրանիկ որդին Հիւրկանոս Բ. ը թագաւոր անուանեց , որուն յառաջուց քահանայապետութիւնը տըւած էր :

Հ. Հիւրկանոս ինչպէս կառավարեց :

Պ. Հիւրկանոս շատ անհաստատ բաղդունեցաւ : Արովհետեւ իր եղբայրը Արիստաբուղոս իրեն յաղթելով , Հիւրկանոս իր թագաւորական ու քահանայապետական պատիւներէն հրաժարեցաւ : Բայց Պոմպէոս՝ Հռովմայեցւոց զօրապետը քիչ մը վերջը Երուսաղէմ առնելով՝ զՀիւրկանոս նորէն աթոռը նստեցուց , ու Արիստաբուղոսը իր որդիքներով Հռովմ գերի խրկեց :

Հ. Մակարեանց վերջին թագաւորն ով եղաւ :

Պ. Մակարեանց վերջի թագաւորն եղաւ Անտիգոնոս Արիստաբուղոսի որդին : Ասի Հռովմէն փախաւ ու թագաւորութիւնն ինքն առաւ . բայց Հերովդէսէն թշնամի հրատարակուելով , Անտիոքիայի մէջ դաժնատուեցաւ : Այսպիսի խեղճութեամբ մարեցաւ Մակարայեցւոց իշխանութիւնը՝ Քրիստոսէն 37 տարի յառաջ , որն որ 130 տարի տեւած էր :

ՀՈՌՎԴԱՅԵՅԻՈՑ ԿԱՅՍԵՐԱՅ ՏԱԿ

Հ. Յուդայաստանը երբ Հռովմայեցւոց իշխանութեան տակ մտաւ :

Պ. Յուդա Մակարէին ատենէն , Հրեայք առոյդ է Հռովմայեցւոց հետ կապուած էին , բայց անոնց իշխանութեան տակ շէին ինկած : Բայց Հիւրկանոս (որուն իր եղբայրը Սրիատարուղոս բռնի յաջորդած էր) , Պոմպէոսի օգնութեամբ դարձեալ երբ դահ ելաւ , Հրեայք իրենց ազատութիւնը կորսնցուցին , որովհետեւ այնուհետեւ ալ Հռովմայեցիք իրենց վերին իշխանն էին : Ս. յապէս Յուդայաստան՝ որ յառաջ Հռովմայեցւոց բարեկամ ու դաշնակից էր , հիմա անոնց իշխանութեան տակ հարկատու եղաւ :

Հ. Մակարեանց ցեղը վերջանալէն և տեւ Յուդայաստանի վրայ ո՞վ տիրեց :

Պ. Հերովդէս , որն որ Մեծ կոչուեցաւ , մտլութիւններով աւելի ևս մեծ էր : Ստիժեպէտ ազգաւ Հրեայ շէր , ի վերայ այսր ամենայնի ի սկզբան բռնութեամբ Յուդայաստ.

տանի տիրեց, և վերջէն իր թագաւորութիւնը
հաստատուն ընելու համար՝ Աւգոստոս կայս-
րէն ստակով Յուդայաստանը գնեց:

Հ. Յուդայաստանը միշտ Հերովդեսի ցե-
ղին մէջ մնաց:

Պ. Չէ. Որովհետեւ Յուդայաստանը Աւ-
գոստոս կայսեր հրամանաւր, Հռովմայեցւոյ
տէրութիւն մը սեպուեցաւ և հարկ տալէն ա-
զատեցաւ: Այսպէս Հերովդէս՝ կայսեր հպա-
տակ թագաւոր մ'եղաւ և թագաւորի անունը
իրբև պատիւ կը կրէր: Այս կերպով վերցաւ
յուդայի ցեղէն իշխանութեան գաւաղանը և
Պաղիստենացւոյ աշխարհը որ իսրայելացւոյ 12
ցեղին ժառանգութեան բաժինն էր անոյան
հռովմայեցւոյ իշխանութեան ձեռքը այս եր-
կու պարագայներս յայտնի նշան էին Քրիստոն-
սի փրկչին գալաւեանը մօտենալուն. ինչպէս որ
Յակոբ Նահապետ գուշակած էր իր Յուդա
որդւոյն օրհնութիւն տուած ատենը և Քանիէւ
մարգարէն յալ յայտներէր Նաբուգոդոնոսորայ
երազին մեկնութեանը մէջ:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ՓՐԿՁԻՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ԳՐԻՍՏՈՍԻ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Նոր Կատակարանը երեք մաս կը բաժնուի :

Ա. Գրիառոսի ծննդենէն ինչուան քարոզութիւնը :

Բ. Գրիառոսի Քարոզութենէն ինչուան շարչարանքն և մահը :

Գ. Գրիառոսի մահուրնէ ինչուան սոսքեղոյ քարոզութիւնը :



ՄԱՍՆ Ա

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԵՆԷՆ ԻՆՉՈՒԱՆ

ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ

Հ. Քրիստոս դեռ չծնած ի՞նչ պատահեցաւ :

Պ. Գաբրիէլ հրեշտակը եկաւ Հրէաստանի մէջ Չաքարիա անունով սուրբ քահանայի մը, որ նոյն ատեն տաճարին մէջ Աստուծոյ խունկ կը մատուցանէր, և աւետեց որ Եղիսաբէթ իր կինը որդի մը պիտի ծնանի, անունն ալ Յովհաննէս դրուի, ինք Հոգւով սրբով պիտի լեցուի և անհաւատները Աստուծոյ սուրբ ժողովուրդ պիտի պատրաստէ :

Հ. Չաքարիա այս աւետիսին հաւատաց :

Պ. Չհաւատաց, որովհետեւ ինք և իր կինը ծէր էին, անոր համար ալ Աստուծմէ պատժուեցաւ համբ եղաւ և այնպէս ալ մնաց մինչեւ որ Յովհաննէս ծնաւ :

Հ. Չաքարիային լեզուն երբբայուեցաւ :

Պ. Եղիսաբէթին ատենը գալով տղան ծրուաւ : Աղգականները իրեն ուրախակից ըլլաւ :

լու եկան և կ'ուղէին որ հօրը անունը դրուի .
 իսկ մայրը հրեշտակին խօսքին համաձայն Յով-
 հաննէս դրուի կ'ըսէր : Երբոր անունք դէմ կը
 դնէին , հօրը հարցուցին : Չաքարիա տախտակ
 մ'առաւ ու վրան դրեց թէ Տղուն անունն Յով-
 հաննէս է : Ասոր վրայ մէկէն լեզուն բացուե-
 լով Հոգւով սրբով լեցուեցաւ :

Հ. Գաբրիէլ հրեշտակն Աստուածամայ-
 ըութեան աւետիան որու բերաւ :

Պ. Գաբրիէլ հրեշտակը՝ վեց ամիս վերջը
 Նազարեթ քաղքին մէջ Մարիամ անուն կու-
 սի մ'երեւցաւ և զինքը բարեւեց ու իմացուց
 որ որդի մը պիտի ծնանի ու անունը Յիսուս
 (Փրկիչ) պիտի դնէ : Մարիամ իսկզբան շատ
 այլայլեցաւ , բայց երբոր հրեշտակէն իմացաւ
 որ Եղիսաբեթ իր ազգականն ալ յղի է , և
 թէ Հոգւոյն սրբոյ զօրութեամբը այս բանս
 պիտի կատարուի , հաւանեցաւ և անմիջապէս
 Արդին Աստուծոյ իր ծոցին մէջ մարմին առաւ :

Հ. Մարիամ աւետուելէն վերջը ինչ ըրաւ :

Պ. Աւրախուժեամբ լեցուած ելաւ Եղի-
 սաբեթին գնաց զինքը բարեմաղթելու համար :
 Բարեմայ այցելութեամբ Եղիսաբեթ Հոգւով
 սրբով լեցուեցաւ , սուրբ Յովհաննէս արգան-
 դին մէջ սրբուեցաւ : Մարիամ երեք ամիս
 հոն կենալէն ետեւ իր տունը դարձաւ :

Հ. Մարիամ ու՞ր և ինչպէս ծնաւ զՅիսուս :

Պ. Մարիամ զՅիսուս Բեթղեհէմ քաղքին մէջ ծնաւ : Օգոստոս Հռովմայեցւոյ կայսրը հրաման հանեց , որ իր հպատակներուն ամէնքն ալ իրենց ջուն քաղաքը գրի անցունին : Այս պատճառաւ Յովսէփ ու Մարիամ ալ Բեթղեհէմ գացին , վասն զի Դաւթի թագաւորական անէն էին : Բեթղեհէմ երբ հասան բոլոր իջեւանները օտարականներով լեցուն էր , ուստի ստիպուեցան ախորի մը մէջ քաշուիլ : Եւ հոն ծնաւ Մարիամ մանուկ Յիսուսը :

Հ. Յիսուսին ծնունդը որո՞նց յայտնուեցաւ և որուն ձեռքով :

Պ. Հրեշտակին ձեռքով հոն մօտ տեղ դանուող հովիւներուն յայտնուեցաւ , որոնք իրենց հօտին պահպանութիւն կ'ընէին : Ասոնք մէկէն զարհուրեցան , բայց հրեշտակէն քաջալերուած , որն որ իրենց կ'աւերաէր թէ Բեթղեհէմ ձեզի Փրկիչ մը ծնաւ , եւ հրեշտակաց բազմութիւն մ'ալ երեւցաւ , որոնք Փառք ի բարձունս Աստուծոյ երգելով զԱստուած կ'օրհնէին , անմիջապէս ելան այրն եկան , զՅովսէփ և զՄարիամ ու Յիսուսը մօրը գիրկը տեսան և իրեն երկրպագութիւն բրին :

Հ. Մոգերը ուստի շարժեալ Երուսաղէմ
եկան : Հերովդէս ինչ ըրաւ :

Պ. Մոգերը արեւելք արտաքոյ կարգի աւ-
տըղ մը տեսնելով իմացան որ Հրէից նոր թա-
ղաւոր մը ծնած պիտի ըլլայ . ուստի ելան Ե-
րուսաղէմ եկան զինքը կը փնտռէին որ անոր
երկրպագութիւն ընեն : Հերովդէս այս բանս
լսելով շատ այլայլեցաւ , վախնալով որ իր թա-
ղաւորութիւնը ձեռքէն կը յափշտակէ , ուստի
քահանայապետներէն ու դպիրներէն իմանալով
անոր ուր ծնած ըլլալը , դադարուկ մոգերը կան-
չեց եւ զիրենք Բեթղեհէմ խրկեց որ երթան
փնտռեն , եւ երբ գտնեն իրեն ալ իմացնեն որ
ինք ալ երթայ անոր երկրպագութիւն ընէ :

Հ. Մոգերը նորածին թաղաւորին տեղն
ի՞նչպէս գտան եւ ի՞նչ ըրին :

Պ. Մոգերը երկրորդ օրը կանուխ ճամբայ
եկան եւ արեւելք տեսած աստղնորէն իրենց
առաջնորդութիւն ըրաւ եւ Յիսուսին ծնած այ-
րին վրայ եկաւ կեցաւ : Ներս մտան անոր եր-
կրպագութիւն ըրին , եւ ոսկի , կնդրուկ եւ
զմուռս ընծայ տուին : Գիշերը իրենց երազին
մէջ Աստուծմէ հրաման առնելով , առանց Հե-
րովդէսին դառնալու ուրիշ ճամբով տեղ ընին
դայնին :

Հ. Յիսուս ե՞րբ 40 օրուան եղաւ ծնողքն

Ի՞նչ ըրին : Սիմէոն ու Աննա ո՞վ են :

Պ. Սուրբ Կոյսն ըստ օրինաց Յովսեփի իր օրդինն տաճար տարաւ եւ զոյգ մը տատրակով Աստուծոյ ընծայեց : Սիմէոն ծերունին , որուն Հոգին սուրբ խոստացած էր որ չմեռած Փրկիչը պիտի տեսնէ , անոնց դիմացն ելաւ , ու մանուկ Յիսուսը գիրկն առաւ եւ Աստուծոյ շնորհակալ եղաւ որ մարմնաւոր աչօք Փրկիչը տեսնելու արժանի եղաւ : Կոյնպէս Աննա մարդարէն ալ տաճարը դտնուելով զՅիսուս տեսնելուն վրայ շատ ուրախացաւ եւ Աստուծոյ փառք տուաւ :

Հ. Հերովդէս ի՞նչ ըրաւ երբ որ մոգերն չդարձան :

Պ. Հերովդէս փուճ տեղ մոգերուն դառնալուն սպասելէն ետեւ , երբ տեսաւ որ խաբուեցաւ . խիստ բարկացաւ ու շատ մը դօրք խրկեց , Բեթղեհէմ եւ անոր սահմանները օրչափ որ երկու տարւընէ վար տղայ կար բոլորն ալ սպաննել տուաւ , կարծելով որ անոնց հետ նաեւ նորածին թագաւորը մանուկ Յիսուսն ալ կսպաննուի :

Հ. Յիսուս ի՞նչպէս Հերովդէսին ձեռքէն ազատեցաւ :

Պ. Հրեշտակ մը գիշերը Յովսեփիայ ընոյն մէջ փտանդն անոր իմացուց եւ հրաման տը-

ուսու որ Յիսուսի ու Մարեմայ հետ Եզիպտոս
փախչի :

Հ. Յովսէփ Յիսուսի ու Մարեմայ հետ Ե-
զիպտոսէն ե՛րբ դարձաւ :

Պ. Յովսէփ Հերովդէտի մեռնելէն վերջը նո-
րէն հրեշտակին հրամանաւ Նազարէթ դար-
ձաւ ու հոն բնակեցաւ :

Հ. Յիսուս ե՛րբ կորսուեցաւ եւ ո՛ւր գլու-
նուեցաւ :

Պ. Յիսուս երբոր 12 տարւան էր , անդամ
մը ծնողաց հետ Չաակի տօնին պատճառաւ Ե-
րուսաղէմ գնաց , եւ անոնք ետ դարձած ա-
տեն ինք հոն մնաց : Մարիամ եւ Յովսէփ իս-
կըզբան կարծելով որ իրեն ազգականներուն
հետն է , այնչափ հոգ չէին ընել , բայց օր-
ուան մը ճամբայ ընելէն ետեւ երբոր զինքն
անոնց մէջ չգտան մեծ ցաւով նորէն Երուսա-
ղէմ դարձան ու երեք օր փնտռելէն վերջը առ-
ճարին մէջ գտան որ դպրաց մէջ նստած ա-
նոնց հարցումներ կ'նէր եւ ըսուածները մտիկ կը
նէր , այնպէս որ ամէնքն ալ անոր իմաստու-
թեան վրայ կը զարմանային :

Հ. Յիսուս Նազարէթ դառնալէն վերջը մին-
չեւ իր երեսներորդ տարին ի՞նչ ըրաւ :

Պ. Իւր հօրը մօրը հնազանդ ըլլալով իմաս-
տութեամբ ու շնորհօք կ'աճէր :

ՄԱՍՆ Բ

ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈՉՈՒԹԵՆԷՆ ԻՆՉՈՒԱՆ

ՉԱՐՉԱՐԱՆԻՆ ԵՒ ՄԱՀԸ

Հ. Յովհաննէս Մկրտիչ քարոզելու շնորհիւ
ո՛ւր կը բնակէր :

Պ. Անապատի մէջ կը բնակէր, ուր խիստ
կեանք մը կ'անցընէր, իր զգեստը ուղտի մաշկ
էր, կերակուրն ալ վայրենի մեղր :

Հ. Յովհաննէս ո՛ւր և ի՞նչ կը քարոզէր :

Պ. Յորդանան գետին քով կը քարոզէր
որ ապաշխարեն, որովհետեւ Աստուծոյ արքա-
յութիւնը մօտեցած է : Ժողովուրդն իր վրայ
այնպէս մեծ համարում ունէր, որ զինքը Մե-
սիան կը կարծէին : Բայց Յովհաննէս յայտնա-
պէս անոնց հասկըցուց որ ինք Մեսիան չէ,
և ոչ ալ արժանի է անոր կօշկացը կապելը
քակելու :

Հ. Յիսուս ուր և որմէ մկրտուեցաւ :

Պ. Յորդանան գետին մէջ Յովհաննէս մը
կըրտչէն մկրտուեցաւ :

Հ. Յիսուսի մկրտուելու ատենը ի՞նչ պա-
տահեցաւ :

Պ. Երկինք բացուեցաւ ու Հոգին սուրբ
աղաւնակերպ վրան իջաւ ու երկինքէն ձայն
մ'ալ եկաւ որ կ'ըսէր . Այս է իմ սիրելի և ին-
ժի հաճոյ Որդիս :

Հ. Յիսուս մկրտուելէն վերջը ուր գնաց :

Պ. Անապատ գնաց ու հոն 40 օր պահք
պահեց :

Հ. Յիսուս սատանայէն ինչ'պէս փորձուե-
ցաւ :

Պ. Քառասուն օր պահք պահելով մար-
մինը շատ տկարացաւ , ուստի սատանան քովը
մօտեցաւ զինքը փորձելու համար . և Նախ
որկրամայութեամբ՝ ըսելով որ քարերը հացի
փոխէ . Երկրորդ անապարժութեամբ՝ ըսելով որ
տաճարին աշտարակէն ինք պինքը վար նետէ ,
որպէս զի ժողովրդէն զարմացուի . և Երրորդ
լնչասիրութեամբ՝ խոստանալով անոր աշխարհ-
քիս բոլոր հարստութիւնը , եթէ իրեն (սատա-
նային) երկրպագութիւն ընէ :

Հ. Յիսուս այս փորձութեանց ինչ'պէս
յաղթեց :

Պ. Սատանան քովէն վռնտելով . նոյն ա-
տեն հրեշտակները եկան և զինքը կը պաշ-
տէին :

Հ. Յիսուսի առջի աշակերտները որոնք
էին :

Պ. Անդրէաս ու Յովհաննէս , որոնց հետ
վերջէն միացան Սիմոն Աւարոս , Փիլիպպոս ու
Նաթանայէլ (Բարժուղիմէոս) :

Հ. Յիսուս իր առջի հրաշքն ո՛ւր գործեց

Պ. Գալիլիայի Կանա քաղաքը հարսնիքի
մը մէջ գործեց , ուր գինին պակսելով Յիսուս
հոն եղած վեց թակոյկները (քիւփ) ջրով լե-
ցընել տուաւ , ու հրամայեց որ տակարապե-
տին տանին , որն որ ճաշակելով տեսաւ որ
ջուրը գինուոյ փոխուեր է :

1

ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆ

ԵՒ ԱՌԱՋԻՆ ԶԱՏԻԿԸ

Հ. Յիսուս առաջին անգամ հրապարակաւ
ուր երեւցաւ :

Պ. Զատիկի տօնին Երուսաղեմի տաճարը
դնայ , ու հոն լուսնայափոխներն ու կենդանի
ծախողները աեանելով բարկացաւ ու չուանէ
խարաղան մը շինեց , և զիրենք անկից դուրս
վաճառեց ըսելով որ իմ հօրս տունը վաճառա-
տեղի չէ :

Հ. Յիսուսին այս գործքը Հրէից ինչպէս
երեւցաւ :

Պ. Գլխաւորներուն ու քահանայից շատ մեծ զարմանք պատճառեց, մինչև սկսան հարցրնել, որ Ս.յս բանս ընելու իշխանութիւն ունենալդ ինչ նշանով կրնաս ցուցրնել: Ասոնցմէ մէկն էր Նիկողեմիոս անունով հրեայ իշխան մը ասի դիշեր ատեն Յիսուսին եկաւ աղաչեց որ իր վարդապետութիւնները իրեն սովորեցրնէ:

Հ. Յիսուս Նիկողեմիոսին գլխաւորաբար ի՞նչ սովորեցուց:

Պ. Նախ արքայութիւն մտներու համար պէտք է մկրտուիլ. երկրորդ թէ ինք մարդիկ փրկելու համար աշխարհք եկած է, երրորդ թէ պէտք է իր աստուածութեանը հաւատալ:

Հ. Յիսուս Երուսաղեմէն Նազարեթ դարձած ատեն ճամբան ի՞նչ պատահեցաւ: Սամարացի կնոջ հետ ինչ խօսեցաւ:

Պ. Ճամբան յողնելով Ղրհորի մը քով նըստաւ: Մէյ մ'ալ Սամարացի կին մը ջուր առնելու եկաւ: Յիսուս իրմէ ջուր ուզեց, և ըսկրսաւ վարդապետել ըսելով ինչպէս որ այս ջուրը մարմնոյն ծարաւը կ'անցրնէ, այսպէս ալ իր աստուածային վարդապետութիւնը մարդու հոգւոյն ծարաւը կը մարէ, և ով որ իր վարդապետութիւնները կ'նդունի երջանիկ կըլլայ թէ այս աշխարհիս մէջ ու թէ այնդիկ աշխարհքը: Բարձեալ սովորեցուց որ Աստու.

ժող երկրագագութիւն պէտք է ընել հողուովու
հշմարտութեամբ, և վերջապէս ինք զինք
յայտանեց որ Մեսիան է :

Հ. Սամարայի կինը երբ ասոնք լսեց ի՞նչ
ըրաւ :

Պ: Եւստ մը քաղաք վազեց մարդիկները
կանչելու համար, ասոնք եկան ու զինքը ի-
րենց քաղաքը հրաւիրեցին : Յիսուս զնաց ու
երկու օր իրենց քով կեցաւ եւ իր քարոզա-
թեամբը անոնց մէջէն շատերը դարձուց :

Հ: Յիսուս Սամարիայէն ո՞ւր գնաց եւ ի՞նչ
գործեց :

Պ. Կանա դարձաւ եւ հոն թաղաւորապէս
մը որդին ծանր հիւանդութենէ բժշկելէն ետեւ
Կափառնաում գնաց եւ հոն բնակեցաւ : Օր մը
Յիսուս Գեննեսարեթայ ծովակին քովերը պը-
տրտած ատեն՝ Սիմոն ու Անդրէաս ու Զե-
բեթէոսին երկու որդիքը Յակոբոսն ու Յով-
հաննէսը, որոնք ձուկ կ'որսային, կանչեց որ
իր ետեւէն գան, որոնք սիրով անոր աշակերտ
եղան : Աոյն ատեն շատ բաղմութիւն ժողուե-
լով Յիսուս Պետրոսին նաւը մտած զամաքէն
հեռացաւ ու նախն մէջէն կը քարոզէր : Աը-
մբննապէն վերջը Պետրոսին ըսաւ որ նաւը աւ-
ելի բացը տանի եւ ուսկանը ծով երկնցընէ :
Պետրոս հնազանդելով անբաւ ձկանց որս մ'ըրաւ :

Այնուհետև Յիսուս իրենց հետ կափառնաում մտաւ եւ հոն գիււահար մը բժշկելէն վերջը Պետրոսին տունը գնաց անոր զոքանչը ջերմէն ազատեց :

Հ. Յեսուս կափառնաում եղած ատեն ուրիշ ի՞նչ պատահեցաւ :

Պ. Միշտ հրաշագործութիւններ ընելով ժողովուրդը քօլէն շէր հեռանար : Անգամ մը անոնցմէ քիչ մը հեռանալ ուղելով աշակերտաց հետ նաւ մտաւ գիւմաց անցնելու համար : Այս ճամբան սաստիկ ալէկոծութիւն մ'ելաւ , եւ Յիսուս աշակերտաց արթընցընելովը քնէն ելաւ ու իրենց թերահաւատութիւնը յանդիմանելէն վերջը ծովուն ու հովին սաստեց ու մէկէն խաղաղեցաւ : — Երբ Գերգեսացուց երկիրն անցաւ , հոն գերեզմաններու մէջ ընակող երկու գիււահարաց պատահեցաւ , որոնք կ'աղաչէին որ զիրենք չտանջէ : Իսկ սատանաները Յիսուսէն խնդրեցին որ հոն դանուող խողերուն մէջ մտնեն : Յիսուս հրաման տալուն պէս խողերը գիււահարեցան ու ծով նետուելով խեղդուեցան : — Երբ որ կափառնաում դարձաւ բաղմութիւնը քովը ժողուեցաւ , անանկ որ քանի մը հողի՝ բժշկելու համար անդամալոյծ մը բերին ու Յիսուսին կեցած տեղը շիրնալով տանիլ , տան առաստաղը քակելով անդամալոյծը

անկէ վար իջուցին : Յիսուս անոնց հաւատքը տեսնելով անդամալոյծին Մեղքը թողուի , ըսաւ : Փարիսեցիք այս բանս հայհոյութիւն կարծեցին . աստուծմէ զատ ո՞վ կրնայ մեղքը թողուլ կ'սէին : Յիսուս մեղաց թողութիւն տալու իշխանութիւնը ցուցընելու համար , անդամալուծին ըսաւ որ անկողինն առնու երթայ , որն որ կատարեց : Հոն կեցողները այս տեսնելով Ս. ատուծոյ փառք կուտային :

Հ. Յիսուս Երուսաղէմ չգացած ուրիշ ի՞նչ բաներ ըրաւ :

Պ. Նորէն կափառնաւորմէն Գալիլիայի ծովեզերքը գնաց ու հոն տեղուանքընախ Մատթէոս անունով մաքսապետը աշակերտութեան կանչեց : Մատթէոս շուտ մը տունը տեղը թողուց Յիսուսին ետեւէն գնաց եւ իր շնորհակալութիւնը ցուցընելու համար զՅիսուս կերակրոյ հրաւիրեց իր փարիսեցի բարեկամաց հետ , որոնք Յիսուսին այս հրաւերն ընդունելուն համար սկսան զինքը բամբասել . բայց Յիսուս կարճ խօսքով զիրենք պապանձեցուց : — Երկրորդ Յայրոս անունով թողովրդապետի մը տունը գնաց , եւ անոր մեռած աղջիկը ողջնցուց : — Գալիլիայի ծովեզերքէն ետ դառնալու ատեն երկու կոյր ետեւէն կուգային ու կը կանչէին Յիսուս որդի Դաւթի ողորմէ մեղի . Յիսուս ձեռ-

ուրները անոնց աշուքներուն վրայ դնելով, բա-
ցաւեցան: Վերջը կտփառնառմէն ելաւ Նա-
զարէթ իր գաւառը եկաւ որ շարաթ օրերը
ժողովրդանոցին մէջ կը վարդապետէր:

2

ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻՆ
ՈՒ ԵՐԿՐՈՐԴ ԶԱՏԻԿԸ

Հ. Յիսուս ինչ առթով Երուսաղէմ դնաց
եւ հոն ինչ ըրաւ:

Պ. Զատկի տօնին պատճառաւ Երուսաղէմ
դնաց, ու Պրորաստիկէ ըստած աւաղանին քով
ՅՏ տարիէ ի վեր պառկած հիւանդ մը առող-
ջացուց: Այս բժշկութիւնն ըրած օրը շարաթ օր
մըն էր: Հրեայք ու Փարիսեցիք, որ Յիսուսի
դէմ էին, այս դէպքը եւ մանաւանդ որ ինչ
շարաթ օր մը ալ ձեռքը դօսացած մարդը ըր-
ժըշկելը տեսնելով շատ բարկացան ու խորհուրդ
ըրին թէ ի՞նչպէս զինք մեռցընեն: Իսկ Յիսուս
անոնց միտքն իմանալով Գալիլիայի ծովուն քա-
վերը դնաց:

Հ. Յիսուս 12 առաքիւղները ե՞րբ ընտրեց.
անուններն ի՞նչ են:

Պ. Օր մը լերան վրայ ելաւ , բոլոր ղեշեր
 աղօթք ըրաւ և առտու ըլլալուն պէս իր աչա-
 կերաներուն մէջէն ոմանք լերան վրայ կան-
 չելոյ՛ անանցէ 12 հոգի զատեց , զորոնք ա-
 ռաքեալ անուանեց : Ասոնց անուններն են Ս.
 Սիմոն Արարոս , Բ. Անդրէաս անոր եղբայրը :
 Գ. Յակոբոս մեծ . Զերեթեայ որդին , Դ. Յով-
 հաննէս անոր եղբայրը , Ե. Փիլիպպոս , Զ.
 Բարթոլոմէոս , Է. Թովմաս , Ը. Մատթէոս ,
 Թ. Յակոբոս Փոքր , Ժ. Սիմոն Կանանայի
 ԺԱ. Թադէոս , ԺԲ. Յուդա Իսկարիոսացի :

Զ. Յիսուսի վարդապետութեանց մէջէն
 աննէնքն երեւելին սին է :

Պ. (Ահա ան վարդապետութիւն) ըստ ան
 է , որն որ լերան մը վրայ ըրաւ որ շատ
 ժողովուրդ կար : Այս վարդապետութեան
 մէջ եօթը երանութենէն զատ առնք ալ սով-
 րեցուց թէ ճշմարիտ երջանկութիւնը որտի
 մաքրութեան վրայ կը կայանայ . թէ Յէտք
 ենք նսն իսկ մեր թշնամիները սիրել և զմեզ
 հաղածողներուն բարիք ընել . թէ Սէր ընկե-
 թին ըրած շարիքին գիմարը բարիք պէտք
 ենք ընել և թէ պէտք ենք ամէն բանէն յա-
 ապ Աստուծոյ արքայութիւնը ինքրել ճիւ-
 ցած հարկաւոր բաները մեզի կը տրուի :

Զ. Յիսուս երբ լեռնէն վար ինչու ինչ
 9

պատահեցաւ :

Պ. Բորոտ մ'եկաւ իրմէ բժշկութիւն խնդրեց : Յիսուս ձեռքը վրան երկնցնելուն պէս բժշկուեցաւ : — Երբոք կափառեալ մ'եկաւ , Հրեայք հարիւրապետի մը կողմանէ եկան ազաչելու որ դայ անոր հիւանդ ծառան բժշկէ : Յիսուս յանձն առաւ ու իրենց հետ դընաց . բայց հարիւրապետը մարդ խրկեց անոր բնել տալով թէ Արժանի չեմ անանկ հիւր մը տունս ընդունելու միայն խօսք մ'ըսէ , ծառաս կը բժշկուի : Յիսուս անոր հաւատքին ու խոնարհութեան վրայ շատ դարմացաւ ու ծառային ալ առողջութիւն պարգեւեց : Այնուհետեւ Յիսուս Գալիլիայի Նային քաղաքն եկաւ ու հոն այրի կնոջ մը մեռած մեկ հատիկ աղան ողջընցուց :

Հ. Միման ո՛վ է . և ինչ պատահեցաւ :

Պ. Միման Փարիսեցի մըն էր , որն որ Յիսուսը կերակրոյ հրաւիրեց . Յիսուս ալ յանձն առաւ : Քաղքին մէջ գէշ կնիկ մը կար , որն որ Յիսուսին Փարիսեցւոյն տունն ըլլալը լսելով ինչ մը ազնիւ իւղ առած հոն դնաց : Յիսուսին սաքն ինկաւ , սկսաւ մեղքերուն վրայ լալու արցունքովը կը թրջէր , մազերովը կը շորցընէր վերջը կը պագնէր ու իւղով կ'օծէր : Յիսուս այն կնոջ գղջումն ու իրեն ցուցըցած

մեծ սէրը տեսնելով մեղքերուն թողութիւն
տուաւ :

Հ Յիսուս երբ որ Ասիառնաում եկաւ
ի՛նչ ըրաւ :

Պ. Գարձեալ քովը շատ բազմութիւն
ժողովուեցաւ , և իրեն կոյր ու համբ դիւահար
մբ բերին . Յիսուս զանի բժշկելով դիւահարը
սկսաւ խօսիլ : Փարիսեցիք՝ երբ գործած հը-
րաշքը լսեցին Սատանաներուն մեծին ձեռքո-
վը կը գործէ ըսին . Յիսուս նոյն խօսքին ա-
նիրաւ ըլլալը ցուցուց և այս առթով ժողովըր-
դեան օգտակար խօսակցութիւն մ' ըրաւ ու
ցուցուց թէ Հօգևոյն սրբոյ դէմ դնելը մեծ մեղք
է , իր երեքօրեայ յարութիւնը Յովնանին պատ-
մութեամբք անոնց հասկըցուց : Գարձեալ ա-
պաշխարելէն վերջը նորէն առջի շար ճամբան
դառնալը գէշ բան ըլլալը օրինակաւ մ' իմա-
ցուց : Ասոնք խօսած ատեն մայրն ու աղդա-
կանները եկան և զինքը կ'ուզէին , Յիսուս
անոնց յայտնեց որ իր երկնաւոր հօրը կամքք
կատարողները իր մայրն ու եղբարքն են . Նոյն
օրը ելաւ ծովին քով դնաց և հոն կը վար-
դապետէր : Բայց տեսնելով որ բազմութիւնը
կը շատնայ նաւ մտաւ ու անոր մէջէն սկսաւ
ժողովրդեան առակներով խօսիլ : Սերմանացա-
նին առակովը ցուցուց թէ ինչպէս պէտք է

Աստուծոյ խօսքը լսել ու պահել : Աղարակին
 առակովք երկնից արքայութիւնը (եկեղեցին)
 անոնց նկարեց : Բարձեալ նոյն արքայութիւնը
 նմանցուց մանանխոյ (խարտալ) հատի , մար-
 ցարտի , խմորոյ ծովը ձգուած ուսկանի սրուն
 մէջ ամէն տեսակ ձուկ կ'իյնայ , սերման , ո-
 ըրն որ դիշեր ցորեկ ինք իրեն կ'ածի կը հաս-
 նի :

Հ. Յովհաննէս մկրտիչ ե՛րբ եւ ինչո՛ւ դըր-
 խատուեցաւ :

Պ. Այն ատենները Հերովդէս Անդիպ-
 պասին հրամանաւր բանտի մէջ դիխատուեցաւ ,
 Հերովդէսին աղջկան խնդրելովք : Յովհաննէս ին
 աչակերտները անոր մարմինը թաղեցին եւ ե-
 կան Յիսուսի պատմեցին :

Հ. Յիսուս այնուհետեւ ուր գնաց եւ ի՛նչ
 կ'ընէր : Առաքեալները ե՛րբ քարոզութեան
 խրկեց :

Պ. Քաղաքներն ու դիւղերը պարտելով
 Աստուծոյ արքայութիւնը կը քարոզէր : Հաս-
 ուերկու առաքեալներէն զատ հետը քանի մը
 կնիկներ ալ կ'երթային , զորոնք Յիսուս զա-
 նազան հիւանդութիւններէ ազատած էր : Եր-
 բոր Յիսուս տեսաւ ժողովուրդը , վրանին խըղ-
 ճաց որ առանց հովուի մնացած ոչխարներու
 պէս ցրուեր են : Աւտի առաքեալները կանչեց ,

իրենց իշխանութիւն տուաւ որ երթան քարոզեն, հիւանդներ բժշկեն, դիւահարները սատանային ձեռքէն ազատեն. շատ մը խրատներ տալով զոյգ զոյգ խրկեց :

Է. Յիսուս ինչ առթով հացը առջի անդամ շատցուց :

Գ. Յիսուս որ մը քարոզելով ու բժշկութիւններ ընելով իրիկուն եղաւ : Ժողովուրդը շուղեց անօթի տուն խրկել. հոն տղու մը քով հինգ հաց ու երկու ձուկ կար : Յիսուս հացը ու ձուկը շատցընելով դիցենք կշտացուց որ 5000 հոգի էին. կնիկներն ու տղաքը համբելով : Ժողովուրդը այս որ տեսաւ, ճշմարիտ մարդարէն է ըսելով ուղեց զինքը թագաւորընել : Բայց Յիսուս աճապարեց շուտ մը առաքելները նաւ դրաւ ճամբեց ինքն ալ ժողովուրդը ձգեց լերան վրայ ելաւ աղօթելու : Առաքելները ծովին մէջ այէկոծութեան բռնուելով, Յիսուս գիշերը ծովուն վրայէն քալելով իրենց կ'երթար : Առաքելալք խկզբան տուաւ տեսիլք մը կարծեցին, բայց Յիսուս ինք ըլլալը իմացուց, Պետրոս հրաման առնելով ծովին վրայէն Յիսուսին կուգար. ճամբան երբ խեղդուելու մօտ եղաւ Յիսուս անոր ձեռքէն բռնեց և մէկտեղ նաւ մտանք և կափառնաւ զացին :

ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻՆ
ԵՒ ԵՐՐՈՐԻ ԶԱՏԻԿԸ

Հ. Յիսուս Կափառնաուամէն ո՛ւր գնաց :
Գալիլեա ի՛նչ գործք գործեց :

Պ. Զատկի տօնին պատճառաւ Երուսա-
ղէմ գնաց : Հոս Փարիսեցիներէն ամբաստա-
նութիւն լսեց առաքելոց վրայ, որ առանց ի-
րենց ձեռքը լուարու հաց կ'ուտեն. Յիսուս ա-
նոնց աւելորդապաշտութիւնը երեսը զարնելով
ու սովրեցընելով որ միայն մարդուն քրտէն ե-
լած պղծութիւնն ու չարութիւններն զինքը
կը պղծէ, ելաւ Տիւրոսի ու Սիդոնի կողմերը
գնաց : Հոն ալ յայտնուեցաւ իր ո՛վ ըլլալը,
քանանացի կնոջ աղաչանքին լսելով, անոր խո-
նարհութեանը համար, իր այսահար աղ-
ջիկը սատանային ձեռքէն ազատեց :

Հ. Յիսուս Տիւրոսէն ո՛ւր գնաց եւ ինչե՛ր
գործեց :

Պ. Գալիլիայի ծովուն քովերը գնաց, ու
հոն խուլ եւ համր մարդ մը բշտկեց : — Այ-
սուհետե հոն լեռ մ'ելաւ ու քովը ժողուած
բազմութեան մէջէն կաղերը, կոյրերը ու ամէն
տեսակ հիւանդութիւն ունեցողները բժշկեց : —

Ժամանակը ուշացած ըլլալով հոս երկրորդ անգամ եօթը հացով ու քիչ ձուկով 4000 հոգի կերակրեց, կնիկներն ու տղաքը շահուելով: — Ժողովուրդը խրկելէն վերջը աշակերտաց հետ նաև մտաւ ու Գաղմանունայ կողմերը գնաց: Հոս առջեւը կոյր մը բերին, որուն աչքերուն թուք քսելով ու ձեռքը վրան գնելով բացաւ, ու պատուիրեց որ մէկուն չպատմէ:

Հ. Յիսուս ո՛ւր այլակերպեցաւ,

Պ. Փիլիպպիայ կողմերը գալով հոն առաջեկաց հարցուց թէ իրենք դո՛վ կը կարծեն զինքը. Պետրոս անոր Բրիստոս Որդի Աստուծոյ ըլլալը խոստովանելով Յիսուս երանի տուաւ անոր: Ասկէց վեց օր ետքը Յիսուս՝ Պետրոս, Յակոբոս ու Յովհաննէս առաքեալներուն հետ Թաբոր բերը ելաւ աղօթելու: Հոն մէկէն երեսը փոխուեցաւ լուսաւոր կերպարանք մը առաւ, Մովսէս ու Եղիա երեւցան ու հետք խօսեցան: Յիսուս պատուիրեց առաքեալներուն որ իրենց տեսածը մէկուն չպատմեն մինչև որ յարութիւն առնէ:

Հ. Լեռնէն ինչպիսի ատեն ի՞նչ բաներ պատահեցան:

Պ. Յիսուսին գիմաղը մեծ բազմութիւն մը ելաւ: Մէջերնէն մէկը կ'աղաչէր որ ողորմի իր մէկհատիկ որդւոյն, որն որ լուսնոտ էր ու առ-

ամնայէն շարաչար կը տանջուէր . Առաքելաց
 բերի , ըսաւ , բայց շիրցան բժշկել : Յիսուս թէ'
 անոր , թէ' ի՞նչ որդւոյն եւ թէ' առաքելաշնորհուն
 թերահաւատութիւնը յանդիմանէլէն ետեւ ,
 ազանս առջեւը բերել տուաւ , ազատեց տ. կա-
 տարեալ տռողջացոյց : — Երբ կափառնաւ մ
 եկան , սովորական տուրքը վճարելու համար՝
 'Պետրոս առաքելալը խրկեց որ երթայ ծով կարթ-
 նեռէ , առջի բռնած ձկան բերանը բանայ , ե-
 լած ստակը իրենց իրկուքին համար վճարէ : —
 Երբոր առաքելաշնորհուն մէջ իննդիք ելաւ թէ
 մէջերնէն ո՛վ է մեծ , Յիսուս դիտենք խորատեց
 ըսելով Մէջերնէդ գլխաւոր ըլլողն՝ ինք դինքը
 ամենէն պարտիկ տեսէ : Եւ դայթակողութեան
 ինչչափ մասաւոր բան ըլլալը յայտնեց : Եղ-
 ղայտական յանդիմանութեան վրայ ալ խօսք
 բացուելով՝ Պետրոս առաքելային հարցմանը որ
 'Բանի անդամ պէտք է ներել , պատասխան
 տուաւ թէ միշտ ներելու է :

Է. Յիսուս տաւր բորոճները ո՛ւր եւ ի՛նչ
 պէս բժշկեց :

Թ. Երուսաղէմ դացած ասեմն , երբոր Առ-
 մարիայի ու Գաբրիէլայի մէջէն կ'անցնէր , դի-
 մացը տաւր բորոճ ելան , ու կ'աղաչէին որ ի-
 րենց ողորմի : Յիսուս օրինաց համեմատ իրենց
 հրամայեց որ իրենք զիրենք երթան քահա-

Նային ցուցրենն , Գային ցուցաւցին ու բժշկուեցան :

Ը. Փարիսեցիք Յիսուսի դէմ ի՛նչ մտածեցին :

Պ. Յիսուս ասողավարահարաց ասնին վերջին օրերը ասճար դալով սկսաւ ժողովրդեան վարդապետել : Ժողովուրդը անոր վարդապետութեանց վրայ կը դարձանար . բայց Փարիսեցիք վրան կը նախանձէին , անոր համար աչառ հնարքներ կը մտածէին որ զինքը մեռցրենն , բայց անոնցմէ մէկն ալ չյաջողեցաւ :

Ը. Յիսուս ի ծնէ կոյրը ի՛նչպէս բժշկեց :

Պ. Տանարէն երթալու ատեն ի ծնէ կուրիճը հանդիպեցաւ : Յիսուս զեռանք թքաւ կաշինեց կուրին աչայր քսեց ու պատուիրեց որ Սելուսամայ աւագանք լուայուի , կոյրը դնաց լուացուեցաւ եւ աչուները բացուեցան :

Ը. Յիսուսի 12 աշակերտներն ի՛նչ գործեցին .

Պ. Յիսուս 12 առաքեալներէն դատ 12 աշակերտ ալ ընտրած էր , ու զիրենք երկ'երկու խրկած էր այն քաղաքներն ու զխողերը պարտուելու , ուր որ ինքն ալ ետքէն պիտի հասնուիլէր : Սասնք շատ ատենէ վերջը եկան ու բախութեամբ Յիսուսին պատմեցին որ իր անուամբը սատանաները իրենց կը հնազանդէին :

Յիսուս զիրենք խրատեց որ անոր համար միայն
աւրախանան, որ իրենց անունը երկինք գըր-
աւած է :

Հ. Յիսուս աղօթք ընելու վրայ ինչ խօ-
սեցաւ :

Պ. Յիսուս առանձին տեղ մը աղօթելէն
վերջը, իր աշակերտներէն մէկը խնդրեց որ ի-
րենց աղօթք ընել սովորեցընէ : Ինքն ալ այս առ-
թով աղօթքի վրայ զանազան բաներ վարդա-
պետեց. եւ նախ ըսաւ որ պէտք ենք զԱստ-
ուած մեր հայրը կանչել եւ անոր մեծ վասա-
հաւթիւն ունենալ. երկրորդ ամէնքս ալ այս հայրը
պիտի սիրենք. մեր աղօթքին մէջ հողերուր բա-
րիքէն դատ՝ մարմնաւոր բարիք ալ կրնանք
խնդրել, միայն թէ անոնք Աստուծոյ փառաց
ծառայեն : Իսկ դատաւորին աւ այրի կնոջ մը
առակը խօսելով՝ աղօթքի մէջ մեր ունենալու
յարատեւութիւնը ցուցուց : Ապա շխարութեան
վրայ ալ զանազան օրինակներ բերաւ, որոնց
գլխաւորն է անառակ որդւոյն օրինակը : Իսկ
արծաթառէր Փարիսեցւոյ՝ Ասղարասինու մեծա-
տան առակը պատմեց :

Հ. Հրեայք զՅիսուս ինչաւ ու գեցին քար-
կոծել :

Պ. Երբոր անի նառակապետաց ասոնին օրե-
քը տաճարին՝ Սրահ Սողոմոնի ըստած տեղը

կը պտրտէր քովը ժողովուրդան ու ըսին եթէ Մեսիան ես դու յայտնի ըտէ մեզի : Յիսուս պատասխանեց , ես ըսի բայց դուք չէք հաստատար , վասն զի երկնաւոր Հօրս ոչխարներէն չէք ես և Հայրս մէկ ենք . Հրեայք այս որ լսեցին մէկէն զինքը քարկոծել ուզեցին : Յիսուս զիրենք թողուց Յորդանանէն անցաւ այն կողմերը դնաց , ուր որ յառաջ Յովհաննէս կը մկրտէր :

Ը. Յիսուս Յորդանանին անդի կողմերը ի՛նչ ըրաւ , Հարուստին ի՛նչ պատասխանեց :

Պ. Յիսուս Յորդանանին անդի կողմերը երբ դնաց . շատ բազմութիւն իրեն կուգային : Եւսե տղաք ալ կը բերէին զորոնք Յիսուս զիրկը առնելով Կորհնէր . Յիսուս նորէն Յորդանանէն ասդին Հրէաստանի սահմանն եկաւ երբ հոն հարուստ մը իրեն հարցուց թէ Յաւիտենական կեանքը ժառանգելու համար ի՛նչ ընեմ : Յիսուս պատուիրանները պահէ ըսաւ . Եւ երբոր հարուստը պատասխանեց Պրզտիկուց ի վեր պահած եմ : Յիսուս ըսաւ . Եթէ կատարեալ կ'ուզես ըլլալ , հարստութիւնդ թող ու ետեւէս եկուր . Այս խօսքիս հարուստը արտմած դնաց : Յիսուս մեծ արտի ցաւով առաքեալներուն իմացուց որ ինչչափ Գժուարին է արքայութիւն երթալ անանց , արանք իրենց

յոյսը ընչեց վրայ կը դնեն :

Է. Յիսուս Փարիսեցւոյ խնձնասիրութիւնը ինչպէս խայտառակեց :

Պ. Անգամ մ'ալ Փարիսեցւոց և անոնց նման կեղծաւորներուն անձնասիրութիւնը յանդիման չաւ համար, Փարիսեցւոյն ու մարտաւորին օրինակը բերաւ, որոնցմէ առջինը իր հպարտութեան համար դատապարտուեցաւ, աւերկրորդը իր խոնարհութեամբը արդարացաւ :

Ը. Ղազարոս ո՛վ է և ինչպէ՞ս յարութիւն առաւ :

Պ. Ղազարոս Յիսուսի բարեկամն էր . Յիսուս էր որ Յորդանանու կողմերն էր, Ղազարոս ծանր հիւանդ անաղով անոր Մարիամ ու Մարթա քոյրերն Յիսուսին իմացուցին որ իրենց եղբայրն հիւանդ է : Յիսուս երկու օր մ'ալ հոն ուշանալէն ետքը ելաւ առաքեալներուն հետ իւթածնիա եկաւ Ղազարոսին տունը, որն որ չորս օր յառաջ մեռած ու թաղուած էր : Յիսուս զիրենք միմիթարեւէն ու յառաջընեւէն ետեւ, դերեզման գնաց, աւ Ղազարոսը դուրս կանչեց, պատանքսը ելաւ : Այս առթով շատերը դարձան . բայց Փարիսեցիք քահանայապետներուն հետ խորհուրդորին որ զՅիսուս բռնեն մեռցնեն :

Ը. Յիսուս Եփրայիմէն Երուսաղէմ դա-
ցած ասեմը ինչե՛ր պատահեցան :

Պ. Յիսուս քիչ մը ասեմ Եփրայիմ կենա-
լէն ետեւ Երուսաղէմ դարձած ասեմն ճամբան
Սողոմէ՛ Չեքեղեայ օրդւոց մայրը՝ իր օրդիք-
ներէն գրգռած՝ Յիսուսէն խնդրեց որ երբ թա-
գաւոր ըլլայ՝ իր երկու օրդիքը Յակոբոս
ու Յովհաննէս՝ ալ ու ձախ դին նստեցընէ :
Յիսուս իրենց սովբեցուց որ իր թագաւորու-
թեան մէջ իշխելը՝ շարչարանք քաշելու նե-
ղութեանց համբերելու վրայ կայացած է : —
Քիչ մ'ալ յառաջ անսարով Երիքովի մէջ մու-
րացիկ կոյր մը բժշկեց : Այս առթով բազմու-
թիւնը ժողովուեցաւ : Զարէոս մարտապետն
ալ զՅիսուս ասեմել ուղելով հասակին կարճու-
թեանը համար ծառ մ'ելած էր . Յիսուս ա-
նոր Զարէ վար ինչի՛ր այսօր քու քովդ կե-
րակուր պիտ'որ ուտեմ ըսաւ . Զարէոս զինքն
ու բախտ թեանք ընդունեցաւ և խոստացաւ որ
իւր ընչից կէսը աղքատաց տայ : — Յիսուս Ե-
րիքովէն ելլելու ասեմն Բարտիմէոս կոյրը՝ մէկ
ուրիշ կոյր մարացկանի հետ բժշկեց :

Ը. Յիսուս Միմն բորտաին տունը կերա-
կուր կերած ասեմն ի՛նչ պատահեցաւ :

Պ. Զատիի տօնէն վեց օր յառաջ Բեթա-
նիա եկաւ . հօն Միմն անունով բորտա մը օ

քիչ մը յառաջ Յիսուսէն բժշկուած էր, զինքը
 առաքեալներուն հետ սեղանի հրաւիրեց. հր-
 րաւիրեալներուն մէկն ալ Ղազար էր, որուն
 Մարթա քոյրը սեղանին կը ծառայէր. իսկ
 Մարիամ քոյրը Յիսուսին ոտքը ազնիւ եղով
 զծեց ու դիւի մազերովը սրբեց շորցուց. եղին
 աւելցածն ալ դլուխը թափեց, Յուդա Իսկա-
 ըիովտացի ըսաւ. Սեղք այնչափ եղին, կրնար
 ծախուիլ ու գինն աղքատաց ողորմութիւն
 արուիլ: Յիսուս անոր ինչ հոգևով ըսած ըլլալը
 գիտնալով, ըսաւ. Ինք աղէկ գործք ըրաւ,
 աղքատներն ամեն ատեն ձեզի հետ են, բայց
 ես միշտ ձեր հետը չեմ: Հրեայք Յիսուսին
 Բեթանիա ըլլալն իմանալով հոն կը վազէին,
 որպէս զի թէ զինքն ու թէ Ղազարը տեսնեն:
 Անոր համար քահանայապետները մտացեցին
 որ Ղազարոսն ալ մեռցընեն, վասն զի անոր
 պատճառաւ շատերը Յիսուսի կը հաւատային:

Հ. Յիսուս Երուսաղէմ ինչպէս մտաւ ու
 հոն ինչ ըրաւ:

Պ. Յիսուս երկրորդ օրը առաքեալներուն
 հետ Երուսաղէմ գալու ճամբայ ելաւ: Զի-
 թենեաց լերան մօտ Բեթփիաղէ գիւղը մօտե-
 ցաւ երբ, աշակերտներէն երկուքը խրկեց որ
 դիմացի գիւղն եթէ ան ու հոն կապուած է՝ մը
 կար, քակեն բերեն: Անոնք գացին ու բերին

և Յիսուսը հեծուցած՝ սկսան Երուսաղէմ դալ :
 Երուսաղէմ մտած առեն ժողովուրդը արմա-
 ւենիի ու ձիթենիի ճիւղեր առած զինքը դի-
 մաւորելու եկան , և Ալսաննա կը կանչէին :
 Փարիսեցիք այս եղածները տեսնելով սրտմը-
 տած իրարու կըսէին , որ ըսն մը շկրցանք ը-
 նել . բայց աշխարհք անոր ետեէն կ'երթայ :
 Հ. Յիսուս երբ Երուսաղէմ մտաւ ուր
 գնաց :

Պ Եիտակ տանար գնաց և հոն եղող վա-
 ճաւականներն ու գնողները դուրս վաճնաց :
 Հոն իրեն եկող կոյրերն ու կաղերը բժշկեց
 և սկսաւ իրենց վարդապետել . իրիկունը Բե-
 թանիս գնաց :

Հ. Յիսուս երկրորդ օրը ուր գնաց և ինչ
 դործեց :

Պ. Սուտուն նորէն Երուսաղէմ դարձած
 առեն՝ անօթենալով , ճամբուն վրայի թղենիէն
 ուզեց քիչ մը ուտել , և վրան տերեւէն դատ-
 բան մը չգտնելով՝ ծառն անիծեց , ոյն որ
 չուտ մը չորցաւ , և անցաւ տանար գնաց ու
 հոն քահանայապետներուն , դպիրներուն ան-
 հաւատութիւնը , և ասոր համար ալ իրենց Աս-
 տուծոյ երեսէն ձգուած ըլլալն այլ և այլ ա-
 ռակներով ցուցուց : Բարձեալ ժողովրդեան
 խրատ տուաւ որ դպրաց ու Փարիսեցւոց կեղ-

Ժամորութենէն զդուշանան . անոնց վա՛յ տա-
 աւ ու Երուսաղեմին կործանելիքը մարդարէ-
 ացաւ : Ստնցմէ զամ տասը կուսանաց
 ա ըսանքարաթագոյց ծառային առակները
 զբուցելով զիրենք խրատեց որ իր աշ-
 խարհքս դատելու համար դալուն միշտ
 պատրաստ ըլլամ , եւ այս փառաւոր երկրորդ
 դալուսար անին ի տեղը ստորագրեց : Ս. յապէս
 Յիսուս կէսօրները տաճարին մէջ կը սպրեցը-
 նէր ու զիշերները Ձիթենեաց լեռ կ'երթար կը
 հանգչէր , մինչև որ աշխարհքէս փոխուելուն
 ծամանակն հասաւ :

Է. Քահանայապետները Յիսուսը մեռցը-
 նելու համար ի՛նչ խորհուրդ ըրին :

Պ. Քահանայապետներն ու զպիւրները ,
 զատկէն երկու որ յառաջ ժողովրդեան ծերե-
 բուն հետ կայիտիս ըստանալուին տունը
 ժողովուելով որոշեցին որ զՅիսուս մեռցընեն ,
 բայց այս տունին օրերը ըլլայ , կ'ըսէին , որպէս
 զի խռովութիւն մը չեմէ : Նոյն միջոցին Յուդա
 Նախարիտիտացին եկաւ իրենց ըսաւ . Ինձի ի՛նչ
 կուտար ես զինքը ձեզի կը մատնեմ : Անոնք
 ալ Յ() արծաթ խառացան : Յուդա յանձն ա-
 սաւ եւ նոյն ատենէն՝ զՅիսուս մատնելու առ-
 իթ կը փնտռէր :

Է. Յիսուս զատկապան դալունն ո՛ր կերտու

Սեղանին վրայ ինչ ըրաւ :

Պ. Յիսուս դատկական պատէքն ուտելու համար Աբարամն ու Յովհաննէսը քաղաք մարդու մը խրկեց որ անոր ասն վերնասան մէջ սեղանը պատրաստեն : Անոնք ալ դացին պատրաստեցին : Երիկուան դէմ Յիսուս առաքեալներուն հետ նոյն վերնաստունը դնաց, նստաւ ըստ օրինի դռանն ուտելու : Աւտելու ատեն Յիսուս սեղանէն ելաւ ու առաքելոց ստորը լուաց : Այնուհետեւ նորէն սեղան նստաւ, կեցած ատեննին սեղանի վրայի հացէն առաւ, աչաքները երկինք վերցուց դոհացաւ, կարեց աշակերտաց առաւ ըսելով Առէք կերէք, այս է իմ մարմինս : Նոյնպէս բաժակին առաւ դոհացաւ և աշակերտաց առաւ ըսելով ա՛մէնքդ ալ ակէց խմեցէք այս է իմ արիւնս եւ պատուիրեց որ իր մահուան յիշատակին համար այս խորհուրդը միշտ կատարեն : Ահրջը Յուդան դարձի բերելու համար անունը խնայուց որ իրենցմէ մէկը զինքը պիտի մասն : Առաքելաք շատ խառնեցան ու կը հարցնէին Արդեօք ե՞ս եմ : Յուդան ալ շանդոնթեալս հարցուց թէ Արդեօք ե՞ս եմ, վարդապետ : Յիսուս ալ Գուն ես, ըսաւ : Բայց Յուդա շղջ լաց : Յիսուս զինքը ճամբեց ըսելով ինչ պիտի ընես՝ դ՛նա ըրէ : Առաքեալք ակէ բան մը

Հասկըցան . արկղը ինք կրելուն կարծեցին
 որ գնելու կամ աղքատաց բան մը տալու խըր-
 կեց : Յուզա երթալէն ետե Յիսուս աշակեր-
 տաց բարբ իր դուխը դալի քները պատմեց ու
 երկայն իրաւա մը տուա , և գլխաւորաբար
 պատուիրեց որ դիրար սիրեն : Այնուհետե սե-
 դանը օրհնեց ու գէպ ի Չիթենեաց լեռը ճամ-
 բայ ելան :

Յիսուս Չիթենեանի պարտեզին մէջ ինչ
 ըրա : Ինչպէս բանուեցա :

Պ. Չիթենեաց լեռան մօտ պղտի պար-
 տեզով Չիթենեանի անունով գեղ մը կար ,
 Յիսուս առաքելաց հետ այս պարտեզը մտաւ
 և դիրենք հան թողուց , ու ապապրեց որ ա-
 դօթք ընեն : և ինք Աեարոս , Յովհաննէս ու
 Յակոբոս առաքելալները հետե առած պարտի-
 զին ներսի կողմերը գնաց : անոնք հան թող
 լով ինք քարանկէց մը աւելի հետ գնաց
 ու ադօթքի ետա : Ադօթքի տուն երեք
 անգամ առաքելալներուն այցելութիւն ըրաւ
 և երեք անգամ ալ դիրենք քնոյ մէջ դաւա :
 Աերջին անգամ անոնց եկաւ ու իր թշնամի-
 ներուն ձեռքը մաճմուելու տունը հասած ը-
 լար խնայուց : Այս ըսած տունը Յուզա խեղ
 մը բաղմոթիւն հետե առած լապտերներով ,
 Չահերով , սրերով ու բրեքով պարտեզ մտաւ և

ուղղակի Յիսուսին զնաց զինքը բարեւեց .
 Աղջ լեր , վարդապետ ըսելով պաղար : Յիսուս
 սիրոյ հայեցուածով մը , Ընկեր , ըսաւ , ինչու
 եկար . զՈրդի մարդոյ պաղներով կը մատնես :
 Անրջը բազմութեան առջեւը զնաց և իր Յի-
 սուս Նազովրեցի ըլլալը անոնց յայտնեց : Այս
 որ ըսեցին ամէնքն ալ ետե ետե երթալով դե-
 ասինը զարնուեցան : Թէ որ զիս կ'ուզէք , ըսաւ
 Յիսուս , ասոնք թող տուէք : Առաքեալք Յի-
 սուսէն խնդրեցին որ թշնամիները սրով դար-
 նեն . ու Աեսրոս մէկէն Մաղքոսին ալ ահան-
 ջը զարկաւ կտրեց : Յիսուս Աեսրոսին ըսաւ
 թէ սուրդ պատեանը դի'ր , և Մաղքոսին ա-
 կանջը բժշկեց ու թողուց որ զինքը կապեն .
 առաքեալք նոյն ատեն զինքը թողուցին ու
 փախան :

Հ. Հրեայք երբ զՅիսուս բռնեցին ուր տա-
 րին :

Պ. Նախ Աննա քահանայապետին տարին ,
 ուր Յիսուս իր տուած համեատ պատասխանին
 համար ծտուաներուն մէկէն ապտակ մ'ընդու-
 նեցաւ : Աննա Յիսուսը կապած կայիափայ
 քահանայապետին խրկեց : Հոս ալ Յիսուս
 սուտ վկաներէն զրպարտութիւն կրելով լուս-
 կեցաւ , և ինք զինք Քրիստոս Որդի Աստու-
 ծոյ խոստովանելով մահապարտութեան վճիռը

ընդունեցաւ . և ամէն տեսակ չարչարանք ու
թշնամանք կրեց : Նոյն գիշերը ինք քահա-
նայապետին առջին քննուած ատեն , Պետրոս
դուրսը սրահին մէջ Յիսուսը երեք անգամ
ուրացաւ : Յիսուս սրահը մտած ատեն անոր
էրեսը նայեցաւ , Պետրոս զղջաց , դուրս ելաւ
սկսաւ դառնապէս լալ : — Երբ Յուդա՝ Յիսու-
սի մահուան դատապարտուելուն լուրն առաւ ,
ըրածին վրայ զղջաց , Յիսուսը ազատելու հա-
մար ուզեց ամէն միշոյ ի գործ դնել . բայց
երբոր չյաշտեցաւ յուսահատեցաւ ու ինք
զինք կախեց :

Զ. Յիսուս Ապիստոլայէն ուր խրկուեցաւ :

Պ. Ապիստոլայէն կապուած Քիզատոսին
խրկուեցաւ : Քիզատոս Յիսուսին զանազան
հարցումներ ընելով անմեղ ըլլալը ճանչցաւ .
երբ Հրեաներէն անոր Գալիլայցի ըլլալը լսեց
բանեց Հերովդեսին՝ այն տեղւոյն չորրորդա-
պետին խրկեց , որն որ դատկի տօնին պատ-
ճառաւ Երուսաղէմ եկած էր : Հերովդէս Յի-
սուսին վրայ շատ բաներ լսած ըլլալով զինքը
մէյ մը տեսնել կ'ուզէր , յուսալով որ իրաւ-
ջեւրն ալ հրաշք մը կը գործէ : Յիսուս անոր
ըրած հարցմանը ամենեւին պատասխան չը-
տարուն համար Հերովդէսէն արհամարհուեցու
ու նորէն Քիզատոսին խրկուեցաւ :

Հ. Պիղատոս Յիսուսը ազատելու համար
ի՛նչ ըրաւ : Ի՛նչպէս մահուան դատապարտեց :

Պ. Հրեայք սովորութիւն ունէին ամէն
տարի զատկի տօնին բանտարկեալ մ'ազատե-
լու : Արդ Պիղատոս այս առթով ուզեց զՅի-
սուս անոնց ձեռքէն ազատել . և անոր անմե-
ղութիւնը իրենց առջեւը դնելէն վերջը հար-
ցուց իրենց զո՛վ կ'ուզէք որ ազատ թողում
խռովարար ու մարդասպան Բարաբբան , կամ
թէ Յիսուս Նազովրեցին : Ամէնքը՝ քահանա-
յապետներէն ու ծերերէն զրգուում մէկ բե-
րան պուացին որ Բարաբբան արձակէ : Պիղա-
տոս հարցուց թէ զՅիսուս ի՛նչ ընեմ : Անոնք
ալ Խաչ հանէ , Խաչ հանէ , պուացին . Պիղա-
տոս անսալով Բարաբբան արձակեց և Յիսուսը
ձաղկելու խրկեց , յուսալով որ կարելի է ա-
նով իրենց միտքը փոխուի : Իսկ զինւորները
Յիսուսը առին ու աղէկ մը ծեծեցին եւ ար-
եան մէջ թաթխած նորէն Պիղատոսին տարին ,
որն որ խղճալով զինքը նորէն ժողովրդեան
ցուցուց ըսելով Ահա ձեր թագաւորը , կը խոս-
տովանիմ որ վրան յանցանք մը դուած չեմ :
Բայց անոնք խղճալու տեղ աւելի եւս բար-
կացան ու Խաչ հանէ կը կանչէին : Պիղատոս
տեսնելով որ ա՛լ ճար չկայ , ձեռուները լուաց
եւ Յիսուսը անոնց ձեռքը տուաւ որ խաչեն :

Հ. Հրեայք Յիսուսը ի՛նչպէս խաչելու տա-
րին . ո՛ւր խաչեցին :

Պ. Չինւորք Յիսուսին վրայէն կարմիր
վերարկուն մէկդի առին ու խաչն ուսը տուած՝
Երուսաղէմի փողոցներէն անցնելով Գողգոթա
տարին : Յիսուս ծանր խաչին տակ ճնշուած
ըլլալով Սիմոն Կիւրենացին բռնեցին որ խաչը
տանելու իրեն օգնէ : Գողգոթա լերան ոտքը
լեզւով խառն գինի տուին որ խմէ , բայց Յի-
սուս չխմեց : Աերջապէս լերան վրայ հանեցին
ու խաչեցին իր աջ ձախ կողմը մէյմէկ չարա-
գործ ալ մէկտեղ : Յիսուս խաչին վրայ խաչ-
ահանուաց համար աղօթք կ'նէր : Պիղատոս ա-
նոր խաչին վրայ գրել տուաւ այս խօսքերը Յի-
սուս Նաղովրեցի Քաղաւոր Հրէից : Իսկ զին-
ւորները Յիսուսին զգեստները իրենց մէջ բաժ-
նեցին : Այնուհետեւ խաչին վրայ մնացած ա-
տեն , քահանայապետք աւ գպիրք եւ նոյն իսկ
զինւորք զինքը ծաղր կ'ընէին . բայց չարա-
գործներէն մէկը Յիսուսի աղաչելով որ զինքը
արքայութեան մէջ յիշէ . Յիսուս իրեն ըսաւ .
այսօր հետս գրախտը պիտի ըլլաս :

Հ. Յիսուսի մայրը Ս. Ստառածածին այս
ատեն ո՛ւր էր :

Պ. Յովհաննէս Յիսուսի սիրելի աշակերտին
հետ խաչին ոտքը կը կենար , եւ ամէն չար-

չարանայ ասեն միշտ մասն էր : Յիսուս աչու-
 ները մօրը դարձաւ զամ' Յովհաննէսը զուշուց
 ըսելով Ահա ըստ որդիդ . վերջը Յովհաննէսին
 նայելով եւ Ս. Սատուածամիսը զուշրնելով
 Ահա մայրդ ըսաւ : Այս ասենէն Յովհաննէս Ս.
 Սատուածամիսը կը հոգար :

Հ. Յիսուս խաչի վրայ եղած ասեն ի՛նչ
 պատահեցաւ . ի՛նչպէս հոգին աւանդեց :

Պ. Յիսուս խաչ ելնելէն երեք ժամ վերջը
 կէսօրը երկինքը մթացաւ , բոլոր երկիրը խաւար
 բռնեց : Յիսուս բարձր ձայնիւ կանչեց Սատ-
 ուած իմ , Սատուած իմ ի՛նչու դիս թողաուիր :
 Բիշ մը վերջը Թարաւի եմ պուայ . իրեն լեղ-
 ւով խառն քացախ մատուցին : Յիսուս եաշա-
 կելէն վերջը՝ Ամենայն ինչ կատարեալ է ըսաւ .
 եւ վերջը բարձր ձայնիւ Հայր հոգիս ձեռքդ
 կը յանձնեմ կանչեց ու գլուխը ծակելով հո-
 գին աւանդեց : Մէկէն երկիրը շարժեցաւ ,
 քարերը ճաթեցան , գերեզմանները բացուե-
 ցան ու տաճարին վարագոյրը վերէն ի վար ինչ
 իրեն պատուեցաւ : Հոն կեցող հարիւրապետը
 այս տեսնելով վկայեց որ Արդարեւ Սատուծոյ
 որդին էր :

Հ. Յիսուսի թաղումը ի՛նչպէս եղաւ :

Պ. Հրեայք՝ որովհետեւ ուրբաթ էր , չէլ-
 լայ թէ անոնց մարմինը մինչեւ շաբաթ խաչին

վրայ մնայ, Պիզատուէն հրաման առնելով երկու չարագործայ ծնկուները խորտակեցին, բայ ի Յիսուսէն, որովհետեւ արդէն մտեր էր. միայն զինւորներէն մէկը ապահով ըլլալու համար՝ տիգով անոր կողք խոցեց եւ անմիջապէս աշիւն ու շուր վազեց: Իսկ Յովսէփ Արիմաթացին Պիզատուէն հրաման ընդունելով Նիկողեմասին հետ Քրիստոսի մարմինը խաչէն վար առաւ խնկեց, պատմեց ու մօտ պարտիզին մէջ գերեզման դրաւ: Քահանայապետներն ալ զգուշութեան համար գերեզմանին քով պահապան զինւոր կեցուցին:

ՄԱՍՆ Գ

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՀՈՒՆԷ ԻՆՉՈՒԱՆ

ԱՌԱՔԵԼՈՅ ԲՆՐՈՉՈՒԹԻԻՆԸ

Ը. Յիսուս ի՛նչպէս յարութիւն առաւ եւ ի՛նչ պատահեցաւ:

Գ. Երկրորդ օրը լուսնալու մօտերը մեծ գեանաչարժ եղաւ, երկինքէն հրեշտակ իջաւ գերեզմանին բերանը դրուած քարը մէկդի առաւ վրան նստաւ: Պա՛սապանները իրենց վա-

խէն ելան փախան : Յիսուս փառաւորապէս
գերեզմանէն դուրս ելաւ : Ուրիշ ննջեցելոց
մարմիններն ալ կենդանացան իրենց գերեզ-
մանէն ելան Նրուսաղեմ շատերուն երեւցան :

Զ. Իւղաբեր կանայք գերեզման եկան
ի՛նչ ըրին , եւ ի՛նչ նոր բան տեսան :

Պ. Քանի մը բարեազաշտ կանայք ալ առ-
տուանց կանուխ գերեզման եկան որ Յիսուսի
մարմինը ազնիւ խնկով ու անուշահոտ իւղով
օժեն : Բայց գերեզմանը բաց տեսնելով դար-
մացան մնացին . այն ատեն հրեշտակներէն մէկը
Յիսուսի յարութիւն առնելն անոնց ծանոյց և
ղիրենք խրկեց որ աշակերտաց իմացընեն : Իսկ
Մարիամ Մագդաղենացին գերեզմանին մօտե-
րը լայու ատեն Յիսուս երեւցաւ ու ինք զին-
քըն յայտնեց : Այնուհետեւ իւղաբեր կանանց
ալ տեսնուեցաւ : Ասոնք եկան առաքելոց ի-
րենց տեսածը պատմեցին , բայց անոնք չհաւ-
տացին : Պետրոս ու Յովհաննէս դացին եւ իրօք
գերեզմանը դատարկ գտնելով տրամած ետ
դարձան :

Զ. Յիսուսի յարութիւն առնելուն համ-
բաւը երբ տարածուեցաւ քահանայապետք ի՛նչ
ըրին :

Պ. Յիսուսին յարութիւն առնելը երբ պա-
հապան զինուորները եկան քաղաքը պատմե-

դին քահանայապետները ծերերուն հետ խորհարդ ընելով նոյն զինուորները կանչեցին, իրենց ստակ տուին, որպէս զի ամէն կողմ ըսեն թէ գիշերը մեր քնացած ատենը աշակերտները զինքը դողցան: Անոնք ալ ստակն տուին և նոյն սուտ համբաւը ամէն կողմ տարածեցին:

Զ. Յիսուս իր յարութենէն վերջը ուրիշ որոնց երեւցաւ: Առաքելոց մէկանց ե՛րբ երեւցաւ, ի՛նչ իշխանութիւն տուաւ:

Պ. Անժամօթ մարդու կերպարանքով երեւցաւ իր երկու աշակերտացը որոնք Կամաւուս գեղը կ'երթային: Երբոր հոն մտնեցան, անոնց աղաչելովք իրենց քովը մնաց և կերակրոյ ատեն հացն առաւ օրհնեց ու բաժնեց, այն ատեն զինք ճանչցան. ըսոյց Յիսուս մէկէն աներեւոյթ եղաւ: Երկու աշակերտները անմիջապէս ելան Երուսաղէմ դարձան: Հոն առաքելաները ժողովուած դտան. Յիսուսին երբ Պետրոսին երևնալը լսեցին իրենք ալ ճամբան և Կամաւուս պատահածը պատմեցին: Յիսուս նոյն իրիկունք որ առաքելաները միատեղ ժողովուած էին անոնց մէջ եկաւ զիրենք ողջունելու ևս ե՛մ ըսաւ. անոնք շէին կրնար հաւատալ: Յիսուս ուտելու բան ուղեց, անոնք առջեւը խորոված ձուկ ու քիչ մը մեղր դրին: Յիսուս

առնցմէ կերտաւ և աւելցուկն իրենց տուաւ :
 Յետոյ իրենց՝ մեղքերը արձակելու իշխանու-
 թիւն ու փշելով Հոգին սուրբ տալէն վերջը
 բաժնուեցաւ դնաց : — Յիսուս իրենց երեցած
 ատեն Թովմաս հետերնին չէր . երբոր անոր
 պատմեցին Հաւատաց : Մինչև որ անոր ձեռ-
 քի դամերուն տեղը չտեսնեմ և ձեռօք այն
 դամերուն տեղն ու կողը չշօշափեմ չեմ հա-
 ւատար , ըսաւ : Աւթ օր վերջը Թովմաս ալ ե-
 դած ատեն Յիսուս առաքելոց նորէն երեցաւ ,
 ու Թովմասին անհաւատութիւնը յանդիմանեց
 եւ իր վերջերը շօշափել տուաւ : — Աւրիշ ան-
 դամ մ'ալ Յիսուս Տիգրեայ ծովին քով երեւ-
 ցաւ , երբոր աշակերտներէն ոմանք ձուկ որ
 սալու դացեր էին : Յիսուս հարցուց որ ուտե-
 լու բան մ'ունին . երբոր չէ ըսին , նառևն ալ
 կողմը ուռկանը ձգել տուաւ : Այս որ ըրին
 շատ մը ձուկ բռնեցին : Ծովհաննէս ճանչցաւ
 անոր ով ըլլալը . Սետրոս երբ որ լսեց որ Քրի-
 իստոս է , ծով նետուեցաւ ու Յիսուսին եկաւ :
 Ծամաք երբ ելան կրակի վրայ ձուկ մը արսան
 քովն ալ հաց : Յիսուս ձկէն բերել տուաւ կե-
 ըրաւ իրենց ալ տուաւ որ ուտեն : — Ասկէց ու-
 ըրիչ մէյ մ'ալ Գալիլայի մէջ 500էն աւելի հա-
 ւատացելոց երեցաւ :

Հ Յիսուս իր յարութենէն վերջը ե'րբ եւ

ի՛նչպէս համբարձաւ :

Պ. Քառասուն օրի չափ առաքելներուն երբեմն երբեմն երեւնալէն ու իրենց հետ խօսսելէն ետեւ Պենտեկոստէի առնին մօտ վերջին անգամ մ'ալ երեւցաւ ու իրենց ապապրեց որ Երուսաղէմէն չելլէն մինչև որ խոստացած Հոգին սուրբ չընշունին : Վերջը զիրենք առաջիժեհեաց լեռը տարաւ , հոն ամէնքն օրհնեց եւ սկսաւ իրենց աչաց առջեւը երկինք համբառնալ : Լուսաւոր ամայ մը զինք ծածկեց : Առաքելք տրտում կեցած ատեն երկու հըրեշտակք երեւցան ու անոնց Քրիստոսի երկրորդ դարուստը իմացուցին : Այս լսելով Երուսաղէմ դարձան , և վերնատուն մը ժողովուած աղօթք կընէին :

Հ. Առաքելաց թիւնի՛նչպէս լեցուեցաւ . Հոգին սուրբ ե՛րբ ընդունեցան եւ ի՛նչ գործեցին :

Պ. Երկու արժանաւոր հոգւոյ համար վիճակ ձգեցին և առ Աստուած աղօթելով Յուդային տեղ Մատաթիան ընտրուեցաւ : Համբարձումէն ասան օր վերջը երբոր տասուերկու առաքելք , քանի մը բարեպաշտ կանայք ու Ս. Աստուածածին վերնատան մէջ աղօթք կընէին , յանկարծ սաստիկ հով փչելու ձայնով մը հրեղէն լեզուներ երեւցան ու ամէն մէկուն գլխուն վրայ կեցան : Ասով Հոգւով սրբով լե-

ցուեցան և սկսան դանազան լեզուներ խօսիլ :
Ժողովուրդն այս ճայնէն հոն ժողովուած էին .
եւ օտարազգիները իրենց լեզուները լսելով ու-
մանք կը դարձանային շատերն ալ գինովցեր
են կ'սէին : Աետրոս մէկալ առաքելոց հետ առ-
ջեւնին ելաւ ու ազդու ճառով մը անոնց հաս-
կըցուց որ խաչին վրայ շարձարուելով մեռնողը
Քրիստոսն էր : Ժողովուրդը այս լսելով գղջա-
ցին , ու կը հարցնէին թէ ի՞նչ ընենք : Սպաշ-
խարեցէ՛ք ու մկրտուեցէ՛ք ըսաւ : Իրեն խօս-
քին շատերը անսալով մկրտուեցան , անանկ
որ նոյն օրը շուրջ 3000 հոգի դարձան Յիսուսի
աշակերտեցան :

Հ. Հողւոյն սրբոյ դալատենէն վերջը ա-
ռաքեալները ի՞նչ ըրին :

Պ. Երուսաղէմի մէջ Քրիստոսի անուամբը
հրաշքներ ընելով հաւատացեալները կը մկրտ-
ուէին . ուրախութեամբ Քրիստոս սրդի առ-
տուծոյ և սպասուած Մէսիան ըլլալը կը քա-
րողէին :

Հ. Առաքեալները ի՞նչ հրաշք ըրին :

Պ. Տաճարին դրանը մօտ ի՛ ծնէ կաղ մը
կար որ Աետրոս և Յովհաննէս առաքեալներէն
ողորմութիւն խնդրեց . անոնք ալ ըսին որ ար-
ծաթ և ոսկի չունինք ինչ որ ունինք կու-
տամք Յիսուսի անուամբը ել գնա . կաղը ա-

առողջացաւ դնաց :

Հ. Հաւատացելոց պէքտերը ո՞վ կը հոգար :

Պ. Ի. սկզբան առաքեալք կը հոգային ,
բայց երբ որ հաւատացեալք երթալով շատցան
այն ժամանակ առաքեալք հաւատացելոց մէ-
ջէն եօթը հոգի ընտրեցին սարկաւազ անուամբ
և այս սարկաւազներուն յանձնեցին հաւատա-
ցելոց մարմնաւոր պէտքերը հոգար :

Հ. Քրիստոսի համար առաջիննահատակը
ո՞վ եղաւ :

Պ. Ստեփաննոս որ եօթն սարկաւազներէն
մէկը շատ հրաշքներ կը գործեր հրեայները
իրենց անհաւատութեանը համար կը հանդի-
մանէր . հրեայք ալ մէկ ըլլալով Ստեփաննոսին
վրայ անթիւ յանցանքներ ձգելով քարկոծեցին .
որ մեռնելու առեւնը զինքը քարկոծողներուն
համար աղօթք կընէր . մահուանը գործակից
էր Սաւուղ :

Հ. Սաւուղ ո՞վ է :

Պ. Քրիստոնեայները հալածողներէն մէկն
էր . և քաղաքէ քաղաք պտրտելով հաւա-
տացելոց նեղութիւններ կուտար . անգամ
մը Բամասկոս դացած ատենը ճամբան
հանկարծ շորս դին սաստիկ լոյս մը փայլատա-
կելով սարսափած դետինն ինկաւ և ձայն մը
լքսեց որ կըսէր Սաւուղ Սաւուղ դիս ի՞նչու կը

U. Q.

№ 4476.